Վիպակ, Արձակ

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

ՈՍԿԵ ՀՆՁԱՆ

Գլուխ առաջին

1

Երիտասարդ տղան և աղջիկը կանգնել էին ծառի տակ: Տղան սեր էր բացատրում աղջկան: Բացատրվում էր երկար, մի ժամ, երկու… Կարծես առաջին անգամ էր ծագել աշխարհում այդ զգացմունքը և կարիք ուներ մանրակրկիտ բացատրության: Եվ աղջիկը լսում էր տղային՝ կլանված, տարված, աշխատելով ոչինչ բաց չթողնել նրա հուզված կիսաշշուկից: Աղջկա փոքրիկ ձեռքերը կորել էին տղայի մեծ, թուխ ափերի մեջ, երևում էին միայն մատների ծայրերը, որոնք սեղմվելուց կարմրել էին:

Երկու մտերիմ ընկերներ՝ Արարատն ու Ցոլակն անցնելով զբոսայգու այդ հեռավոր անկյունով, պատահաբար տեսան նրանց: Ցոլակն արմունկով կամաց հրեց ընկերոջ կողքը և գլխով ցույց տվեց դեպի այն կողմը: Արարատը նայեց և քաշելով ընկերոջ թևից, շտապեց հեռանալ: Ինչո՞ւ խանգարել:

Նրանք վերադարձան զբոսայգու կենտրոնը՝ նվագի և հասարակության մոտ: Համարյա բոլորն այդտեղ երիտասարդներ էին՝ տղաներ և աղջիկներ: Արարատն ու Ցոլակը խառնվեցին նրանց և ուզեցին զվարճանալ նրանց պես: Բայց դա չէր հաջողվում, և շուտով նրանք, իրենք էլ չիմանալով, թե ինչպես, նորից հայտնվեցին այգու հեռավոր անկյունում և նորից անցան սիրահարված զույգի մոտով: Տղան դեռ խոսում էր, և աղջիկը լսում էր նրան:

Մի քիչ հետո նրանք երրորդ անգամ անցան սիրահարվածների մոտով: Կարծես ոչինչ չէր փոխվել ծառի տակ, բայց այժմ տղան որոշակիորեն ուրախ էր՝ հույսի արտահայտությունը դեմքի վրա, իսկ աղջիկն ավելի էր շիկնել՝ զգալով, որ երբ տղան լռի, ինքն ստիպված պիտի լինի պատասխանել:

— Դե, սա չեղավ,— շշնջաց այս անգամ Արարատը:— Ինչո՞ւ ենք պտտվում նրանց շուրջը: Կարող են նկատել…

— Վերադառնանք գյուղ, ես այստեղ ձանձրանում եմ,— ասաց Ցոլակը թախիծով:

— Ես էլ…— հառաչեց Արարատը:

Դուրս գալով Այգեշատից, ընկերները մտան այգիների միջով անցնող ճանապարհներից մեկը: Ամառային կեսօրվա ջեռ արևը շողում էր լույսի առատությունից գունաթափված կապույտ երկնքում՝ խելահեղ հորդելով ճանապարհի վրա և մնացյալ աշխարհի, որը սակայն չէր երևում, որովհետև այգիների բարձր պարիսպները ճանապարհի երկու կողմերում փակում էին տեսարանը:

Գնում էին երկու ընկերները՝ իրարից այնքան տարբեր երկու երիտասարդներ:

Արարատը փոքրամարմին էր և նիհար, գունատ դեմքով ու սուր քթով, մտածկոտ աչքերի սևեռուն արտահայտությամբ: Նա շարունակ լուրջ էր և մտահոգ: Եվ ինչ էլ որ նա անելիս լիներ, թվում էր, թե շտապում է ավարտել այդ գործը և անցնել ուրիշ, ավելի կարևոր գործերի: Նա հագել էր կապույտ,

թեթև կոստյում՝ բաճկոնը վերից վար կոճկած, դրել էր բոլորովին չգործածված նոր գլխարկ: Նա Ցոլակից մի քիչ ցածրահասակ էր, բայց նիհարության հետևանքով թվում էր նրանից ավելի բարձր:

Ցոլակը հաղթանդամ էր, ավելի ճիշտ՝ լայն: Լայն էր նրա դեմքը, կուրծքը, կոնքը, լայն էին ձեռքերը, լայն էր քայլվածքը: Նա գեղեցիկ երիտասարդ էր՝ թուխ դեմքով և ճակատի վրա կախված մանր, սև գանգուրներով: Նրա աչքերն ունեին զվարթ արտահայտություն, կենդանի և զգաստ հայացք: Ինչպիսի դժվար գործ էլ անելիս լիներ, թվում էր, թե նա աշխատում է ի միջի այլոց, ոչ թե աշխատում, այլ խաղ է անում: Այդ էր պատճառը, որ նա շատերի վրա թողնում էր պարապ մարդու տպավորություն: Երբ նրան անվանում էին այդպես, նա չէր վիրավորվում և չէր աշխատում հերքել այդ, այլ ծիծաղում էր իր նման լայն ծիծաղով և շարունակում էր կատարել պարապության տպավորություն թողնող իր աշխատանքը:

Լայն ճանապարհի երկու կողմերում ձգվում էին այգիների հողաշեն կամ խճաշար պարիսպները՝ երբեմն ոլորապտույտ, երբեմն ուղղաձիգ: Դրանք մերթ բարձրանում էին և փակում հեռանկարը, մերթ ցածրանում այնքան, որ պտղատու ծառերը դրանց ետևից տեղ-տեղ իրենց սաղարթներն էին կախում ճանապարհի վրա:

Պարիսպներից մեկը դեմ էր կանգնել արևի լույսին, որն ուղի չգտնելով, թափվել էր գետին: Թվում էր, թե պատի տակ կուտակված դեղին փոշին արևի ճառագայթներն էին, որ փշրվել և դիզվել էին ոսկեգույն ալյուրի հաստ ու փափուկ շերտով: Իսկ մյուս պարսպի տակ, ինչպես գիշերվա նեղ երիզ, ձգվել էր ստվերի մութ առվակը:

Դիմացը, հեռվում, երկնքի բաց կապույտ ֆոնի վրա, չափազանց բարձր, վեր էր խոյացել Արարատ սարը՝ հավերժական ձյունը գագաթին: Այնքան ջինջ էր օդը և այնքան հստակ էր երևում սարը, որ թվում էր, թե նա կանգնած է շատ մոտիկ մի տեղում՝ ուղղակի այգիների մեջ: Բայց գնում էին ընկերներն արևոտ ոսկե ճանապարհով, իսկ կապտավուն սարը՝ սպիտակ գագաթով՝ կանգնած էր նույն հեռավորության վրա:

Օրը կիրակի էր, ամեն ինչ տոնական: Տոնական էր աշխատողների բացակայությունն այգիներում, սայլերի բացակայությունը ճանապարհի վրա: Տոնական էր արևը՝ վերևում, խելահեղ փարթամությամբ աճած այգեստանը՝ ներքևում: Տոնական էր նաև երկու մտերիմ ընկերների հոգին, թեև բավական թախծոտ:

Վաղ առավոտյան նրանք մեկնել էին այգեստանի փոքրիկ քաղաքը՝ Այգեշատ: Մեկնել էին առանց գործի, զբոսնելու, անցկացնելու այնտեղ իրենց օրը՝ մինչև երեկո: Բայց ահա, հազիվ կեսօրն անց, նրանք արդեն վերադառնում էին…

Երկար ժամանակ նրանք չէին խոսում: Նայում էին իրենց շուրջը և տարված էին մտքերով: Վերջապես Ցոլակն ասաց.

— Այդքան շատ աղջիկներ, իսկ ես ոչ մեկին չեմ սիրում… Հետաքրքիր է, որտե՞ղ է հիմա, ի՞նչ է անում իմ ճակատագիր աղջիկը… Եվ քոնը,— ավելացրեց նա:

Արարատը ոչինչ չպատասխանեց:

Դիմացից լսվեց սայլի ճռինչ: Երիտասարդները նայեցին: Գալիս էր մի սայլ՝ չափազանց դանդաղ: Սայլապանն զգուշանում էր անիվները քարի խփելուց, որովհետև սայլի վրա պառկած էր հսկայական մի կարաս՝ խոտի հաստ շերտի վրա, պարաններով ամուր կապկապված: Կարասի բերանից երևում էր ներսի մթությունը: Չորս-հինգ մարդ ազատ կարող էին տեղավորվել դրա մեջ:

Թրծված կավի պես դեղին վարդգույն, հաստափոր, նեղ բերանով ու տակով, կարասը նման էր հսկայական կենդանու մարմնի:

Երիտասարդները շարունակեցին ճանապարհը:

Շուրջը լույս էր, ինչպիսի՜ լույս… Այդպիսին լինում է երևի միայն Արարատյան դաշտավայրում: Լույսն ընկերների շուրջը լճացել էր թափանցիկ-ոսկեգույն ծովի պես՝ գլխովին ծածկելով նրանց, ծածկելով ամբողջ այգեստանը: Հողե շեկ պարիսպները և գետնի շեկ փոշին ներծծված էին այդ լույսով: Եվ ի՜նչ լավ էր, որ դրանք չունեին ողորկ և փայլուն մակերես, այլապես անհնար կլիներ նայել դրանց: Ոչ մի առարկա չէր անդրադարձնում լույսը, բոլորը ծծում էին այն: Եվ ընկերների աչքերը չէին շլանում լույսից, այլ լայնությամբ բացված, նույնպես ագահ ծծում էին այն: Աշխարհը՝ այդ լույսի մեջ լուծված, նրանց աչքերի միջով ծծվում էր նրանց հոգու, նրանց սրտի մեջ…

Եվ շոգ էր: Այդպիսի շոգ նույնպես, լինում է երևի միայն Արարատյան դաշտավայրում: Շոգը, լույսի հետ խառը, նույնպես լճացել էր ընկերների շուրջը՝ գլխովին ծածկելով նրանց, ծածկելով ամբողջ այգեստանը: Շոգը համահավասար տաքացնում էր նրանց թե՛ կուրծքը, թե՛ մեջքը, թե՛ գլուխը և թե՛ ոտքերի ներբանները:

Պարիսպներից մեկի ետևից մի շատ լայնասաղարթ ընկուզենի իր կիսաշրջանաձև ստվերը հասցրել էր մինչև ճանապարհի մեջտեղը: Երբ ընկերները ոտք կոխեցին դրա ստվերի մեջ, նրանց մարմիններն իսկույն սրսփացին հանկարծահաս ցրտից: Այն մի քանի քայլը, որ նրանք կատարեցին ստվերի միջով, նման էր սառը ջրի միջով անցնելուն: Եվ հանկարծ այդ սառնությունը կտրվեց հրաշեկ թրով, ընկերներին նորից կլանեց շոգի ծովը: Այդպես, շոգն ու զովն ապրում էին այդտեղ կողք կողքի:

Տեղ-տեղ, ճանապարհից անջատվելով, դեպի աջ կամ ձախ էին ձգվում նեղ շավիղներ՝ այգիների զույգ պարիսպների միջև սեղմված: Պարիսպների ետևից դուրս ձգված ծառերի սաղարթներն այնտեղ միացել էին իրար՝ կազմելով համատարած առաստաղ: Այդ առաստաղից գետնի մթության վրա ընկել էին անթիվ-անհամար մանր ու մեծ ոսկեդրամներ, ոսկե ափսեներ, ոսկե սկուտեղներ, ոսկե վահաններ... Խայտաբղետ հատակ ունեցող այդ կիսախավար քառանկյունի խողովակները գնում-կորչում էին հեռու կամ մոտիկ՝ իրենց շրջադարձի ետևում:

Ընկերնե՞րն էին արդյոք գնում դանդաղ, թե՞ արևն էր զենիթից թեքվում արագ: Աննկատելիորեն շոգը մեղմանում էր, գունաթափվում էին թե՛ լույսը և թե՛ ստվերները:

Լսվեց շոգեմեքենայի շչակի ձայն՝ այնքան մոտիկ, որ կարծես երկաթուղին գտնվում էր պարիսպների ետևում ինչ-որ տեղ: Թվա՞ց, թե իրոք լսվեց նաև անիվների շտապ պտույտը ռելսերի վրա: Ապա վերահաստատվեց նույն բացարձակ լռությունը:

Երկնքում չէր երևում ամպի հետք անգամ, ներքևում չէր շարժվում ոչ մի առարկա: Ընկերների հոգում և ուղեղներում նույնպես, թվում էր, թե չէր շարժվում ոչ մի զգացում, ոչ մի միտք, նրանց մեջ ևս լճացել էին տոնական հանգստի լույսն ու ջերմությունը:

Բայց հանկարծ Արարատն ասաց մտահոգ՝ խոսելով ինքն իր հետ.

— Վաղը հարկավոր է անպայման…

— Վերջ,— ընդհատեց Ցոլակը՝ ձեռքը բարձրացնելով:— Վաղը՝ վաղն է գալու, իսկ այսօր՝ այսօրն է և կիրակի է: Ի՞նչ մարդ ես դու, Արարատ…

Նա նույնիսկ կանգ առավ մի վայրկյան, զարմանքով ու դժգոհությամբ նայեց իր հին ընկերոջը, կարծես հասկանալու համար, թե ինչ մարդ է նա, ապա անհույս օրորեց գլուխը:

Բայց մի քանի քայլ հետո մտահոգվեց Ցոլակն ինքը՝ մի ցածրիկ պարսպի վրայով տեսնելով այգին: Նա մոտեցավ պարսպին:

Այգում, զուգահեռ երկար թմբերի վրա, փռվել էին խաղողի տերևաշատ վազերը, որոնց երկար ճյուղերը թմբերի կողերով վար էին սողացել դեպի երկար փոսերը և տեղ-տեղ միախառնվել էին իրար: Հողի հյութերից ուժ առած, որթերի բաց կանաչ ծայրերը ոլորվել էին զսպանակի պես՝ կարծես պատրաստվելով շպրտվել ավելի առաջ, բարձրանալ հարևան թմբի լանջն ի վեր: Փոսերի գոգերը, որ ողորկ սվաղվել էին ջրից, այժմ ցանցակերպ ճաքճքվել էին շոգից:

— Գիշերն եմ ջրել, Արարատ,— կարծես բողոքելով արևի դեմ և միաժամանակ արդարանալով, ասաց Ցոլակը:

Այգու կենտրոնում, փոքրիկ հարթակի վրա, կանգնած էր մի փոքրիկ տնակ՝ փակ դռնով: Դրա պատերից մեկին դեմ էին տված մի քանի բահեր: Տափակ կտուրի եզրին հավաքվել էին ճնճղուկներ:

Արևը, մի անգամ արդեն զենիթից թեքված, սրընթաց իջնում էր ներքև: Ծառերի ստվերները երկարել էին, լույսը գալիս էր շեղակի և հեռվից: Շոգի միջով երբեմն սահում-անցնում էր անորսալի նուրբ հովը: Արարատն ու Ցոլակը շարունակեցին քայլել անշտապ, լուռ, հիացմունքով նայելով իրենց այգեստանին:

Հոգսերով տարված, Արարատը, որ կոլեկտիվ տնտեսության նախագահ էր, շատ սակավ էր ունենում ազատ ժամեր՝ նայելու համար իր շուրջը: Շատ սակավ էր ժամանակ ունենում նաև Ցոլակը, որովհետև նա գիշերային ջրվոր էր, գիշերներն աշխատում էր, իսկ ցերեկները՝ քնում: Իսկ այն ժամերին, երբ չէր քնում, նա դարձյալ զբաղված էր զանազան գործերով: Գիշերային հերթը նրան դուր էր գալիս, և նա չէր էլ ուզում հերթափոխվել:

Այսպիսով, ընկերներն այգեստանը տեսնում էին միայն կիրակի օրերը և այն էլ՝ ոչ միշտ: Երբեմն նրանք զբաղված էին լինում նաև այդ օրը, երբեմն գնում էին Երևան:

Իսկ այգեստանը՝ արևից ու հողից ուժ առած, աճում էր այնպիսի արագությամբ, կանաչն այն ծածկում էր այնպիսի փարթամությամբ, որ ամեն հաջորդ կիրակի նա ընկերներին երևում էր անհավատալիորեն փոխված, համարյա անճանաչելի: Ընկերների աչքերը փայլում էին հիացմունքից, հպարտությունն այգեստանի համար ուռճեցրել էր նրանց կուրծքը: Որքա՛ն լավ կլիներ քայլել այդ այգեստանով իր սիրո հետ միասին…

— Ինչպե՛ս կսիրեի...— շշնջաց Արարատը,— ինչպե՛ս կսիրեի այն աղջկան, որին պիտի սիրեմ… Կբռնեի ձեռքերը, ինչպես այն տղան՝ ծառի տակ, անունը կտայի, ինչե՛ր չէի ասի…

— Տեսնես որտե՞ղ են այս բոպեիս մեր աղջիկները,— նորից հարց տվեց Ցոլակը:— Նրանք է՞լ ընկերուհիներ են, թե՞ չեն ճանաչում իրար: Ո՞վ գիտե, գուցե հիմի թև-թևի տված, նրանք էլ շրջում են և ինձ ու քեզ են երազում…

— Իսկապես, որտե՞ղ են նրանք,— կրկնեց Արարատը:

Նրանք նորից դարձան մտածկոտ:

Դանդաղ և աննկատելի, այգեստանը վերածվում էր գյուղի: Երկու կողմերում այգիների պարիսպներին սկսեցին փոխարինել բնակարանների պատերը, դարպասներին՝ տների դռները կամ տնամերձ պարտեզների դռնակները: Սկսեցին հանդիպել լուսամուտներ:

Գնալով ևս մի քիչ, ուղղաձիգ ճանապարհը վերջնականապես վերածվեց գյուղի գլխավոր փողոցին, որը ձգված էր լայն հանդիսավոր՝ դռների, դռնակների, լուսամուտների կարմիր, կապույտ կամ դեղին գույներով զարդարված: Երկու կողմերում, մայթերի և սալահատակի արանքում, նեղ առվակներով հոսում է ջուրը՝ մեղմ խշշալով, ինչպես ծառերի սաղարթները թեթև հովի տակ: Ջրի երկարությամբ ձգվել էին բարձր ու սաղարթախիտ ծառերի շարքերը:

Բնակարանների մեծ մասի պարտեզները գտնվում էին բնակարանների ետևում, տափակ կտուրների վրայով երևում էին բարձր ծառերի կատարները: Բայց տեղ-տեղ պարտեզները գտնվում էին նաև փողոցի վրա, ցածրիկ պատերի և դրանց վրա ամրացված փայտե ճաղերի ետևից դեպի փողոց էին ձգվել ծառերի սաղարթները՝ ծածկելով մայթն ինչպես առաստաղ:

Խաչաձևող փողոցներն արևի ոսկեղեն շերտերով կտրատում էին գլխավոր փողոցի համատարած ստվերը: Կիրակնօրյա դանդաղ քայլերով զբոսնում էին մարդիկ՝ ոչ միայն մայթերով, այլև փողոցի մեջտեղով: Դպրոցի առջև, որը գտնվում էր մյուս շենքերից ետ՝ գոյացնելով հրապարակ, մի հաստ գերանի վրա նստոտել էին տարիքոտ գյուղացիներ, նայում էին փողոցին և զրուցում: Մի դռան մոտ թեք դիրքով պատին էին հենված երկու երկանաքար, մեկը՝ երկաթե առանցքով ու մաշվելուց ողորկված մակերեսով, մյուսը՝ եզրի մոտ փայտե կոթով: Առվակներից մեկի մոտ փռված էր մի կարպետ, որի ծոպերը կախվել էին ջրի մեջ և կարծես հոսում էին ջրի հետ: Մի այլ դռան մոտ, նստելու տափակ քարի վրա, դրված էր գինու թաս: Լծարձակ կանգնել էր խաղողի չորացած որթերով ու խռիվով լիքը մի սայլ:

Խաղաղություն էր տիրում փողոցում՝ շքեղ, տոնական: Շենքերի վրայով, ծառերի վրայով զգացվում էր նաև գյուղի մյուս փողոցների խաղաղությունը, ամբողջ այգեստանի և դրա կանաչության մեջ թաղված բազմաթիվ մյուս գյուղերի խաղաղությունը: Այգեստանի վրա իջել էր զովությունը, որը սակայն դեռ հագեցած էր տաքության փոշիով, և իջել էր ստվերը, որը դեռ հագեցած էր լույսի փոշիով: Վաղ երեկոյի ամենախաղաղ պահն էր դա, որը ոչ ոք չէր ուզում և չէր էլ կարող խախտել որևէ շեշտակի ձայնով: Տոնական դանդաղությունը պաշարել էր բնությանն ու մարդկանց: Ընկերներին թվում էր, թե այդ խաղաղությունը բռնված էր ինչ-որ հրաշալի երկունքով: Նրանց թվում էր, թե սպասողականությունից լարվել էր բնությունը, լարվել էր գյուղը, լարվել էր այդ փողոցը: Նրանց թվում էր, թե տեղի է ունենում ինչ-որ արտակարգ, սքանչելի բան: Նրանք համարյա համոզված էին: Նրանք համարյա սպասում էին:

Հանկարծ փողոցի վրա ընկավ հեռուներում մայր մտնող արևի հորիզոնական, կարմրավուն լույսը: Երեկոն մի պահ ետ գնաց: Խաղաղությունը, որը բռնված էր երկունքով, արձակվեց: Լույսի միջից, դիմացից, գալիս էր նա՝ սպասվածը...

Նա գալիս էր մենակ: Փողոցը կարծես ինքն էր ետ-ետ գնում նրա քայլերի առաջ: Բոլորը, ոչ միայն երիտասարդները, այլև հասակավորները, ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք, քաշվում էին աջ ու ձախ, պատերի պես խիտ կանգնում էին փողոցի եզրերին և լուռ հիացմունքով նայում էին նրան:

Նա գալիս էր լուրջ և հպարտ, բայց նաև ամաչկոտությունից կիսափակ աչքերով, որովհետև դա աղջկա առաջին հայտնությունն էր մարդկանց առջև: Դեռ երեկ նա երեխա էր, բոլորն այդպես գիտեին նրան: Հասարակ զգեստով, հաճախ՝ կիսամաշ, ոտքերին հին չուստեր, գլխին սովորական

գլխաշոր, բոլորն այդպես էին տեսնում նրան: Բայց այգեստանն ուներ իր օրենքը՝ կոկոնը ճեղքվում է մի գիշերում, ծաղիկը բացվում է միանգամից…

Սլացիկ ու նուրբ կազմվածքով, նա հագել էր կանաչ մետաքս՝ այգեստանի գույնը: Հագուստի ոչ լայն օձիքից, դեռևս մի քիչ մանկական պարանոցի վրա, բարձրացել էր նրա սքանչելի գլխիկը՝ մուգ շագանակագույն մազերով և նույնպիսի աչքերով, որոնք սև էին թվում նրա սպիտակ դեմքի վրա: Փոքրիկ քթի ռունգներն աննկատելի ուռել էին՝ ներծծելով այգեստանի բույրը: Նրա շուրթերը պուրպուրային կարմիր էին և հասուն:

Հագուստի թևքերը պինդ գրկել էին նրա թևերը՝ դաստակից մինչև արմունկ, բայց արմունկից մինչև ուսերը՝ դրանք լայն էին և ազատ, բաղկացած էին առանձին ժապավեններից, որոնց արանքներից փողփողում էին նրա սպիտակ թևերը, կարծես սպիտակ ծաղիկներ՝ ճղճղված կոկոնների միջից: Նրա բարձր սրունքները մերկ էին, իսկ ոտքերը հանգչում էին կանաչ կիսակոշիկների մեջ:

Նա գալիս էր շփոթությունից թեթևակի խախտված կաքավաքայլով, խամր-ոսկեգույն կոպերի սև թարթիչները խոնարհած, ամաչած և երջանկացած այն հիացմունքից, որ սփռում էր իր շուրջը: Դա աղջկա առաջին հայտնությունն էր մարդկանց առջև, հաղթական, շլացուցիչ հայտնությունը…

Ինչպե՞ս էր նա պատրաստվել դրան... Ոչ ոք չգիտեր այդ, չէր նկատել, ուստի և աղջիկն այժմ թվում էր անակնկալ երևույթ, համարյա հրաշք…

Կար գյուղում մի հասարակ, սովորական աղջիկ: Ոչ ոք չէր զանազանում նրան մյուսներից, ոչ ոք առանձին ուշադրություն չէր դարձնում նրա վրա: Գուցե միայն մի բանով էր նա տարբերվում ուրիշներից: Մինչդեռ մյուս բոլոր աղջիկներն աճում էին թուխ և արևկեզ, նա սպիտակ էր, ինչպես ստվերի մեջ հասունացող միրգ: Բոլորը դա համարում էին մաշկի բնական հատկություն և չէին նկատում, թե ինչպես աղջիկն իր դեմքն ու մարմինը պաշտպանում է արևից: Երբ Արարատը կամ բրիգադիրը պատվիրում էին նրան աշխատանք՝ արևի տակ, նա խեթ-խեթ, համարյա ատելությամբ էր նայում նրանց, բայց ոչինչ չէր ասում և ենթարկվում էր: Կարծում էին, թե նա չի սիրում աշխատել:

Դեռ երեկ բոլորը նրան համարում էին երեխա, սովորական երեխա, և չէին նկատում, թե ինչպես նրա մեջ կուտակվում և աճում էր գեղեցիկ աղջկությունը: Եվ ահա, այգեստանի փարթամ աճման ժամանակ, կիրակի օրվա տոնականության մեջ, մայրամուտի պահին, երբ այնքան շքեղ ու հեքիաթային էին այգեստանը և դրա կանաչության մեջ թաղված գյուղը, երևաց աղջիկը՝ որպես չքնաղ տեսիլ:

— Արարատ…— շնչասպառ շշնջաց Ցոլակը,— նայիր… Անահիտը… Նահապետի թոռը… Արարատը ոչինչ չպատասխանեց, երևի նույնիսկ չլսեց ընկերոջ խոսքերը: Նրա գունատ այտերը կարմրել էին հուզմունքից…

Անահիտը, որ գալիս էր աչքերը կիսափակ, հայացքը խոնարհած, թվում էր, թե չէր տեսնում ոչ ոքի իր առջև: Բայց նա տեսնում էր և՛ Արարատին, և՛ Ցոլակին, տեսնում էր նրանց ակնապիշ հիացմունքը, տեսնում էր, թե ինչպես իր գեղեցկությունը մեխել էր նրանց իրենց տեղում: Դա աղջկա ամենամեծ հաղթանակն էր և այժմ նրա դեմքը վառվում էր բավականությունից:

Որքա՜ն էին վիրավորել նրան Արարատն ու Ցոլակը. Արարատը նրան վիրավորել էր այն հատուկ ուշադրությամբ, որը շարունակ դարձնում էր նրա վրա՝ որպես լավ աշխատող, բայց աշխատել չսիրող անչափահասի, որին հարկավոր էր համոզել և երբեմն նույնիսկ բարկանալ վրան: Իսկ Ցոլակը՝ այդ գեղեցիկ երիտասարդը, որին հավանում էին գյուղի բոլոր աղջիկներն ու կանայք, և

որոնց բոլորին նա առատ բաժանում էր իր հաճոյախոսությունները, Անահիտին վիրավորում էր իր բացարձակ անուշադրությամբ:

Եվ ահա, նրանք երկուսն էլ պատժված էին: Այնքան մեծ էր Անահիտի հաղթանակը նրանց վրա, որ աղջիկն այլևս չարություն չէր զգում նրանց հանդեպ, այլ իր աղջկային հոգու բարությամբ ներել էր արդեն:

Անահիտը գալիս էր ուղիղ դեպի երկու ընկերները՝ ոչ միայն նրա համար, որ նրանք կանգնած էին փողոցի մեջտեղում, նրա ճանապարհի վրա, այլև, ըստ երևույթին, նրանց մոտենալու մտադրությամբ: Թե Արարատը և թե նույնիսկ Ցոլակը կանգնել էին շփոթված և չգիտեին, թե ինչ ասեին աղջկան, եթե նա մոտենար իրենց: Նրանք նույնիսկ կուզենային, որ նա շեղեր ճանապարհը, անցներ իրենց մոտով:

Բայց Անահիտը մոտեցավ ընկերներին, կանգնեց նրանց դիմաց և նրա թարթիչները բարձրացան վեր:

— Բարև ձեզ, տղաներ,— կամացուկ, բայց համարձակ ասաց նա՝ մի ձեռքը տալով Արարատին, մյուսը՝ Ցոլակին: Դերերը փոխվել էին, Անահիտը կանգնել էր նրանց առջև՝ որպես դրության տերը, իսկ «տղաները», երեկվա «ընկեր Արարատն» ու «ընկեր Ցոլակը», նման էին ստորադրյալների: Մեծ գեղեցկությունը փոքրացրել, նվաճել էր նրանց:

Նրանք աղջկա ձեռքերը թողեցին համարյա անմիջապես՝ առանց նույնիսկ սեղմելու: Թվում էր, որ եթե նրանք սկսեն խոսել, աղջկան դիմելու են հոգնակի:

Արարատը հայացքը խոնարհել էր ներքև, իսկ Ցոլակը, որն ուզում էր նայել աղջկան, մի քանի անգամ հանդիպեց նրա հայացքին և յուրաքանչյուր անգամ արագ մի կողմ դարձրեց իր աչքերը: Իսկ Անահիտը, որ դեռ մինչև երեկ ուղիղ չէր նայել Արարատի դեմքին, իսկ Ցոլակին նայել էր միայն հեռվից, գաղտագողի, այժմ նայում էր շեշտակի և հանգիստ:

— Որտեղի՞ց եք գալիս, տղաներ,— հարցրեց Անահիտը:

— Ոչ մի տեղից…— ասաց Ցոլակը:— Շրջում էինք այգեստանում…

— Տեսնո՞ւմ եք, ինչ գեղեցիկ է մեր այգեստանը,— հարցրեց աղջիկը:

— Տեսնում ենք,— ասաց Արարատը:

— Ի՜նչ այգեստան ունենք…— հիացմունքի կիսաշշուկով ասաց Անահիտը: Եվ հասկանալի չէր՝ նա ցո՞ւց էր տալիս այգեստանը կոլտնտեսության նախագահին ու ջրվորին, թե՛ ինքն էր առաջին անգամ իսկական աչքերով տեսնում այն...

Եվ որովհետև ընկերները ոչինչ չէին ասում և խոսակցություն չէր ստացվում, Անահիտը մի անգամ ևս նայեց նրանց իր թարթիչների երկար ճառագայթների տակից և շարունակեց ճանապարհը գյուղի գլխավոր փողոցով:

Երբ Անահիտը գնաց, երիտասարդները ետ չդարձան և չնայեցին նրա ետևից: Անշարժ կանգնած, նրանք նայում էին գետնին՝ անորոշ, չտեսնելով ոչինչ: Նրանք չէին մտածում, այդ պահին նրանք անկարող էին մտածել: Յուրաքանչյուրն զգաց, որ իր հետ կատարվեց մի բան, որը միայն մի անգամ է կատարվում կյանքում, մի շատ մեծ բան, որով նախ լցվեց սիրտը, ապա ողջ մարմինը, ապա գյուղը և ամբողջ այգեստանը…

Ճիշտ է, հանդիպումը տևել էր միայն մի պահ, նրանք աղջկա հետ փոխանակել էին հազիվ երկու խոսք, և թվում էր, թե այդպես արագ չէր կարող ծնվել սերը: Բայց այգեստանն ուներ իր օրենքը՝ կոկոնը ճեղքվում է մի գիշերում, ծաղիկը բացվում է միանգամից…

Երբ ընկերների հայացքները բարձրացան և հանդիպեցին իրար, նրանցից յուրաքանչյուրը մյուսի աչքերում կարդաց նույն զգացմունքը: Եվ նույն վայրկյանին, անակնկալ և անախորժ մի բան պաշարեց նրանց: Առաջին անգամ իրենց կյանքում նրանք զգացին, որ չեն կարող կիսել իրենց զգացումն իրար հետ: Կիսել էին նրանք և դառնություն, և ուրախություն, կիսել էին ամեն ինչ, բայց կիսել Անահիտին՝ անկարելի էր: Մանկությունից ի վեր նրանք միշտ և ամեն ինչում զիջել էին իրար և միայն այն դեպքերում էին կռվել իրար հետ, երբ ընկերը չէր ուզեցել ընդունել ընկերոջ զոհաբերությունը, ընկերոջ զիջումը: Բայց զիջել Անահիտին իրար՝ անկարելի էր: Առաջին անգամ իրենց կյանքում ընկերները կանգնել էին ոչ թե կողք կողքի, այլ դեմ-դիմաց:

Անահիտի հասցեին ասվելու պատրաստ հիացմունքի խոսքերը սառեցին նրանցից յուրաքանչյուրի շուրթերին: Ոչ մեկը չէր ուզում կրակոտ բառերով ավելի բորբոքել հրդեհը՝ ընկերոջ սրտում սկսված: Ընդհակառակը, հարկավոր էր հանգցնել այն: Ուստի և Ցոլակն առաջինն ասաց անտարբեր ձայնով.

— Ոչինչ, լավ աղջիկ է դարձել Անահիտը…

— Ոչինչ, ոչինչ,— նույնպիսի անտարբերությամբ, իսկույն համաձայնվեց Արարատը:

Բայց նույն վայրկյանին նրանց հայացքները հանդիպեցին իրար և նրանք ամաչեցին իրենց անազնիվ խաղից: Ցոլակը՝ իր զգացմունքների մեջ բուռն և անզուսպ, բացականչեց.

— Ես սիրահարվեցի, Արարատ… Կամ Անահիտը, կամ ոչ ոք…

Արարատը լուռ մնաց: Նա չուզեց խոսել՝ կրկնելու համար նույնը: Հասկանալի էր և այնպես:

Նկատեցի՞ն գյուղացիները, թե ինչ կատարվեց երկու անբաժան ընկերների հետ: Համենայն դեպս, երբ աղջիկը հեռացավ, ոչ ոք երիտասարդների դեմքերի վրա չտեսավ այն զվարթությունը, որով նրանք մտել էին գյուղ:

Դեռ մի քանի րոպե առաջ այնքա՛ն երջանիկ էին Արարատը և Ցոլակը: Նրանք հիանում էին իրենց այգեստանով, իրենց կյանքով, գոհ էին աշխարհից: Ճիշտ է, նրանց պակասում էր սերը, բայց նրանք չէին պատկերացնում, թե ինչպիսի մեծ, աշխարհի չափ մեծ բան էր պակասում նրանց:

Եվ ահա, նրանք տեսան Անահիտին և մի վայրկյանում դարձան դժբախտ: Ինչպիսի՞ աղքատության մեջ են ապրել նրանք մինչև հիմա՝ առանց այդ իմանալու… Ինչպե՞ս են ծիծաղել, կատակել, անհոգ եղել, երբ նրանց կյանքում գոյություն չի ունեցել Անահիտը…

Երկար ժամանակ կանգնած էին նրանք այդպես, ապա Արարատն ասաց.

— Գնանք, Ցոլակ, շուտով մութը կընկնի: Հարկավոր է շտապել:

Նրանք քայլեցին դեպի Նահապետի բնակարանը:

Նահապետը, գյուղացիներից շատերի նման, տարվա շոգ ամիսներին ապրում էր իր տան պարտեզում գտնվող աշտարակի վրա: Գերաններից սարքված չորս հաստ պատվանդան-սյուներ, գետնի մեջ ապահով խրված, բարձրանում էին վեր՝ հետզհետե մոտենալով իրար: Դրանց միջև, մեկը մյուսից բարձր, կային երկու տախտակամածներ՝ չորս կողմից ճաղերով շրջապատված: Պատվանդան-սյուների արանքում գտնվող մի սանդուղք գետնից բարձրանում էր առաջին տախտակամած, իսկ այնտեղից, մի ուրիշը՝ երկրորդ: Աշտարակն ավարտվում էր քառակողմ թեք կտուրով՝ թիթեղածածկ և սրածայր:

Նահապետի աշտարակն ամենաբարձրն էր գյուղում՝ մյուսներից համարյա կրկնակի բարձր: Ներքևի ավելի մեծ տախտակամածը գտնվում էր մրգատու բարձր ծառերի սաղարթների մեջ, իսկ վերևի ավելի փոքր տախտակամածը վեր էր խոյացել նույնիսկ ամենաբարձր բարդիներից, իշխում էր գյուղի և շրջակայքի վրա:

Երիտասարդները բաց արեցին Նահապետի պարտեզի դռնակը և մտան ներս: Ծառերի համատարած ծածկոցի տակ պարտեզում արդեն կատարյալ մթություն էր: Մոտենալով աշտարակին, նախքան բարձրանալը, նրանք նայեցին վերև՝ ո՞վ կա այնտեղ: Բայց երևում էին միայն առաջին հարկի ճաղերը՝ սաղարթների խիտ կանաչի մեջ կորած: Երկրորդ հարկը բոլորովին չէր երևում, այն գտնվում էր սաղարթներից բարձր:

Երիտասարդներն սկսեցին բարձրանալ: Շուտով ճյուղերի, խիտ խճճվածքներն իրենց տերևներով և դեռ խակ մրգերով սկսեցին կտրել նրանց աչքերի առաջը, խանգարել տեսնելուն, բարձրանալուն: Հարկ էր լինում դրանք անդադար տանել աջ ու ձախ: Թվում էր, թե նրանք բարձրանում են մրգատու ծառերի վրա: Առջևից գնացող Արարատի ճակատին խփվեց դեռ խակ մի խնձոր, աչքերի դիմաց հայտնվեցին մի քանի սալորներ, տերևների մեջ չերևացող իր ճյուղից կախված՝ ճոճվելով հեռացավ մի տանձ: Իսկ Ցոլակը, որ բարձրանում էր ընկերոջ ետևից, իր լայն դեմքի վրա հաճույքով զգում էր շրշացող տերևների համատեղ շրմփոցը՝ ալիքների պես, կամ առանձին տերևների քսվելը՝ հովի նման:

Բարձրացնելով հատակի վրա սարքված քառակուսի դռնակը և ծալելով մի կողմ, Արարատը դուրս ելավ առաջին հարկ: Այնտեղ ոչ ոք չկար: Երեկոյանալուն էր սպասում Անահիտի գունավոր անկողինը՝ մի կողմ ծալված և կարպետով ծածկված:

Ընկերները կանգ առան: Նրանք հուզված էին: Խորը սիրով և ակնածանքով նրանք սկսեցին նայել աշտարակի այդ հարկին, անկողնին, անկողնի մոտ դրված տնային կիսակոշիկներին, այն ամենին, որոնց մոտով քանի-քանի անգամ էին անցել նրանք՝ առանց ուշադրություն դարձնելու, շտապելով բարձրանալ երկրորդ հարկ՝ Նահապետի մոտ…

Իսկ երբ նրանք վերջապես սթափվեցին և շարունակեցին բարձրանալ երկրորդ սանդուղքով, նրանք այլևս վերև չէին նայում, այլ ներքև: Այնտեղ ներքևում, երևում էր Անահիտի հարկաբաժինը, որն իջնում էր շարունակ ավելի և ավելի վար: Դրա շուրջը վար էին իջնում նաև ծառերի գագաթները, արագ վերածվում էին ցածրիկ, գետնահուպ թփերի: Այժմ դրանք այնքա՛ն մոտ էին գետնին: Թփերի միջև երևում էին գետնի հարթ, մեծ քառակուսիները՝ վրան նույնպես գույնզգույն անկողիններ դրած: Ներքևի ամբողջ տեսարանը բաղկացած էր այդ տափակ ու լերկ գետնի սպիտակավուն քառակուսիներից և դրանց արանքներում լիք-լցված կանաչ թփերից:

Բայց ոչ, թփեր չէին դրանք, այլ ծառերի գագաթները: Եվ դա գետինը չէր, որ երևում էր քառակուսիներով՝ գույնզգույն անկողինները վրան, այլ գյուղի տների տափակ կտուրները՝

համահավասար տարածված: Գետինը, բակերն ու փողոցները գտնվում էին ավելի ներքևում և չէին երևում՝ սաղարթների տակ կորած:

Քանի բարձրանում էին ընկերները, այնքան ավելի ծառերի նորանոր ճյուղերն ու տերևները ծածկում էին ներքևի տեսարանը, մինչև որ ծածկեցին բոլորովին: Անհետացավ Անահիտի բնակարանի փոքրացած քառակուսին, անհետացան տափակ կտուրների լերկ քառակուսիները: Այժմ երիտասարդների ոտքերի տակ փռված էր կանաչի ալիքավոր ծովը՝ համատարած, ամայի: Չկար ոչ մի կողմնակի առարկա, ոչինչ չէր խախտում այդ կանաչ ծովի համատարածությունը…

Արարատի գլուխը շփվեց տախտակին: Նա նայեց վեր: Նա արդեն հասել էր: Ետ ծալելով նաև այդ դռնակը, նա սուզվեց քառակուսի բացվածքի մեջ և հայտնվեց երկրորդ հարկում: Առաջին բանը, որ տեսավ իր գլխավերևում, դա առաստաղի սպիտակ ներկած քառակուսին էր՝ կապույտ երկնքի ֆոնի վրա: Շատ զով մի քամի, բավական ուժեղ, սրսփացրեց նրան: Նրա վերնաշապիկը բաճկոնի տակ սկսեց փռփռալ:

Բարձրացավ նաև Ցոլակը, դռնակը ծածկեց:

Հատակին փռված գորգի վրա նստել էր Նահապետը՝ մեջքն անկողնի ծալքին հենած: Մի ոտքը ծալապատիկ, մյուսի ծունկը բարձրացրած, նա թևը դրել էր ծնկանը և կախ գցած ձեռքով համրիչ էր քաշում: Նրա մի կողքին դրված էր գինու գավ և թաս, մյուս կողքին՝ ծխելու պարագաներ: Սյուներից մեկի վրա, չթե պատյանով կախված, քամուց օրորվում էր գուսանական սազ նվագարանը:

Բազմամյա աշխատանքից արդեն վաստակած, իննսունհինգ տարին անց, գյուղի ամենահասակավոր ծերունին՝ Նահապետը, տարվա ամբողջ տաք կեսն անցկացնում էր աշտարակի վրա:

Երիտասարդները ողջունեցին նրան: Արարատը նստեց նրա մոտ, գորգի վրա, իսկ Ցոլակը հենվեց սյուներից մեկին և սկսեց հարգալիր նայել:

— Նահապետ,— ասաց Արարատը,— ինչպես միշտ, մենք նորից եկել ենք քեզ մոտ՝ խորհուրդ հարցնելու… Մեր այգեստանի համայնական ազատ կյանքին վայել չէ մեր գյուղի հին անունը՝ թուրք բռնակալների կողմից երբևէ կպցված: Ժողովուրդը նորն է պահանջում: Ի՞նչ անուն տանք…

Նահապետը դանդաղ ոտքի կանգնեց: Նրա բարձր հասակը ձգվեց ինչպես աշտարակի հինգերորդ, կենտրոնական սյուն: Նրա ալեհեր, բոլորովին ճաղատացած գլուխը համարյա հասնում էր առաստաղին: Կարճ խուզած սպիտակ մազերից ներքև նրա մորթը մուգ սրճագույն էր: Դա երբեմնի սպիտակ մաշկն էր՝ տասնյակ տարիների ընթացքում արևի տակ աշխատելուց թրծված:

Մոտենալով աշտարակի եզրին, Նահապետն իր մուգ սրճագույն և ջլուտ ձեռքերը դրեց ճաղերի վրա, նայեց դեպի այգեստան: Երիտասարդները, կանգնելով նրա ետևում, նույնպես նայեցին ներքև:

Աշտարակի տակից մինչև հորիզոն, հեռու, շատ հեռու, համատարած փռված էր այգիների աշխարհը՝ այգեստանը: Կանաչի խիտ ծածկոցն իր տակ թաքցրել էր ամեն ինչ: Խաղողի թփերի գետնահուպ կանաչն ու ծառերի բարձր կանաչը միաձուլվել էին և երևում էին միևնույն մակերեսի վրա: Առաջին հայացքից դժվար էր ասել՝ որո՞նք էին այդտեղ թփերը, որոնց տակ խաղողի այգիների թմբերն էին միայն, և որո՞նք էին ծառերը, որոնց տակ թաքնված, չէին երևում գյուղերն ու ճանապարհները, շենքերն ու փողոցները… Միայն երբեմն. կանաչ ծովի ինչ-որ հեռու տեղով, անցնում էր հովը, ալիք-ալիք շարժում էր սաղարթները, որոնք ալեկոծվելով, մի պահ բաց էին անում վարդագույն կամ նարնջագույն տուֆե շենքի մի անկյուն, որևէ գյուղի մի փոքրիկ, բայց

բազմազան տեսարան: Այգեստանը գնում-հասնում էր հեռու հորիզոնին և այնտեղ կորչում մառախուղի պես իջած լույսի մեջ:

Նահապետը շուռ եկավ, մոտեցավ հակառակ կողմի ճաղերին, նույնպես նայեց: Երիտասարդները, որ հարգանքով ետ էին քաշվել նրա առջևից, կանգնեցին նրա կողքերին: Այգեստանի նույն տեսարանն էր՝ անափ, անծայր: Միայն թե, մի քիչ հեռվում, որն այդ բարձունքից թվում էր շատ մոտ, համարյա աշտարակի տակ, ձգվել էր այգեստանի փոքրիկ քաղաքի՝ Այգեշատի կայարանը, որի ետևում երևում էին նաև քաղաքի առաջին փողոցները: Կայարանում կանգնած էր ջրամբարձ աշտարակի կլոր շենքը, մի քիչ հեռվում կանգնած էին երեք սպիտակ նավթամբարներ՝ հսկայական կլոր վրանների պես: Սև շոգեմեքենան քաշում էր ապրանքատար կարմիր վագոնների շարքը, որը տեղ-տեղ երևալով և, տեղ-տեղ անհետանալով, շուլալվում էր այգիների կանաչության մեջ: Հովը մերթ բերում էր անիվների կտկտոցը ռելսերի վրա, մերթ բոլորովին սրբում-տանում էր այն:

Այգեշատ քաղաքն իր կայարանով մի գեղեցիկ բացվածք էր այգեստանի կանաչ ծովի մեջ: Այնուամենայնիվ, կանաչով հագեցած էր նաև քաղաքը, նաև կայարանը: Իսկ այնուհետև, մինչև հորիզոնի լուսե մշուշը՝ նորից տարածված էր կանաչի համատարածությունը:

Նահապետը շուռ եկավ դեպի երրորդ կողմը: Մայր մտնող արևի ոսկեփոշին, օդի մեջ շաղ եկած, ոսկեզօծել էր տեսարանի կանաչությունը: Այգեստանի ծովը փռվել էր հեռու, շատ հեռու, իսկ այն հեռվում, այգեստանի եզրին, ինքը որպես մի ընդարձակ ծով, փռվել էր Հայաստանի մայրաքաղաք Երևանը: Տարածության գունատ կապույտի մեջ մայրաքաղաքի տեսարանը դարձել էր թափանցիկ, անմարմին, բայց չէր կորցրել իր մանրամասնությունները: Այնտեղ երևում էին առանձին-առանձին վեր խոյացած ամենաբարձր շենքերը՝ վարդագույն, նարնջագույն, դեղին, բայց իրենց վառ երանգները տարածության կապույտի մեջ մեղմացրած: Երևում էին փողոցների երկար գծերը՝ տարբեր ուղղություններով ձգված:

Մայրաքաղաքի ետևում կանգնած էր բարձրավանդակը: Փողոցներից շատերը բարձրացել էին դրա լանջն ի վեր: Դրանից վերև արդեն սկսվում էր լեռնային Հայաստանն իր ծառազուրկ բլուրներով ու սարերով…

Եվ վերջապես, Նահապետը շուռ եկավ դեպի չորրորդ կողմը… Կենսախինդ արտահայտությունը՝ նրա դեմքի վրա թառած, անհետացավ: Ծերունու մշտապես կնճռոտ ճակատի վրա ավելացան մռայլության կնճիռներ:

Այդ կողմում այգեստանը ձգված չէր մինչև հորիզոն: Այն գնում-հասնում էր մինչև ոչ այնքան հեռու Արաքս գետը և դրա ափի վրա կտրուկ ընդհատվում: Այգեստանի հետ միասին այնտեղ ընդհատվում էր խորհրդային աշխարհը…

Գետի այն ափին, անմիջապես ջրի մոտ, ձգվել էր բուսականության մի նեղ շերտ: Մշակված այգեստանին սովոր մարդկանց աչքին դա առաջին հայացքից նույնպես թվում էր այգեստան: Սակայն դա շամբուտներ էին:

Ձգվել էր հայկական դարավոր գետը քմահաճ գալարումներով, իսկ նրա ափերի վրա փռվել էր հայ ժողովրդի դարավոր օրրանը՝ երկու մասի բաժանված: Դիմացի ափի վրա ոչ մոտիկում, ոչ հեռվում, չէր երևում ոչ մի բնակավայր: Որպես երբեմնի բնակության և հետագա արհավիրքների լուռ վկաներ, տեղ-տեղ կանգնած էին ավերակ գյուղեր, բնաջնջված այգիների հետքեր…

Գետինն այն ափի վրա աննկատելի վերելքով բարձրանում էր և իր ետևից տանում նայողի հայացքը, հասցնում մեծ սարի ստորոտներին: Փակելով հորիզոնի զգալի մասը, այնտեղ կանգնել էր վիթխարի Արարատ սարն իր Մեծ ու Փոքր գագաթներով:

Երբ Նահապետն իր հայացքը բարձրացրեց շամբուտներից և հառեց սարի վրա, հարթվեցին նրա ճակատի մռայլության կնճիռները: Արարատին ու Ցոլակին թվաց, թե սահմանի այն կողմից ալեհեր սարը նկատեց նրանց և գաճաճների գլուխների վրայով ուղարկեց իր նահապետական ժպիտը...

Նահապետը կտրեց իր հայացքն այնտեղից, նայեց Արարատին ու Ցոլակին: Երիտասարդներն սպասում էին, թե ինչ անուն կառաջարկի ծերունին իրենց գյուղի համար:

Եվ Նահապետն ասաց.

— Ոսկե Հնձան:

3

Մութն իջավ անթափանց: Գյուղի գլխավոր փողոցի մի թևի վրա, որտեղ գտնվում էր դպրոցի շենքը՝ տների շարքից ներս ընկած, և որի առջևի արձակ տարածությունը գյուղի հրապարակն էր, հավաքվել էին սկսում գյուղացիները: Մթության միջից ամենուր լսվում էին նրանց մոտեցող ոտնաձայները:

Մթությունը, որ լայն հունով ձգվում էր գլխավոր փողոցով, շարունակ ծնում էր նորանոր մարդկանց: Նրանք գալիս էին՝ աստղերի լույսի տակ հազիվ նկատելի: Մտնելով հրապարակ, նրանք մթության մեջ զգում էին հավաքվածների բազմամարդությունը: Շշուկներից գոյացած ընդհանուր աղմուկի միջից որսալով որևէ ծանոթի ձայն, նրանք մոտենում էին նրան:

Հրապարակում և փողոցում, մեկ այստեղ, մեկ այնտեղ, վառվում և հանգչում էին լուցկիները՝ փորձելով լուսավորել մթությունը: Դրանց կարճատև բոցերի հանգչելուց հետո առկայծում էին ծխախոտների կարմիր կրակները:

Արարատը, հազիվ տուն գնացած, շտապ վերադարձել էր մարդկանց մոտ: Այժմ նա բոլորովին այլ մարդ էր: Արագաշարժ և խոսքառատ, նա մթության մեջ մի խմբից անցնում էր մյուսը, մի հոգսից՝ մյուսը: Մի տեղում նա հարցնում էր, մյուս տեղում՝ կարգադրում, մեկին ինչ-որ բան էր խոստանում, մյուսի հետ կիսաձայն փոխանակում էր մի քանի բառ: Մթության մի այլ կողմից լսելով ուրիշ հարկավոր մարդկանց ձայներ, նա կիսատ էր թողնում իր խոսքը և դիմում էր նրանց: Մի անգամ նա խնդրեց լուցկի վառել, որովհետև ինքը չուներ, չէր ծխում: Լուցկու լույսի տակ նա գրպանից հանեց մի թուղթ և դրա վրա աչքերով սկսեց փնտրել ինչ-որ բան: Նրա աչքերը, ցերեկով այնքան մեղմ ու թախծոտ, այժմ հարաշարժ էին և զգաստ:

Փողոցի հեռվում երևացին օրորվող լույսեր: Երեխաները բերում էին վառված լամպեր: Լույսերը երերվում էին մթության մեջ, գալիս իրար, հեռանում: Երբ դրանք մոտեցան, դրանցից յուրաքանչյուրի ետևում նկատելի դարձան երեխաների կենտրոնացած, ուշադիր դեմքերը: Լամպերը կախեցին դպրոցի շենքի պատին, դրա առջև կանգնած ծառերին, որոնց վրա կային մեխեր՝ նման դեպքերի համար նախօրոք խփված: Չլուսավորելով հրապարակի ողջ տարածությունը, լամպերն այնուամենայնիվ տեսանելի դարձրին իրենց մոտակայքի փոքրիկ տեսարանները՝ մարդկանցով լի:

Ցոլակը, մթությանը վարժ գիշերային ջրվորի իր աչքերով, անցնելով փողոցի և հրապարակի մի մասից մյուսը, մարդկանց մեջ փնտրում էր Անահիտին: Նա ոչ մի տեղ չէր տեսնում աղջկան: Սրած լսողությամբ նա ունկնդրում էր եկողների մոտիկ և հեռու խոսակցությունների ձայները, բայց մտածելով, որ աղջիկը կարող էր գալ մենակ, լուռ, աշխատում էր որսալ նրա ոտնաձայնը: Ապա կասկածելով, որ նա կարող է արդեն եկած լինել, նորից էր փնտրում նրան հրապարակում:

Լսվեց Այգեշատից երիտասարդ տղաներին և աղջիկներին վերադարձնող ավտոմեքենայի ձայնը: Մեքենան շրջվեց դեպի հրապարակ, կանգ առավ, երիտասարդներն սկսեցին իջնել: Հրապարակում հավաքվածների վրա ընկավ մեքենայի լապտերների սպիտակ լույսի հորձանքը, և դրա մեջ Ցոլակը տեսավ Անահիտին:

Կանգնել էր աղջիկը՝ լույսին դեմառդեմ, աչքերը լույսից կկոցած: Ձեռքերը բարձրացնելով, նա բացված ափերով պատնեշեց աչքերը: Երևում էին միայն նրա շրթունքները, նա ծիծաղում էր: Ապա ձեռքերը հեռացնելով, նա փորձեց վարժվել լույսին: Նայեց մի պահ՝ աչքերը կկոցած, բայց նորից պատսպարվեց ձեռքերով:

Ցոլակը նետվեց դեպի նա, կանգնեց լույսի և նրա միջև, բռնելով նրա փոքրիկ ձեռքերն իր լայն ափերի մեջ, ինչպես այն երիտասարդն այն աղջկա ձեռքերը՝ Այգեշատում, իջեցրեց վար: Աղջիկը նայեց Ցոլակին և չզարմացավ:

— Դու ինձ հենց այնպե՞ս տեսար, թե փնտրում էիր, Ցոլակ,— հարցրեց նա՝ առանց ձեռքերը նրանից վերցնելու:

— Փնտրում էի, Անահիտ… Գնանք լույսից այն կողմ...

Նրանք հեռացան դեպի հրապարակի մի անկյունը, կանգնեցին մի ծառի տակ, ինչպես այն երիտասարդն ու այն աղջիկը՝ Այգեշատում: Աղջիկը կանգնեց մեջքով դեպի ծառաբունը, իսկ Ցոլակը՝ նրա դիմաց, նրա ձեռքերն իր ափերի մեջ շարունակ պահած, հիացմունքով նայելով նրա դեմքին, որը հազիվ էր գծագրվում հեռու լույսերի թույլ արտացոլումի տակ:

— Ես էլ քեզ էի փնտրում, Ցոլակ:

Երիտասարդի սիրտը կանգ առավ:

— Փնտրո՞ւմ էիր… Ի՞նձ…

— Այո: Եվ Արարատին: Ափսոս, որ նա հիմա զբաղված է:

Աղջիկը ձգվեց, նայեց Ցոլակի ուսի վրայով: Ցոլակը ետ շրջվեց, նույնպես նայեց:

Հավաքույթն սկսվում էր: Դպրոցի շենքի առջև, փոքրիկ բարձրության վրա, դրված էր մի սեղան, վրան՝ լամպ: Սեղանի ետևում նստած էին Արարատը և էլի մի երկու մարդ:

— Այգեստանցինե՛ր…

Տիրեց լռություն:

Նավթի երկու լամպերի լույսը երկու կողմերից ընկել էր Արարատի այտերին, որից նա ավելի գունատ էր երևում և ավելի նիհար: Նրա մտախոհ հայացքը սևեռված էր դեպի հրապարակի կիսամութը:

— Այգեստանցինե՛ր… Դուք արդեն գիտեք, թե ինչու համար ենք հավաքվել: Ի՞նչ անուն տանք մեր գյուղին: Նահապետն առաջարկում է՝ Ոսկե Հնձան…

Հրապարակը թնդաց հավանության աղաղակներից, ծափահարություններից, չզանազանվող բարձրագոչ խոսքերից:

Արարատն սպասում էր լուռ, համբերությամբ: Երբ մի քիչ անց հրապարակում աղմուկը մեղմացավ, նա հայտարարեց.

— Ոսկե Հնձան:

Նույն րոպեին, ինչ-որ հեռու բարձրից, երկնքից, հնչեց Նահապետի սազի ձայնը: Նվագի հնչյունները, առանց այն էլ մեղմ ու անմարմին, իսկ տարածության պատճառով ավելի մեղմացած, իջնում էին երկնքի մթությունից դեպի ներքևի մթությունը՝ ինչպես օրհներգ:

Ողջ գյուղը լսում էր Նահապետին: Ե՞րբ լռեց նվագը՝ ոչ ոք չիմացավ, այնքան նման էին իրար նվագն ու լռությունը: Բոլորը դեռ մի քանի րոպե կանգնած, շարունակում էին ունկնդրել և չգիտեին՝ նվա՞գն են ունկնդրում, թե լռությունը: Ապա խաղաղ, անխոս, նրանք ցրվեցին զանազան կողմեր՝ լուծվելով խավարի մեջ: Երեխաները վար առան լամպերը կախված տեղերից և տարան: Հրապարակը և դրա առջևի փողոցը, որ քիչ առաջ այնպես աղմկոտ էին և մարդաշատ, ամայացան:

Երբ վերջապես լռեցին վերջին հեռացողների ոտնաձայները, գյուղում այլևս ուշ երեկո էր՝ լուռ, անմարդ:

Ծառի տակ կանգնած Անահիտն իր ձեռքերն ազատեց Ցոլակի ափերի միջից և շշնջաց. — Իսկ հիմա գնա աշխատանքիդ, Ցոլակ: Բարի գիշեր:

— Դեռ շուտ է, Անահիտ:

— Շուտ չէ, Ցոլակ: Դու միշտ այս ժամանակ ես գնում այգիները ջրելու: Գնում ես և երգում:

— Դու մի՞թե գիտես,— անչափ ուրախացավ Ցոլակը:— Դու ուշադրությո՞ւն ես դարձրել:

Անահիտը չպատասխանեց:

— Անահիտ...

Ցոլակն ուրախությունից այրվող երեսով, ձեռքերը մեկնեց դեպի մթությունը, բայց աղջիկը չկար իր տեղում:

— Անահիտ...— կրկնեց Ցոլակը:

Զուր շոշափելով մթությունը և մի քանի անգամ կամացուկ ձայն տալով նրան, Ցոլակն զգաց. աղջիկը չկար…

Ցոլակը, անչափ վշտացած, մռայլվեց:

Նա աղջկա փոքրիկ ձեռքերը բռնել էր իր մեծ ափերի մեջ, և նրան թվում էր, թե դա փոխադարձ սեր է արդեն: Աղջիկը չէր քաշում իր ձեռքերը, գուցե ամաչում էր կամ գուցե ոչ մի նշանակություն չէր տալիս դրան: Չէ՞ որ նա դեռ անփորձ է, երեկվա երեխան…

Ինչպե՞ս կարելի է հենց միանգամից տանել աղջկան մի կողմ, մարդկանցից հեռու, կանգնել ծառի տակ, բռնել նրա ձեռքերը՝ ինչպես այն տղան՝ Այգեշատում... Այն տղան Այգեշատում իրավունք ուներ դրան, որովհետև զգում էր աղջկա փոխադարձ, թեև թաքուն, սերը: Իսկ ի՞նչ իրավունք ուներ Ցոլակը… Խրտնեցրեց Անահիտին հենց առաջին օրվանից, վերջ այլևս ամեն մի հույսի…

Բայց ինչպե՞ս թե վերջ ամեն մի հույսի: Չէ՞ որ աշխարհը կդատարկվի Ցոլակի համար: Չի կարող լինել այդպիսի բան, չպիտի լինի: Խրտնե՞ց աղջիկը՝ կսովորի, ոչինչ… Ցոլակն այդքան էլ հեշտ բաց չի թողնի իր սերը: Կսիրի աղջիկը նրան, չի կարող չսիրել, Ցոլակը գեղեցիկ է, հաղթանդամ, գյուղի ամենալավ երիտասարդը: Հո սիրե՞ց Ցոլակն աղջկան նրա գեղեցկության համար: Կսիրի նաև աղջիկը նրան, ոչինչ...

Ինչպե՞ս կարելի է չսիրել Ցոլակին…

Կտրուկ շարժվելով տեղից, կարծես թափ տալով իր վրայից մթությունը, Ցոլակը գնաց տուն, վերցրեց բահը և մեկնեց այգիները ջրելու: Գյուղի ծայրամասի փողոցների վրա, ապա նաև այգիների վրա, տարածվեց նրա զվարթ, հույսով լի երգը…

Իսկ Արարատը, հավաքույթն ավարտվելուց հետո, նստեց դպրոցի դռան աստիճանների վրա, արմունկները հենեց ծնկներին, երեսը դրեց ափերի մեջ և սկսեց մտածել: Հեռացած գյուղացիներից ամեն մեկը տարել էր նրա աշխուժությունը մաս առ մաս, հանգցրած լապտերներից յուրաքանչյուրը հանգցրել էր նրա ուրախությունը: Քիչ առաջ այդտեղ լիքն էր մարդկանցով ու լույսերով, և թվում էր, թե դա շարունակվելու էր միշտ և չէր լինելու նորից ահա այսպես…

Նա հառաչեց: Անպետք մարդ դուրս եկավ նա վերջ ի վերջո: Ժողովուրդը նրան վստահել, ընտրել է կոլտնտեսության նախագահ, իսկ նա դեռ մինչև հիմա չի կարողացել էլեկտրական լույս բերել գյուղի համար… Հարևան գյուղերը, համարյա բոլորը, բոցկլտում են լույսերի մեջ, իսկ իրենց գյուղը դրանց օղակի մեջ կանգնած է ջրհորի պես մութ…

Լավ է, իհարկե, որ Երևանից վերև, Հայաստանի լեռնային մասում, կառուցում են հսկայական հիդրոկայաններ, և խոստացել են այդտեղից լույս տալ գյուղին: Բայց ե՞րբ կլինի դա, ինչո՞ւ սպասել դրան՝ ձեռքերը ծալած…

Առաջին անգամը չէր, որ Արարատը մտածում էր այդ մասին և տխրում: Բայց այսօր նա տխուր էր հատկապես, կարծես նրա մտքերը սահում էին մի ուրիշ թախիծի ֆոնի վրայով…

Ոչ, նա չէր գիտակցում իր այդ ուրիշ թախիծի պատճառը: Երբ հավաքույթում խոսելու ժամանակ նա նկատեց ծառի տակ կանգնած Ցոլակին՝ Անահիտի ձեռքերն իր ափերի մեջ առած, Արարատը համարյա չտխրեց, որովհետև գիտեր, որ չէր կարող լինել այլ կերպ: Վաղ թե ուշ, Անահիտը պետք է լիներ Ցոլակինը: Մի՞թե աղջիկը կարող էր թողնել գյուղի ամենալավ երիտասարդին և ընտրել Արարատին…

Նույն այդ ժամանակ Անահիտը, որ հակառակ Ցոլակի ենթադրության, տուն չէր գնացել, այլ միայն լռել, չէր պատասխանել երիտասարդի կանչին, ծառից մի քիչ այն կողմ կանգնած, նույնպես մտածում էր: Նա ուրախ էր: Պատանեկան իր շավղից երիտասարդության ճանապարհի վրա դուրս եկած, նա գոհ էր ու երջանիկ, որ իր մուտքը զարդարվել էր Ոսկե Հնձանի անվանակոչությամբ… Նորեկի անհամբերությամբ նա շտապում էր ապրել, ապրել…

Ի՜նչ լավ է, որ գեղեցիկ է նա: Բոլորն այսօր կանգ էին առնում նրա ճանապարհի եզրերին և նայում նրան: Ոսկե Հնձանը ողջունում էր նրա մուտքն աղջիկների շարքը: Բայց չէ՞ որ դեռ երեկ նա երեխա

էր, սովորական փոքր աղջիկ: Շնորհակալություն քեզ, այգեստան, քո մեջ կոկոնը ճեղքվում է մի գիշերում, ծաղիկը բացվում է միանգամից…

Հանկարծ Անահիտը նկատեց, որ դպրոցի դռան մոտ մարդ կա նստած: Հետաքրքրված, նա մոտեցավ, ճանաչեց և լուռ կանգ առավ երիտասարդի կողքին: Արարատը չլսեց նրա ոտնաձայնը և շարունակեց նստած մնալ՝ գլուխն ափերի մեջ առած:

— Արարատ...— շշնջաց Անահիտը:

Արարատը ցնցվեց, նայեց վերև և ոտքի ելավ:

— Անահի՞տ...— հարցրեց նա զարմանքով:

— Ինչո՞ւ ես նստել մենակ,— հարցրեց աղջիկը:

Փոխանակ պատասխանելու, Արարատը հարցրեց իր հերթին.

— Իսկ դո՞ւ ինչու ես մենակ:

Մթության մեջ աղջիկը կարծես նկատեց երիտասարդի թախծոտ հայացքը՝ իր վրա ուղղված, և ոչինչ չգտավ պատասխանելու:

Քիչ հետո նա ասաց.

— Ուղեկցիր ինձ տուն, Արարատ…

Նրանք քայլեցին: Մթության մեջ աղջկա ոտքը խփվեց քարի: Հետո, երբ խփվեց երկրորդ անգամ, նա թևանցուկ արեց երիտասարդին և ասաց.

— Տար ինձ, դու մթության մեջ լավ ես քայլում…

Խշշում էին ծառերի սաղարթները, լսելի հոսում էր ջուրն արխերով: Փողոցում ոչ ոք չկար:

Երբ նրանք հասան Նահապետի պարտեզի դռանը, Անահիտը ձեռքը մեկնեց երիտասարդին.

— Բարի գիշեր…

Եվ նայեց մտածկոտ: Թվում էր, թե բան էր ուզում ասել:

Արարատն սպասում էր: Տեսնելով սակայն, որ աղջիկը շարունակում է լուռ մնալ, սեղմեց դեպի իրեն երկարած նրա ձեռքը.

— Բարի գիշեր, Անահիտ…

Եվ հեռացավ դանդաղաքայլ: Նրան թվում էր, թե աղջիկը կանչելու էր իրեն:

Երբ Արարատի ոտնաձայնը մարեց հեռվում, Անահիտը մտածկոտ բաց արեց դուռը և մտավ պարտեզ: Մթության մեջ նրա մերկ ծնկներին քսվեց իրենց մեծ գամփռի բուրդը: Անահիտը խարխափելով գտավ նրա գլուխը, շոյեց, ապա սկսեց բարձրանալ աշտարակ: Շուրջը, հազիվ լսելի, խշշում էին խիտ սաղարթները, բայց զգացվում էր, թե ինչպես հետզհետե լայնանում էր տարածությունը և դառնում ավելի զով:

Հասնելով առաջին հարկ, Անահիտը բաց արեց իր անկողինը, բայց նախքան պառկելը բարձրացավ պապի մոտ,— կարիք չունի՞ արդյոք պապը որևէ բանի:

Նահապետն անխռով քնած էր՝ շրջապատված երկնքով և աստղերով: Մեղմ քամին, որ անցնում էր այդ բարձրության վրա, աննկատելի շարժում էր նրա ճակատին ընկած մի քանի արծաթավուն մազերը:

Իրանն ուղղելով խոնարհված դիրքից, Անահիտը նայեց դեպի տարածությունը և հիացած բացականչեց.— Այնքա՜ն ուժեղ էր հակադրությունը գյուղի ամայի մթության հետ..

Հեռվում, անորոշ տարածությունից այն կողմ, հուրհրատում էր մայրաքաղաքի լույսերի ծովը: Ուժեղ և խիտ կրակների անհաշիվ բազմությունը փռվել էր լայնարձակ՝ քաղաքի ետևում բարձրանալով անտեսանելի բարձրավանդակն ի վեր: Կենտրոնում և ուրիշ շատ տեղերում լույսն այնքան առատ էր և ուժեղ, որ տարածությունն այդ մասերում երևում էր ոչ թե լուսե կետերով, այլ համատարած լուսեղեն: Թվում էր, թե քաղաքում մեծ տոն էր և այնտեղ կատարվում էին հրավառություններ: Եվ թվում էր, թե այդ լուսեղ վայրերից լսվում էին հեռավոր երաժշտության ձայներ: Ծայրամասերի համեմատաբար սակավ լույսերն անգամ իրենց վրա անդրադարձնում էին կենտրոնի հրավառ պայծառությունը:

Անահիտի համար չէ՞ր արդյոք այդ ամենը… Չէի՞ն տեսնում արդյոք քաղաքում, թե ինչպես հեռու մթության բարձրից նրանց էր նայում աղջիկը…

Մայրաքաղաքից մինչև Ոսկե Հնձանն ընկած մեծ տարածության վրա, ամենուր, իրարից հեռու կամ մոտիկ, շաղ էին եկել գյուղերի լույսերի կուտակումները՝ ուժեղ՝ էլեկտրական կամ նավթի կարմրավուն, նվազ կետերով: Համարյա մի քանի քայլի վրա այգեստանի փոքրիկ քաղաքն էր փայլում որպես լույսերի լճակ: Կայարանում, երկար և նեղ տարածության վրա, երևում էին կարմիր և կանաչ փոքրիկ կրակներ և դեղին, մեծ լույսեր: Շարժվում էին մի քանի մանրիկ լույսեր, երևի լապտերներ՝ երկաթուղայինների ձեռքերում: Կայարանի մի կողմում, լույսի անդրադարձումի տակ, փայլում էին ծառախմբերի սաղարթները:

Մթության միջով, ինչ-որ ուղղությամբ, սահեցին երկու կրակներ՝ ավտոմեքենայի լապտերները: Անահիտը չկարողացավ հետևել, թե ուր էր գնում ավտոն, որովհետև նույն րոպեին, մթության նույն մասում, բայց խաչաձևող ուղղությամբ, երևաց առաջացող լույսերի մի երկար շարան: Այդ գնացքն էր անցնում: Լսվեցին անիվների շտապող ձայները՝ տարածությամբ մեղմացած, ապա լույսերի երիզն անհետացավ՝ անշուշտ ծառերի և պարիսպների ետևում, ապա նորից երևաց՝ փայլփլելով ու հանգչելով: Շոգեմեքենան սուլեց, և լույսերը նորից չքացան, այս անգամ՝ բոլորովին:

Անահիտը կտրվեց տեսարանից և իջավ իր հարկը: Այդտեղ շրջապատն այլ էր և երկինքը կարծես նոր միայն զգացնել տվեց իրեն: Այն աստղազարդ էր, և դրա մի հեռու, ցածր եզրից բարձրանալ էր սկսում նորալուսինը:

Լուսնի լույսի տակ, պարտեզների ծառերի արանքներով, երևում էին հարևան աշտարակները՝ քնածների անկողիններով: Հեռվից լսվում էր մի շան լուսնահաչը, իսկ մի այլ կողմից՝ մի ուրիշ շան հաչոց: Հետո երկուսն էլ լռեցին:

Անահիտն իր սլացիկ կերպարանքով աստղերի մանրիկ ցոլքերի և լուսնի սառը սպիտակության տակ կանգնած, բարձրացրեց թևերը և քնկոտ ճմլկոտվեց: Թվաց, թե նա պարում էր հեզանազ: Իր կանաչագույն հագուստով նա նման էր նորատունկ ծառի: Թվում էր, թե նա Ոսկե Հնձանի առանցքն էր, դրա կենտրոնական ծառը, որի շուրջը խելահեղորեն աճում էր ամբողջ այգեստանը:

Անահիտը հանեց կիսակոշիկները, կանգնեց անկողնի վրա, արձակեց հագուստի կոճակները: Երբ դրանից հետո մի ընդոստ շարժումով պոկեց հագուստն իր վրայից և մնաց սպիտակ ներքնաշապիկով՝ առավել սպիտակ մարմնի վրա հագած, կարծես ամբողջ այգեստանը հառաչեց հիացմունքից: Հովը համբուրեց նրա մերկությունը: Անահիտը սրսփաց և արագ պառկելով, վերմակը քաշեց վրան:

Մեջքի վրա պառկած, Անահիտը նայում էր երկնքին: Աստղերն այնտեղ պլպլում էին անթարթ, անշարժ: Որքա՛ն շատ էին դրանք, անհաշիվ շատ: Դրանց բազմությունը, երկնքի մակերեսից գնալով խորքը, անհետանում էր այնտեղ: Որքա՛ն խորն էր երկինքը… Մեջքի վրա պառկած, Անահիտին թվում էր, թե նա բերանքսիվայր գահավիժում էր այնտեղ:

Մինչև ո՞ւր էին մխրճվում աստղերի ամբոխները… Ի՞նչ կպակասեր երկնքից, եթե աստղերից մի հարյուրն իջներ և տարածվեր գյուղով՝ լապտերների պես:

Հեռու հորիզոնի վրա երկնքի մուգ կապտությունը գունաթափվել էր՝ արտացոլելով լուսավոր մայրաքաղաքը, որ չէր երևում:

Անահիտի միտքն ընկավ բարձրախոսը, որ լուռ դրված էր հատակին: Նա ձգվեց, մոտ քաշեց այն և մի փոքր շուռ տվեց լուսնի տակ փայլող դրա պտուտակը: Բայց բարձրախոսը լուռ էր: Սպասողական նայելով դրա կենտրոնի փայլուն կետին, Անահիտն աննկատելիորեն քնեց: Եվ միայն դրանից հետո բարձրախոսը թույլ խշշաց, ապա լսվեց այնտեղից մի խաղաղ ձայն:

Քնած Անահիտի ականջի մոտ բարձրախոսն սկսեց պատմել մայրաքաղաքի մասին:

Գլուխ երկրորդ

1

Երբ Ցոլակն աչքերը բացեց, արդեն կեսօր էր: Սենյակում ոչ ոք չկար: Անշուշտ ոչ ոք չկար նաև ողջ բնակարանում և պարտեզում: Շատ մոտիկ ինչ-որ տեղում մի հավ կչկչում էր անընդհատ և անվերջ՝ պատրաստվելով ձու ածել: Իր փոքրիկ գործի մեծ աղմուկով նա լցրել էր տարածությունը, և Ցոլակը հիշեց, որ դեռ քնած ժամանակ երկար լսել էր նրա ձայնը:

Ընդոստ վեր կենալով տեղից, Ցոլակն իրեն զգաց քնից բոլորովին կշտացած: Ինչ-որ մեծ բավականություն, որի պատճառը նա դեռ չէր գիտակցում, լցրել էր նրա հոգին: Երբ դուրս ելավ պարտեզ և ամառային արևը ողողեց երիտասարդին, նրա խնդությունն ավելի ուռճացավ:

Բնակարանի պատի տակ, փայտաշեն շրջանակի մեջ ամրացված, կախված էր ջրով լի քարե քառանկյունի գուռը: Գուռի տակը կլոր էր և կենտրոնում վերջանում էր մի սրածայր պտուկով: Պղտոր ջուրը ծակոտկեն քարից ներծծվելով և թորվելով, այդ պտուկից կաթում էր ներքև՝ փարչի մեջ: Ցոլակը բարձրացրեց փարչը և մոտեցրեց բերանին: Հազիվ սառը ջուրը շրթունքներին հպած, զգաց, որ թեև ծարավ, բայց ջուր խմելու ախորժակ չունի: Փարչը դրեց տեղը: Նրա ոտքերի մոտ կանգնած, աչքերը դեպի վեր հառած, պոչն էր շարժում Ցոլակի հայտնվելուց ուրախացած գամփռը: Ցոլակը շոյեց նրան երկու ձեռքերով, ապա թեքվելով դեպի պատի մյուս կողմը, մտավ հնձան:

Հազիվ դուռը բաց արած, նրա երեսին խփվեց գինու բույրը, որով տասնամյակներից ի վեր հագեցած էր բնակարանի այդ սենյակը: Առաստաղի տակ ամրացված ձողերի խիտ շարքերը, որոնցից

աշնանը կախում էին խաղողը՝ ձմեռվա համար, այժմ դատարկ էին: Սենյակում չկային նաև չոր մրգեր, բայց նա արձակում էր անցյալ մրգերի և ապագա մրգերի բույրը:

Ցոլակը լուսամուտի գոգից վերցրեց կավե մեծ թասը և մոտենալով՝ պատերից մեկի տակ թաղված հսկայական կարասների շարքին, ծունկ չոքեց դրանցից մեկի վրա: Երբ բաց արեց կափարիչը, գետնի տակից նրա երեսն ի վեր, բոցի պես, շրմփաց արբության խտացած շունչը: Նա թասն իջեցրեց կարասի մեջ, և որովհետև գինին այնտեղ մնացել էր քիչ, հարկ եղավ ողջ իրանով կախվել այնտեղ՝ միայն մի ոտքի թաթով կարասի պռունկից կառչած:

Ցոլակի գլուխը պտտվում էր այդպես կախված, աչքերը ծակծկվում էին թանձր մթությունից և ավելի թանձր գինու հոտից: Նա թաս բռնած իր ձեռքը շարժեց ներքևում. այնտեղ ճողփած գինին: Լցնելով թասը, նա արագ բարձրացավ և դուրս եկավ կարասից, ժպտաց կարմրատակած երեսով, նայեց: Գինին մուգ կարմիր էր, համարյա սև:

Թասը բարձրացնելով դեպի անորոշ մի ուղղություն, Ցոլակը շշնջաց.

— Անահիտի կենացը…

Գինին խմեց միանգամից, մի շնչով: Նորից իջնելով կարասի մեջ, հանեց ևս մի թաս: Խմելուց առաջ շշնջաց նորից.

— Ոսկե Հնձանի կենացը…

Խաղողը ճմլելու գուռի պռունկից նա վերցրեց նախորդ օրվանից ի վեր իր մոռացած հացի պատառը և պանիրը, կերավ ախորժակով: Ավելացածը վերցրեց իր հետ և դուրս գալով, նետեց գամփռին:

Գինուց հետո ցերեկն այժմ ավելի պայծառ էր, բայց և խայտաբղետ: Միախառնված՝ սիրո գոլորշիներին, գինու գոլորշիները Ցոլակի աչքերում վերափոխել էին շրջապատը: Ամեն ինչ ավելի գեղեցիկ էր այնտեղ, արտասովոր գեղեցիկ: Լսվում էր մի անբարբառ և լուռ երգ, որ գալիս էր մերթ նրա ներսից, մերթ տարածված էր թվում շրջակայքում՝ համատարած, համասփյուռ: Երգի այդ շարունակական տեղափոխման թրթռումներն ավելի էին խայտաբղետ դարձնում կեսօրվա պայծառությունը:

Ցոլակը պարտեզից դուրս եկավ փողոց: Գլխավոր փողոցը ևս բոլորովին անմարդ էր: Ըստ երևույթին, անմարդ էր ողջ գյուղը:

Ցոլակին դուր էր գալիս իր մենակությունը, որովհետև ոչ ոք չէր խանգարում նրան, չէր սթափեցնում ինքնասույզ արբածությունից:

Նայելով դեպի փողոցի մի և մյուս ծայրը, Ցոլակը քայլեց: Քայլեց ոչ մայթով, այլ փողոցի մեջտեղով: Արբածությունից բոլորովին ընդարմացած, նա չէր զգում գետինն իր ոտքերի տակ: Շոգի մեջ կարծես հալվել էր առարկաների նյութը և մնացել էր միայն դրանց անմարմին պատկերը՝ օդում կախված: Թվում էր, թե բավական էր մի թեթև հով, որպեսզի այդ պատկերը եթե ոչ ցրվեր, ապա ալեկոծվեր և ընդուներ նորանոր հմայիչ ձևեր:

Ցոլակի բարձրահասակ, լիքը կերպարանքը, նրա գեղեցիկ դեմքը, ճակատին իջած գանգուրները նրան դարձնում՝ էին նույնպիսի մի գեղեցիկ տեսիլ, ինչպիսին նրան ներկայանում էր Ոսկե Հնձանը: Արձակելով վերնաշապկի կոճակները, նա բաց արեց իր զորեղ պարանոցն ու կուրծքը, բայց ոչ թե շոգն զգալով, այլ ըստ սովորության, անզգայաբար:

Հանկարծ Ցոլակը պատկերացրեց, որ մինչդեռ նա մենակ անցնում է այդ փողոցով, այգեստանի մի ինչ-որ մասում եռում է բազմությունը, ամենուր խլրտում են մարդիկ, հնչում են խոսակցություններ, ծիծաղ, երգեր… Եվ այնտեղ գտնվում է Անահիտը…

Հազիվ այդ պատկերացրած, նրան անտանելի դարձավ մենակությունը: Նա անզուսպ ցանկություն զգաց անմիջապես գնալ այնտեղ: Բայց որտե՞ղ… Այգեստանի ո՞ր մասումն էին գտնվում մարդիկ, ո՞ր այգիներում էին աշխատում նրանք…

Տեղեկանալու համար նա բաց արեց առաջին իսկ հանդիպած դռնակը, մտավ պարտեզ: Ոչ ոք չկար: Բաց անելով տան դուռը, նա ձայն տվեց: Նույնպես ոչ ոք չկար: Ելնելով փողոց, Ցոլակն այդպես այցելեց շատ ուրիշ բնակարաններ, բայց ամեն տեղ նրան դիմավորում էին կամ մի գամփռ, որ նրան ճանաչելով, ժպտահայաց շարժում էր պոչը, կամ անհոգ խաղացող փոքրիկ երեխաներ, կամ մի աքաղաղ, որ կատաղած որոնում էր ստվերների մեջ ծվարած իր հավերին, կամ քարե գուռը, որի պտուկից ծլնգալով, փարչի մեջ էր ընկնում հերթական կաթիլը: Մի բնակարանում, վերջապես, նա տեսավ մի զառամյալ պառավի, որը սակայն, ի պատասխան երիտասարդի հարցին, թե ուր է գնացել գյուղի բնակչությունը, ձեռքը երկարեց դեպի ողջ այգեստանը և ասաց.

— Այնտեղ…

Հանկարծ Ցոլակը հիշե՞ց, թե տեսավ Նահապետի աշտարակը: Մի ուրիշ անգամ նա կամաչեր գնալ նրա մոտ նույն հարցով՝ վախենալով, որ նա պիտի գուշակեր, թե ում է փնտրում Ցոլակը: Բայց այժմ, հարբած, նա անմիջապես նետվեց նրա պարտեզը, արագ բարձրացավ աշտարակի սանդուղքներով և անակնկալ, իր սպասածից ավելի շուտ, հայտնվեց աշտարակի վրա: Քամին այնտեղ փչում էր հաճելի, և նկատելիորեն օրորում էր աշտարակը: Թվում էր, թե աշտարակն իր հսկայական գերանե ոտքերը փոխելով, սլանում էր այգեստանով: Ցոլակի աչքերը շաղվեցին, նա բռնեց ճաղերից:

Բարևելով ծալապատիկ նստած և ծխամորճ ծխող Նահապետին, նա հարցրեց.

— Որտե՞ղ է ժողովուրդը…

Նահապետը նայեց: Նրա դեմ կանգնած է իր վերածնված երիտասարդությունը, այգեստանի հավիտենաբար վերարտադրվող երիտասարդությունը: Նայեց հիացած, երկար՝ կարծես մոռանալով պատասխանել:

Ցոլակը շփոթվեց նրա հայացքի տակ, անկարող, սակայն, եզրակացնել՝ հասկացա՞վ Նահապետն իրեն, թե ոչ:

Նահապետն ասաց.

— Կլոր Այգում:

2

Կլոր Այգին գտնվում էր գյուղից բավական հեռու: Այն շատ մեծ էր և այնտեղ աճում էին Ոսկե Հնձանի խաղողի բոլոր տեսակները, մրգատու բոլոր ծառերը: Բարձր պարիսպով այգին անջատված էր ճանապարհից, որն անցնում էր դրա մի կողմով, և մանր այգիներից, որոնք գտնվում էին դրա շուրջը:

Այնտեղ ողջ գյուղն էր հավաքվել: Քաղում էին վաղահաս մեծ դեղձերը, սալորը, ուշահաս ծիրանը: Մի ոչխար ծառերի տակ խոտ էր արածում և միաժամանակ ուտում էր հանդիպած մրգերը, որ գիշերն էին ընկել ճյուղերից: Ուտելիս նա խնամքով դուրս էր նետում կորիզները:

Այգու տնակի ստվերոտ պատի տակ նստել էին երկու պարարտ աղջիկներ և միրգ էին ջոկում: Նրանց շուրջը, բարձր կույտերով, դիզվել էին մրգերը՝ բազմաթիվ գույներով: Բոլոր մրգերը հասուն էին, ուռուցիկ, հյութալի: Բոլոր մրգերը տրաքվում էին առողջությունից: Եվ աղջիկները դրանց միջև նստել էին ճիշտ դրանց նման:

Աղջիկների գոգը լիքն էր պատահաբար ընկած բազմատեսակ հասուն մրգերով: Մի սալոր իր տերևով կախվել էր աղջիկներից մեկի հագուստի կրծքից և շորը վար թեքելով, մի փոքր մերկացրել էր նրա ստինքները: Երբ թուխ դեմքերով երիտասարդները նոր միրգ էին բերում քթոցներով, աղջիկներն շտապ ուղղում էին իրենց հագուստները, ապա հուսահատ նայում իրենց շրջապատած մրգի դեզերին, կարծես դրանք նույնպես նրանց մերկությունը լինեին, որ անհնար էր ծածկել:

Մի հասակավոր մարդ միրգը տեղավորում էր քթոցների մեջ, իսկ նրա կողքին կանգնած մի կին մեծ ասեղով քաթանի կտորներ էր կարում դրանց վրա: Բարձրացնելով ճանապարհի փոշին՝ գալիս էր գյուղի ավտոն, կարմիր լայն դարպասից մտնում էր այգի և լիքը բարձվելով՝ մեկնում էր նորից:

Անահիտն արխի ջրի մոտ, ուռիների ստվերում նստած, նույն ուռիների դալար ճյուղերից քթոցներ էր գործում: Նա աշխատում էր լուռ և հանգիստ: Նրա դեմքի անվրդով արտահայտությունը և թևերի մեղմ շարժումները զերծ էին լարումից: Նրա մատները, սակայն, աշխատում էին այնպիսի արագությամբ, որ շուրջը նստած կանայք, որոնք նույնպես քթոցներ էին գործում, չէին կարողանում հետևել՝ ճյուղե՞րն էին արդյոք գալարվում աղջկա մատների շուրջը՝ հմայված կանաչ օձերի պես, թե՞ մատներն իրենք էին պտտվում ճյուղերի շուրջը՝ կաշկանդելով դրանք մի գեղեցիկ հյուսվածքի մեջ:

Երիտասարդները, որ ճյուղեր էին կտրատում քթոցների համար, ճյուղերի կույտը բերելիս հաճախ կանգ էին առնում նրա մոտ և նայելով նրան լուռ ու երկար, մերթ-մերթ մի բառ էին միայն շշնջում հառաչելով.— նրա անունը:

Աղջիկն առանց գործն ընդհատելու, անհարցախնդիր հայացքով մի պահ շեղակի նայում էր վերև: Սերը, որով շրջապատել էին նրան բոլորը, նա ընդունում էր ժպիտով, բայց և հպարտ անտարբերությամբ, իբրև արժանավոր: Նա ինքը սիրում էր բոլորին և ամեն ինչ:

Մտնելով այգի, Ցոլակն անմիջապես գնաց դեպի Անահիտը: Մոտենալով ուրախ՝ նա բարևեց բարձրաձայն և մտերիմ: Աղջիկը պատասխանեց, մի պահ նայեց նրան և նորից խոնարհեց գլուխն աշխատանքի վրա:

Ցոլակը կռացավ, բռնեց նրա ձեռքը: Աշխատանքն ակամա ընդհատելով, Անահիտը հարցական նայեց նրան:

— Աշխատանքից հետո,— շշնջաց Ցոլակը,— գնանք մեր այգին…

— Ոչ,— ասաց աղջիկը կտրուկ՝ ձեռքը վերցնելով:

Հուսախաբության սառնությունը պաշարեց Ցոլակին: Գինին, որ տիրապետել էր նրան, կարծես ցնդեց: Նա ուղղվեց և մնաց տեղում քարացած-կանգնած՝ այլևս անկարող որևէ ուրիշ բան ասել կամ գոնե հեռանալ:

Իսկ աղջիկն անտարբեր շարունակում էր աշխատանքը: Երիտասարդներին, որ ճյուղեր էին բերում, տղամարդկանց, որ երբեմն գալով այգու զանազան կողմերից, պատրաստի քթոցներն էին տանում, նա ավելի էր ուշադրություն նվիրում:

— Անահի՛տ,— ասաց Ցոլակը:

Աղջիկը նայեց վեր՝ կարծես զարմանալով, որ երիտասարդը դեռ այդտեղ էր:

— Դու ինձ բա՞ն ունես ասելու,— հարցրեց աղջիկը:

— Ոչ,— ասաց Ցոլակը ցասումով և հեռացավ:

3

Ինչպե՞ս անցավ օրը, ինչպե՞ս վրա հասավ երեկոն, ո՞ր տեղ անցկացրեց նա այդ ամբողջ ժամանակը… Երբ շուրջը նայեց՝ արդեն լիակատար խավար էր, և ինքը գնում էր գյուղի գլխավոր փողոցով:

Նա գնաց տուն, վերցրեց բահը և մեկնեց այգիները ջրելու: Փողոցներով անցնելիս և այնուհետև ողջ ճանապարհին՝ նա երգեց, ինչպես միշտ: Բայց դա ուրիշ երգ էր՝ ոչ սիրո, ոչ ուրախության:

Առաջին իսկ այգում, բահով առվի ջուրը շուռ տալուց հետո, երբ նստած սպասում էր, որ հողը ոռոգի, նա անախորժություն զգաց այն բանից, որ պարապ էր և ակամայից ստիպված էր մտածել: Փորձեց ծխել, բայց ծխի հետ մտքերը չէին ցնդում:

Ցոլակը վեր կացավ բարկացած և մթության մեջ բահը պատրաստ պահելով, սկսեց սպասել. խոտը խշշացնելով, չի՞ անցնի արդյոք գիշերային փոքրիկ և թունավոր մի օձ… Սակայն օձ չկար, և նա չկարողացավ թափել իր բարկությունը:

Մինչ այդ, արդեն եկավ ժամանակը, և նա ջուրը կտրելով՝ մտավ հետևյալ այգին: Այդ այգին ավելի մեծ էր, հարկավոր էր սպասել ավելի երկար: Եվ որովհետև բացարձակապես ոչինչ չկար անելու, նա նստեց և ստիպվեց մտածել: Անսպասելիորեն, նրա մտքերն ստացան հաճելի ընթացք:

Նա երազում էր այդ գիշեր ոռոգել ամբողջ այգեստանը,— գյուղի բոլոր այգիներն առանց բացառության,— և այնպես առատ, որ երեք օր շարունակ ցեխը չչորանար թմբերի արանքներում: Լուսաբացին նա գյուղ կմտներ բահն ուսին դրած, և բոլորը զարմացած կնայեին նրան: Տղաները կնայեին նախանձով, աղջիկները՝ թախանձանքով: Իսկ նա կանցներ՝ բոլորին ժպտալով, և հանկարծ տեսնելով Անահիտին՝ կլրջանար, անտարբեր շուռ կտար երեսը և դիտմամբ կմոտենար առաջին իսկ հանդիպած տգեղ աղջկան…

Բայց ջուրը հոսում էր իր սովորական ընթացքով, հողը ոռոգվում էր իր սովորական ժամանակում, և հրաշք հնարավոր չէր: Ուրիշ բան, եթե արդեն պատրաստ լիներ Արծաթաղբյուրից հանվող առուն: Սակայն այդ դեպքում ոչ ոք չէր զարմանա նրա արարքի վրա:

Եվ դժգոհ, բարկացած, բորբոքվելու պատրաստ, բայց անկարող, որովհետև ոչ մի բանի վրա հնարավոր չէր թափել զայրույթը, նա ջրեց այգիները մինչև առավոտ: Լուսաբացին, սակայն, նա անդրադարձավ, որ եթե հրաշք չէր պատահել, այնուամենայնիվ այդ գիշեր նա ջրել էր ավելի, քան

սովորաբար: Այդ բանը բավական հանգստացրեց նրան: Գործն ավարտած լինելով, նա վերադարձավ գյուղ, որ դեռ նոր էր սկսել արթնանալ:

Ցոլակը գնում էր մտածկոտ, գլխիկոր: Ի՞նչ փողոցներով էր տուն վերադառնում՝ չգիտեր: Ավելի շուտ՝ այնպես էր ձևացնում ինքն իրեն, թե չգիտեր: Ուստի և, երբ հասավ Նահապետի տանը՝ նա չզարմացավ: Կամացուկ բաց արեց դուռը, մտավ պարտեզ:

Անահիտն արդեն հագնված, գտնվում էր պարտեզում: Տեսնելով Ցոլակին, նա բոլորովին չզարմացավ: Նայեց սպասողական՝ մինչև երիտասարդը մոտեցավ նրան և բարևեց:

— Ինչո՞ւ ես եկել,— հարցրեց աղջիկն առանց բարևին պատասխանելու, բայց և առանց բարկության:

— Հոգնած եմ ու ծարավ, վերադառնում եմ աշխատանքից, տուր ինձ մի թաս գինի՝ եթե դժվար չէ քեզ,— ասաց Ցոլակը հպարտ խնդրանքի տոնով:

Առանց պատասխանելու, աղջիկը մտավ հնձան, և երբ դուրս եկավ այնտեղից, նրա ձեռքերում կար երկու թաս, մեկը՝ պռունկ-պռունկ լցված, մյուսը՝ կիսատ:

— Խմենք միասին,— ասաց նա:

— Անահի՛տ— բացականչեց Ցոլակը՝ իր վերապահ տոնը մոռացած:

Բայց աղջիկը լուռ մեկնեց նրան լիքը թասը և իրենը խփելով նրա թասին, մոտեցրեց շրթունքներին:

Ցոլակը խմեց չընդհատվող և երկար մի կումով: Անահիտը խմում էր փոքրիկ կումերով: Թասը ծածկել էր նրա մի քիչ ետ գցած գլուխը, երեսը: Զյունանման կոկորդի վրա յուրաքանչյուր կումի հետ կծկվում էր հազիվ նկատելի նրա կլթակը: Կզակի տակից սկսած, նրա մորթի սպիտակության վրա երևում էին մարմարային կապտավուն գծեր: Երակնե՞ր էին դրանք, թե ճղճղված գիշերվա երիզները…

Նրանք թասերն իջեցրին միաժամանակ: Մտերիմ նայեցին իրար, ժպտացին: Աղջկա սպիտակ կզակի վրա արյան կարմրությամբ փայլում էր գինու մի կաթիլ Ցոլակը նայեց բաղձանքով՝ համբույրով քաղելու այդ կաթիլը:

— Անահիտ, ի՞նչ եմ արել ես քեզ,— շշնջաց Ցոլակը՝ մռայլվելով:

— Իսկ ե՞ս ինչ եմ արել քեզ, Ցոլակ:

Երիտասարդը նայեց աղջկան՝ չհասկանալով:

— Մենք ձեր այգին կգնանք՝ երբ խաղողը հասնի,— շշնջաց Անահիտը:

— Անահի՛տ,— բացականչեց Ցոլակը՝ մղվելով դեպի նա, բայց աղջիկը ձեռքերը դրեց նրա կրծքին, մեղմությամբ ետ հրեց:

— Երբ խաղողը հասնի,— հիշեցրեց նա:

Ցոլակը նայում էր նրան՝ վերականգնված երջանկությունից փայլող աչքերով:

— Լավ, Անահիտ, թող հասնի խաղողը,— ասաց նա և իր ափերի մեջ սեղմելով աղջկա զույգ ձեռքը՝ գնաց:

Երկնքի մեծ գուռից լուսաբացի թորած ջուրը շարունակում էր կաթել գյուղի փարչի մեջ: Պատերի տակ բուսած խոտերի վրա երևում էին ցողի հատիկներ, կարծես շտապ հեռանալիս, գիշերը շփոթությամբ շաղ էր տվել իր ուլունքները: Երբ զով քամու տակ ճոճվում էր խոտի մի երկարավուն սեզ, ցողը դրա անփայլ և անողորկ երեսն ի վար սահելով, ընկնում էր ցած՝ առանց սեզի վրա հետք թողնելու:

Անծայր կանաչ այգեստանի վրա կախվել էր լուսաբացը, ինչպես մի մեծ ցող:

— Երբ խաղողը հասնի,— շշնջաց Ցոլակը երազանքի մեջ:

4

Հանգստի օրը բացվեց ուրախ և տոնական: Վաղ առավոտից գյուղը շարժման մեջ էր: Արևն ընկել էր արթնացող բնակարանների և փողոցների վրա և հաճելի տաքացնում էր գիշերվանից ի վեր դեռ զով օդը: Ծառերի կատարները խշշում էին, ջուրն արխերով հոսում էր լսելի:

Դպրոցի առջևում՝ գյուղի հրապարակում, լսվում էին պատանեկան թմբուկի ձայներ և երբեմն շեփորի կանչը: Գրասենյակի մոտ կանգնած էր բեռնատար ավտոն՝ տախտակներից հարմարեցրած նստարաններով, որոնց վրա սպասողական նստոտել էին գյուղացիները: Հանկարծ մեքենան հռնդաց և իսկույն երևաց մի ուշացած գյուղացի, որ վազում էր կապոցը ձեռքին: Երբ նա ևս, կապոցն ավտոյի վրա նետելուց հետո, նստեց, ավտոն սլացավ գլխավոր փողոցով: Նա մարդկանց տանում էր այգեստանի փոքրիկ քաղաքը, որտեղից նրանք գնացքով պետք է մեկնեին մայրաքաղաք:

Ամեն կողմից դեպի հրապարակ էին շտապում երեխաներ՝ նոր լվանալուց փայլող երեսներով: Գլխավոր փողոցի հեռագրասյուների վրայից բարձրախոսներն օրվա նորություններն էին հաղորդում մայրաքաղաքից և մերթ-մերթ ամբողջ գյուղով մեկ տարածում էին որևէ նվագ:

Երկու երիտասարդներ դպրոցի առջևի հեռագրասյանն ամրացված տախտակի վրա փակցրին երեկոյան կինոնկարի հայտարարությունը և գնացին:

Ինչ-որ տեղից, գիշերվանից ի վեր, գալիս էր նվագի ձայն: Այժմ լսվեց, թե ինչպես նվագը դուրս եկավ տնից և սկսեց հեռանալ: Ըստ երևույթին, գնում էին խնջույքը շարունակելու այգում:

Երեք հասակավոր գյուղացիներ՝ կլոր և կարմիր երեսներով, փորերն ուռած, ժպտից ետ գնացած բեղերով, բթամատերը գոտիների ետևը խրած, շրջում էին տնից տուն՝ հավաքելու իրենց ընկերակիցներին, չմոռանալով, իհարկե, յուրաքանչյուր տան մեջ ոտքի վրա մի-մի թաս գինի խմել և մի-մի կտոր բան ուտել: Շուտով նրանք հինգ հոգի դարձան, իսկ հետո՝ ութ:

Եռուզեռ կար նաև բնակարաններում ու պարտեզներում, քանի որ մարդկանց մեծամասնությունը դեռ դուրս չէր եկել փողոց: Մի բակում ճիպոտով հարվածում էին գորգին՝ փոշուց մաքրելու համար: Այնտեղ կանայք տունը դուրս էին գցել՝ աշխատելով գործը վերջացնել մինչև կեսօր և ելնել զբոսանքի: Մի այլ պարտեզում եռալ էր սկսել ինքնաեռը: Մի աղջիկ մի երրորդ տնից դուրս եկավ փողոց՝ արդուկը ձեռքին, և սկսեց ճոճել՝ բորբոքելու համար: Նա շտապում էր արդուկել զգեստը և միաժամանակ նայում էր, թե չե՞ն գալիս արդյոք ընկերուհիները՝ բարկանալու նրա դանդաղկոտության վրա:

Փողոցով, որտեղ հետզհետե շատանում էին մարդիկ, մեն-մենակ շրջում էր Արարատը: Մինչև կոկորդն աշխատանքների մեջ թաղված լինելու սովոր, նա հանգստի օրերին իրեն անհարմար էր զգում, որ պարապ է և ոչինչ չունի անելու:

Դեռ վաղ առավոտյան մտածելով, թե գուցե մոռացել է որևէ անհետաձգելի աշխատանք, նա վերջնականապես համոզվել էր, որ այդպիսի աշխատանք չկա և ինքը նույնպես կարող է հանգստանալ:

Այժմ, շրջելով, նա դիտում էր շուրջը: Դիտում էր և տեսնում, որ մինչ այդ, առօրյայով զբաղված, նա լոկ նայել էր, բայց չէր նկատել: Միայն հիմա էր տեսնում, թե ինչպես նորից աճել էր այգեստանը, հասել էին աղջիկները, մեծացել էին երեխաները: Տեսնում էր, թե ինչպես ամենօրյա մանր-մունր աշխատանքների միջից դուրս էր լողում Ոսկե Հնձանը:

Եվ վերջապես, սրտի երիտասարդական թպրտոցով, նա մտածում էր Անահիտի մասին: Շարունակ գործերով տարված, Արարատը մինչ այդ՝ կարծես մոռացել էր նրան: Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր նա շրջում էր այգիները, երբեմն գնում էր մայրաքաղաք, այնտեղից՝ նորից դեպի այգիները, կամ գյուղ, կամ այգեստանի փոքրիկ քաղաքը և կամ ո՞վ գիտե ուր: Պատահած տեղում նա մի քանի անգամ վերցնում էր հեռախոսափողը և խոսում էր զանազան մարդկանց հետ: Ճանապարհների վրա նա կանգնեցնում էր համարյա բոլոր ավտոներն ու սայլերը և որևէ բան էր հարցնում կամ հանձնարարում: Երեք օրվա մեջ երկու անգամ հրավիրեց գյուղացիների հավաքույթ, ճիշտ է, յուրաքանչյուր անգամ հազիվ տասը-տասնհինգ րոպեով, բայց կարևոր և անհետաձգելի գործերով: Գյուղ հրավիրեց մի հողագետի և երկու օր նրա հետ անհետացավ այգիներում: Եվ որովհետև նրա անհրաժեշտությունն զգացվեց համարյա անմիջապես, գյուղացիները ոտքի տակ առան այգեստանը, բայց չկարողացան գտնել նրա հետքը: Իբր թե տեսնողներ էին եղել, որ նա գնացել էր դեպի սև խաղողի մեծ այգիները, բայց այնտեղ աշխատողները ժխտեցին այդ: Հետո լուր տարածվեց, թե նա գտնվում է նոր զցված բանջարանոցներում: Նույնիսկ հավատացնում էին, թե նրան հանդիպել են սեխի մարգերի մեջ: Երկրորդ օրվա երեկոյան, սակայն, նա ինքը հայտնվեց անակնկալ և, ըստ երևույթին, բոլորովին այլ տեղից: Նա մռայլ էր: Երկար ժամանակ չէր ուզում ասել, թե ինչու: Հետո առաջարկեց, որ բոլոր գյուղացիներին լցնեն ավտո,— այո, լցնեն, և ոչ թե նստեցնեն,— և ուղարկեն մայրաքաղաք, որպեսզի նրանք իրենց աչքով տեսնեն, թե ինչպես շարունակ պակասում է միրգն այնտեղ, ուրեմն որքան վատ են աշխատում իրենք:

Անահիտին նա հանդիպել էր ընդամենը մի անգամ: Մի քանի գյուղացիների հետ փողոցում կանգնած, Արարատը մտովին ինչ-որ հաշիվ էր անում՝ կկոցած աչքերի անարտահայտիչ հայացքը դեպի փողոցն ուղղած: Նա մտքում գումարում էր, բազմապատկում, և որովհետև հաշիվը ճիշտ չէր դուրս գալիս, դրա համար էլ նա դանդաղ շուռ էր տալիս հայացքն առվից դեպի ծառը, ծառից՝ դիմացի դարպասը, առանց, սակայն, տեսնելու առարկաները, լոկ հաշվի մեջ կենտրոնացած:

Այդ ժամանակ երևաց փողոցով անցնող Անահիտը: Արարատը, շարունակելով մտածել հաշվի մասին, հայացքը դարձրեց դեպի աղջիկը՝ առանց սակայն տեսնելու նրան: Աղջիկը մոտեցավ նրա անշարժ հայացքի տակ և բարևեց: Արարատը չպատասխանեց, նա նույնիսկ չլսեց աղջկա բարևը:

Երբ աղջիկն անցավ, իսկ Արարատը վերջապես գտավ ճիշտ հաշիվը, երկար ժամանակ հաշիվը նրան թվում էր թերի, կասկածելի: Նա հանեց թուղթ և մատիտ, ստուգեց, օգնեցին նաև մյուս գյուղացիները: Արդյունքը միշտ ստացվում էր նույնը, բայց Արարատը համոզված էր, որ հաշվի մեջ կար ինչ-որ պակաս, և որ հաշվելիս նա զգացել էր, թե ինչպես մի կարևոր բան անցել էր իր մտքով կամ աչքի առջևով և անհետացել էր՝ առանց հետք թողնելու: Արարատը փնտրում էր այն և չէր

գտնում: Իսկ այժմ, շրջելով հոգսերից ազատ, նա անդրադառնում էր և տանջող հստակությամբ գիտակցում, որ այդ բոլոր օրերի ընթացքում նրան պակասել էր Անահիտը…

Որտե՞ղ էր նա, ի՞նչ էր անում, ո՞ւմ հետ էր անցկացնում իր օրերը…

Արարատը հիշեց Ցոլակին և թախիծով հառաչեց: Նա գեղեցիկ էր և հաղթանդամ, նա գիտեր վարվել աղջիկների հետ, դուր գալ նրանց: Իսկ ինքը՝ նիհար և փոքրամարմին, սուր քթով և գունատ դեմքով, շարունակ գործերով զբաղված…

Անցան մի քանի երիտասարդ տղաներ և աղջիկներ՝ հեծանիվներով: Նրանցից մեկի ուսից կախված էր լուսանկարչական գործիք: Հավասարվելով Արարատին, նրանք վար ցատկեցին, շրջապատեցին նրան և խնդրեցին գնալ իրենց հետ այգիները: Արարատը տխուր, գլուխն օրորեց բացասաբար, երիտասարդները խնդրեցին նորից, ապա անհույս դադարեցին: Անիվների նիկելած շառավիղները փայլեցնելով, նրանք հասան փողոցի անկյանը և թեքվեցին այն կողմ:

Տնամերձ պարտեզներից մեկի տակավ ճաղաշարի ետևից երևում էր ողջ պարտեզը և բանջարանոցի արևոտ մի մարգ: Մարգի պռունկին աճում էր մի ահագին դդում, որի մոտ նստել էր մի փոքրիկ հավ՝ հպարտ, փքված, կարծես դդումը ձու էր և ինքն էր ածել այդ ձուն:

Շուրջը, փողոցում, ավելի էին շատանում մարդիկ: Արագ եկավ մի երիտասարդ՝ նվագարանը ձեռքին: Նա փնտրում էր ընկերոջը, որ խոստացել էր նույնպես գնալ այգի, բայց անհետացել էր: Բոլոր մյուսները հավաքվել էին, իսկ նա չկար: Եկավ նաև մի ուրիշ երիտասարդ, որ ոչ ոքի չէր փնտրում: Ավելի շուտ՝ փնտրում էր, բայց միայն նայելու և հառաչելու համար:

Արարատի ոտքերի տակ ընկավ մի փոքրիկ փետուր: Նա նայեց վեր՝ ծառի կատարին: Ճյուղերի վրա նստած անհամար ճնճղուկներ, որ նման էին պտուղների, իրենց հարյուրավոր ձայներով սկսել էին ինչ-որ մեծ վեճ՝ ինչ-որ փոքր նյութի մասին: Ամբողջ ծառը թնդում էր նրանց զվարթ, տոնական ճռվողյունից, և հանգստի օրը դառնում էր ավելի հաճելի:

— Արարատ,— լսեց հանկարծ երիտասարդն իր ետևից և արագ շրջվեց:

Կանգնած էր Անահիտն իր գեղեցկության փայլի մեջ: Նորից Ոսկե Հնձանի պես կանաչ հագած, նա կարծես բուրում էր այգեստանի թարմությունը:

Անթարթ հիացմունքով նայելով աղջկան, Արարատը մոտեցավ: Երիտասարդին թվում էր, թե ձայն տալով նրան, աղջիկը պետք է ժպտար սիրալիր, առաջարկեր գնալ շրջելու միասին…

Բայց աղջիկը, լրջադեմ և զուսպ, ձեռքը երիտասարդին լուռ մեկնելուց հետո ասաց.

— Ես քեզանից բան էի ուզում խնդրել, Արարատ…

— Ասա,— բացականչեց Արարատը զվարթ,— ես քեզ համար աստղեր վար կբերեմ երկնքից…

— Աստղեր պետք չեն,— ասաց Անահիտը,— Ոսկե Հնձանին լույս է հարկավոր…

— Լո՞ւյս,— կրկնեց Արարատը՝ հանկարծակիի եկած: Աղջիկը մնաց լուռ: Անթարթ հայացքը երիտասարդի վրա սևեռած, նա սպասում էր պատասխանի:

— Երևի անհնա՞ր է,— հարցրեց Անահիտը, և նրա ձայնի մեջ որոշակի հնչեց կարեկցանքը:

Հարցը մտրակի պես անցավ Արարատի երեսով: Նա ցնցվեց, սթափվեց և ասաց վճռական.

— Կունենանք: Շուտով:

— Նույնիսկ շուտո՞վ,— թերահավատորեն զարմացավ աղջիկը:

— Այո, Անահիտ: Երբ խաղողը հասնի:

Անահիտը ոչինչ չասաց: Նա չէր հավատում, և երիտասարդը որոշակիորեն զգաց այդ:

— Խոստանում եմ, Անահիտ,— բացականչեց Արարատը:— Հիշիր իմ խոսքը…

— Տեսնենք, Արարատ… Եթե կարողանաս բերել՝ երբ խաղողը հասնի… Իսկ առայժմ…

Եվ աղջիկը ձեռքը մեկնեց նրան:

Արարատը հասկացավ, որ այդ առայժմ-ը վերաբերում է այն ամբողջ ժամանակին, քանի դեռ գյուղում չեն վառվել էլեկտրական լամպերը: Զգաց նաև, որ մինչ այդ՝ ինքը ևս չի համարձակվի հանդիպել աղջկան՝ չարժանանալու համար նրա հեգնանքին: Ուստի և սեղմեց նրա ձեռքն իբրև երկարատև հրաժեշտի նշան, և նրանք բաժանվեցին:

5

Անահիտի հեռանալուն պես Արարատին բռնեց մի այնպիսի ջղագար հեղձուկ, որ կարծես օդը միանգամից վերջացավ:

Ժամանակը, Ոսկե Հնձանի ոսկե ժամանակը, իր երիտասարդության ոսկե ժամանակը, անցնում էր: Օր օրի վրա, ժամ առ ժամ, բոպե բոպեի ետևից, լցվում և հասունանում էր խաղողը: Հրացայտ արևը և պարարտ հողը միացել էին՝ փոթորկոտ արագությամբ բերելու խաղողահասը: Եվ Ցոլակն այնպիսի եռանդով էր ջրում այգիները, այնպիսի հնարքներով էր կարողանում ջուր հասցնել բոլոր այգիներին, որ կարծես նա էլ էր դավադրել արևի ու հողի հետ, և նույնպես բերում էր խաղողահասը:

Իսկ ի՞նչ էր անում ինքը՝ Արարատը: Նա ևս, արագացնելով Արծաթաղբյուրից հանած նոր առվի կառուցումը, բերում էր խաղողահասը: Եվ այդ արագաթափ ընթացքի մեջ, որ տանում էր դեպի լի աշուն, որտեղ այլևս ուրիշ ոչինչ հնարավոր չէր անել՝ բացի բերքը հավաքելուց, Արարատը միջոց պիտի գտներ նաև լուսավորելու Ոսկե Հնձանը…

Նրան շնչահեղձ էր անում այն անզոր կատաղությունը, որ ահա անհրաժեշտ է անմիջապես ձեռնարկել գործի, բայց ինչի՞ց սկսել, ի՞նչ անել՝ անհայտ էր…

Զբոսանքը մոռացած, նա արագ անցավ փողոցով, գնաց դեպի գրասենյակ, տեսավ կայարանից վերադարձած բեռնատար ավտոն գրասենյակի բակում, և ցատկելով վրան, ասաց մեքենան վարող երիտասարդին, որ պատրաստվում էր գնալ տուն.

— Նստիր: Եվ քշիր:

— Ո՞ւր,— զարմացավ երիտասարդը:

— Ուր որ ուզում ես: Եվ չափազանց արագ: Որքան որ կարող ես:

Երիտասարդը նայեց նրան՝ առանց հասկանալու:

Համբերությունից ելած, Արարատը բացականչեց.

— Քշիր վերջապես դեպի Կլոր Այգին…

Գլուխն օրորելով, երիտասարդը գործի գցեց մեքենան, և ավտոն սլացավ խելահեղ հոնդոցով:

Դուրս գալով գյուղից, Արարատը, շարունակ ավտոյի մեջ կանգնած, քաշեց, բաց արեց օձիքը և խորը շունչ առավ:

Ավտոն սլանում էր սրընթաց, օդն ուժեղ խփվում էր երիտասարդի երեսին և կրծքին, այգիների պատերի ետևից դուրս տարածված ճյուղերը և սաղարթները դաժան շրմփոցով մտրակում էին նրա երեսը, ձաղկում: Ավտոյում, նրա շուրջը, լցվում էին պոկված մրգեր և տերևներ, նա իր շրթունքների վրա զգում էր տերևների դառնահամը: Այդ կատաղած երթը հաճույք էր պատճառում Արարատին, հանգստացնում էր նրան:

Երբ հասան Կլոր Այգու մոտ, Արարատը կռացավ կաբինի լուսամուտի վրա և բղավեց երիտասարդին.

— Քշիր դեպի սև խաղողի մեծ այգիները: Եվ ավելի արագ:

Ավտոն շեշտակի շրջադարձ կատարեց և ետ դարձավ: Իսկ սև խաղողի մեծ այգիների մոտ Արարատը նորից ձայն տվեց:

— Հին այգիները: Արա՛գ:

Երկար ժամանակ շարունակում էր խելագար արշավը: Արարատը մերթ ընդ մերթ կռանում էր դեպի մեքենան վարողը և բղավում.

— Հեռու այգիները: Արա՛գ:

— Նոր այգիները: Արա՛գ:

— Ուր որ ուզում ես: Արա՛գ:

Ճանապարհի փոշին անթափանց ամպի պես կանգնում էր ավտոյի ետևից՝ ահագին տարածության վրա: Թվում էր, թե ավտոն այրվող մի գազան էր, որ խելահեղ սլանում էր փրկվելու՝ ետևում թողնելով իր ծուխը:

Արարատը հևում էր բավականությունից, նրա կուրծքն արագ վեր ու վար էր անում, նրա փոքրիկ, սուր քիթն ագահությամբ կլանում էր արշավող օդը: Այժմ նա բավական հանգստացել էր, և ճյուղերն ու սաղարթներն այժմ անասելի ցավ էին պատճառում նրան: Երբեմն տեսնելով սրընթաց մոտեցող որևէ մեծ ճյուղ, նա կռացնում էր գլուխը: Ակներևաբար, նա շուտով վերջ էր տալու այդ անիմաստ արշավին:

Բայց հանկարծ, ինչպես կոկոնը, որ ճեղքվում է մի գիշերում, և ծաղիկը, որ բացվում է միանգամից, նրա գլխում փայլատակեց վաղուց սպասված միտքը:

— Քշի՛ր,— որոտաց նա,— քշի՛ր ուղիղ Արծաթաղբյուր: Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ...

Սրտապատառ ուրախությունից նա չգիտեր ինչ անել: Այժմ, երբ ճյուղերը և սաղարթները նորից խփվեցին նրան, նա նորից ոչինչ չզգաց: Յուրաքանչյուր հարվածի հետ նա ծիծաղում էր ուրախ և միայն մի բառ էր շշնջում անհամբեր.

— Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ…

Մեքենան վարողին թվաց, թե Արարատը հարբած է. նա կասկածով ետ նայեց կաբինի լուսամուտից: Սակայն Արարատի աչքերը հստակ էին և պայծառ, այնտեղ նստած էր միտքը, մտահղացումը, մտադրությունը: Հարբած էին նրա միայն շրթունքները, որ շարունակում էին կրկնել անդադար, ագահ, չբավարարված.

— Շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ...

Գլուխ երրորդ

1

Ոսկե Հնձանի արևի տակ Անահիտը վայելում էր իր աղջկությունը: Շուրջը կատաղի ամառ էր: Օդը նման էր լճացած եփ ջրի, որի հատակին ապրում էր բնությունը: Ողջ այգեստանն իր այգիներով և գյուղերով լուռ անշարժացել էր վիթխարի շոգի մեջ: Որտե՞ղ էին մարդիկ, որտե՞ղ էին կենդանիները և թռչունները՝ ոչինչ չէր երևում: Միայն որևէ արևկող պատի տակ՝ այգու կամ տան, փափուկ փոշու մեջ կիսովին թաղված, մրափում էին հավերը: Ուրիշ հավեր, նրանց մոտ կանգնած, կտուցները մերթ-մերթ քսում էին քարերին աջ ու ձախ, սրելով կարծես սուսերներ, բայց շոգից ծուլանալով գործի դնել դրանք՝ քուջուջի կամ կռվի համար: Պատահականորեն պոռթկացող կարճ քամին, բոցի պես հրաշունչ, շուռ էր տալիս մեջքով դեպի այդ կողմ կանգնածների փետուրները: Անշարժ կանգնել էր մի հավ՝ փոքր ու սև, որ կարծես մեծ հավի խանձված մնացորդ լիներ: Նրա փետուրներն արևից փայլում էին մուգ կապույտ: Իսկ աքաղաղը, որ իր կարմիր, դեղին և սև փետուրներով նման էր կրակի, բոցի և ծխի, շրջում էր վեհ ու բարձրաքայլ և երբեմն մոտենալով հավերից մեկնումեկին, սուր կտուցով քրքրում էր նրա գլխի փետուրները:

Եվ շուրջը կատաղի ամառ էր: Շոգը և լույսը կարծես խորտակել էին իրենց կաշկանդող բոլոր դարպասները, պարիսպները, ամբարտակները և ահռելիորեն հեղեղել էին աշխարհը: Բոլոր առարկաներն այնպես էին ջեռացել, որ անհնար էր ձեռք տալ դրանց: Գետինը ոտքերի տակ նման էր հնոցի կտուրի: Պատերն ու պարիսպներն ստացել էին սպիտակավուն երանգ, կարծես գունաթափվել էին արևից կամ շիկացել սպիտակության աստիճան: Երկար նայել արևով ողողված որևէ առարկայի՝ անկարելի էր. կատաղի լույսից շլանում էին աչքերը, շաղվում, մթագնում:

Անհնար էր պատկերացնել, որ այդ ջեռ ամառվա բոլոր կողմերում կային ստվերախիտ, զով անկյուններ՝ թանաքի պես սև: Անհնար էր հավատալ, որ այդ տեղերով հոսող փոքրիկ ջրերը, դուրս գալով արևի տակ, չէին գոլորշիանում անմիջապես՝ թողնելով իրենց հունի չոր խճաքարերը, այլ մի կերպ հասնում էին մինչև հետևյալ ստվերային հանգրվանը և նոր ուժ ստացած շարունակում էին գնալ: Օդն այդ մութ անկյուններում զով էր, համարյա սառը:

Մերթ-մերթ, այդ տեղերում,— լիներ դա պատի ստվերում, թե ծառերի տակ,— հանդիպում էին պառկած և աչքերը փակ շներ, որոնք հևում էին արագ-արագ: Թվում էր, թե դրանք կիսախեղդ եղածներ են՝ արևի լճից ափ շպրտված: Սակայն, երբ որևէ ճանճ չափից ավելի էր խանգարում նրանց հանգիստը, նրանք հանկարծ վեր էին բարձրացնում իրենց գլուխը, բաց էին անում բերանը և

մկրատի պես չրխկացնելով ատամները, նորից շարունակում էին թուլացած նիրհել, չստուգելով անգամ՝ սատկեցրի՞ն ճանճը, թե ոչ:

Իսկ շուրջը կատաղի ամառ էր: Ոչ մի կենդանի, ոչ մի թռչուն, ոչ մի միջատ չէր համարձակվում իր թաքստոցից դուրս գալ արևի տակ: Միայն օձերն էին, որ հազիվ լսելի խշշացնելով մանր խճաքարերը կամ չոր խոտը, գալարումներով սողում էին մերթ այստեղ, մերթ այնտեղ:

Ճպուռները նրանց մոտ անտարբեր շարունակում էին սղոցել իրենց երգը: Մի քիչ հեռվում կանգնած ոչ բարձր ծառերի խումբն օրորվում էր վայրկենական քամուց, սաղարթները ճռճվում էին, և դրանց արանքից, երկար և սուր ասեղների ոսկեգույնի խուրձով, պսպղում էր ինչ-որ ապակի՝ երևի հարևան գյուղի մի կտուրի վրա:

Եվ շուրջը կատաղի ամառ էր: Այգիներում հասնում էր խաղողը: Ողկույզներն իրենց երկար և պարանի պես ամուր որթերով հողին կապված, չէին վախենում արևի ցամաքեցնող շնչից: Լայն տերևների տակ պատսպարված խոնավ գետինն իր հյութն էր ուղարկում խաղողահատիկներին, որոնք օր-օրի-վրա, ժամ առ ժամ, րոպե առ րոպե ավելի էին լցվում, դառնում փայլուն: Իսկ արևը, դրանց բարակ և թափանցիկ մաշկի տակ կուտակվող հյութը դուրս կորզելու անզոր, իր հրաբորբոք զայրույթով միայն հասունացնում և քաղցրացնում էր այն:

Ինչպես գյուղերում և այգիներում, այնպես էլ ճանապարհների վրա, ոչ ոք չէր երևում: Ամեն անկյան կամ շրջադարձի մոտ թվում էր, թե ահա, հանկարծակի և միանգամից, պիտի երևար այգեստանի անհետացած ողջ բնակչությունը: Սակայն ոչ ոք չկար, ոչ ոք չէր երևում, և արևը շարունակում էր թափվել թանձր, առատ, համատարած…

Եվ ահա, Ոսկե Հնձանի այդ համատարած լռության և անշարժության միջով, հանկարծակի ծիծաղով և աղմուկով, անցնում էր Անահիտը՝ որպես Ոսկե Հնձանի սքանչելի տեսիլ: Իսկ նրա ետևից, կարծես նրա քայլերից վերակենդանանալով, զվարթ թնդում էր ճանապարհը կամ այգին, ներս էին լցվում երիտասարդ տղաներ կամ աղջիկներ, կամ իրենց տարիքը մոռացած հասակավոր կանայք,— նայած թե Ոսկե Հնձանի որ կողմումն էր տեղի ունենում այդ: Իսկ այդ տեղի էր ունենում բոլոր կողմերում: Թվում էր, թե Անահիտը բազմապատկվել էր և միաժամանակ գտնվում էր բոլոր այգիներում, քայլում էր բոլոր ճանապարհներով:

Մի այգում, որով անցնում էր մի լայն ջրանցք, համարյա առվակ, և որտեղ խաղաղ էր ամեն ինչ, հանկարծ թփերի ետևից ծիծաղով և քրքիջով ջուրն էին ցատկում մի քանի աղջիկներ, մեկը՝ կուրացնող սպիտակ մարմնով, մյուսները թուխ՝ ինչպես հին պղինձ կամ խամր ոսկի, շաֆրանագույն՝ ինչպես դեղձ, վարդագույն՝ ինչպես լուսաբաց… Մի քանի րոպե նրանք ձեռքերի խառը շարժումներով տակնուվրա էին անում առվակը՝ իրենք խառնվելով ջրի սպիտակ փրփուրին և արծաթե ցայտերին:

Անահիտը, ալեկոծվող ջրից ավելի սպիտակ, կորչում էր դրա մեջ: Երբ հետո ջուրը խաղաղվում էր, աղջիկները դրա անշարժ մակերեսի վրա մեջքից հետ վեր բարձրացած, ժպիտով նայում էին իրար: Նրանց թևերի, ուսերի, կրծքի վրա, մուգ և բաց երանգներով, տարբերվում էին հագուստով ծածկվող և չծածկվող մասերը, որը և նրանց մերկությունը դարձնում էր այնքան հմայիչ: Իսկ Անահիտը, ամբողջ մարմնով անբիծ սպիտակ, գրավիչ էր բոլորից առավել:

Ընկերուհիներից ծածուկ, առվակի մի հեռու մասում ելնելով ափ, նա ցնցվում էր ժպիտով, և ջրի թափանցիկ կաթիլներն ուլունքների նման ցած գլորվելով նրա մարմնի վրայով, փխլվում և նեղ շիթերով սահում էին նրա սլացիկ սրունքներն ի վար՝ լիզելով ողորկ մորթը:

Մինչդեռ ընկերուհիներն առանց հագուստի դեսուդեն ընկած փնտրում էին նրան, նա արագ հագնելով շրջազգեստը մերկ մարմնի վրա, անհետանում էր այդտեղից և հայտնվում էր այգեստանի մի այլ մասում՝ գյուղի հակադիր կողմում: Երիտասարդների խումբը ծառերի տակ նստոտած, վեր էր ցատկում տեղից և հիացմունքի ուրախ բացականչություններով ողջունում էր նրան: Իսկ նա անմիջապես առաջարկում էր նրանց՝ պահմտոցի խաղալ՝ գտնողին խոստանալով դառնալ նրա կինը: Մոտենալով նրանցից յուրաքանչյուրին, նա իր նուրբ, երկար մատների հպումով փակում էր կոպերը, ապա անհետանում: Երիտասարդները մի պահ մնում էին այդպես կանգնած, աչքերը փակ, կարծես թովված: Ապա սթափվում էին միանգամից և սկսում էին փնտրել: Թփերի արբեցնող բույրն աղջկա շնչառությունն էր թվում, սաղարթների տակից երևացող սև խաղողահատիկները նրա աչքերն էին թվում, առաջին իսկ կարմիր խաղողահատիկը նրա բերանն էր թվում:

Իսկ նույն պահին Անահիտն արդեն գտնվում էր չափազանց հեռու: Մանր ու մեծ երեխաների բազմամարդ խումբն ընկուզենու ստվերում հավաքած, նա պատմում էր անհավատալի և գեղեցիկ պատմություններ, որոնք նա ինքը չէր լսել ոչ ոքից: Երեխաներն իրենց խելոք աչքերի ուշադիր հայացքով ունկնդրում էին նրան: Իսկ երբ նա ավարտում էր, նրանք սկսում էին անասելի ճիչ և աղմուկով խնդրել էլի նորանոր պատմություններ: Անահիտը երբեմն պատմում էր, իսկ երբեմն խաբելով, թե իսկույն կվերադառնա, չքանում էր ծառերի ետևում:

Քիչ հետո նա քայլում էր մի հեռու ճանապարհով գնացող կանանց խմբի հետ, մասնակցելով նրանց լուրջ ու մտահոգված ինչ-որ խոսակցությանը: Մեկին ուրախացնելով, մյուսին համոզելով, երրորդին բարկացնելով, բայց բոլորից սիրվելով, նա սկսում էր աննկատելիորեն ետ մնալ և ապա կորչում էր:

Գյուղի գլխավոր փողոցի ստվերում, քարերի վրա նստոտած տղամարդիկ հանկարծ նկատում էին, որ իրենց միջև նստած է Անահիտը և աննկատելի խառնվել է խոսակցությանը:

Ոսկե Հնձանում բոլորին էր սիրում նա, և բոլորն էին սիրում նրան: Ամեն մեկն ուզում էր իր մոտ տեսնել նրան և ոչ ոք չէր զգում նրա պակասությունը: Սայլապանը սայլի վրա նստած, ճիպոտը եզների վրա դանդաղ ճոճելիս, հանկարծ ետ էր նայում և տեսնում, որ սայլի վրա նստած է Անահիտը: Երիտասարդը գյուղի ծայրին, գետնի վրա բերանքսիվար պառկած և քթի տակ մի երգ երգելիս, հանկարծ նկատում էր աղջկան իր կողքին նստած, իրեն ձայնակցելիս: Փողոցի ծառերից մեկի տակ կանգնած և գործնականորեն զրուցող երկու տղամարդ, գլուխները վեր բարձրացնելիս, հանկարծ նկատում էին աղջկան՝ ճյուղերից մեկի վրա նստած, ոտները մտածկոտ ճոճելիս:

Ոսկե Հնձանի նման Անահիտն ամեն տեղ էր, նա տարածված էր հորիզոնից հորիզոն, նա պատկանում էր բոլորին: Միայն Արարատը և Ցոլակն էին, որոնց մոտ նա չկար: Բավական էր, որ նա տեսներ նրանցից մեկնումեկին, իսկույն վար էր ցատկում ճյուղից և հպարտ հեռանում, կամ ընդհատում էր իր զրույցը մի պառավի հետ և լուրջ ու զուսպ նայում, կամ եթե դեմառդեմ էր գալիս՝ չթաքցրած տհաճությամբ թեքում էր ճանապարհը: Մի անգամ միայն նա կանգ առավ, նայեց դիմացից եկող Արարատի երեսին, ապա՝ հեռագրասյուներից մեկի ծայրին, որտեղ, ինչպես և մյուսների վրա, լույսի ակնկալումով, վաղուց ի վեր ամրացված էին լամպեր, և աննկատելի ծիծաղեց: Ճիշտ է, ողջ գյուղը խոսում էր Արծաթաղբյուրի առվի և դրա վրա կառուցվող միկրո-էլեկտրակայանի մասին, բայց լույս դեռ չկար և ոչ ոք չէր կարող ասել, թե երբ էր լինելու այն: Մի ուրիշ անգամ ևս Անահիտն ստիպվեց կանգ առնել: Այս անգամ Ցոլակն էր առիթը: Երիտասարդն ինքը կանգնեցրեց աղջկան և հարցրեց, թե ինչո՞ւ է նա իրենից խուսափում և չի՞ մոռացել արդյոք իր խոստումը: Անահիտը սառը և խիստ պատասխանեց, որ չի մոռացել ոչինչ, և որ լավ կանեն, եթե հանգիստ թողնեն նրան:

Բայց ահա մի օր, երբ Անահիտն ամեն անգամից ավելի ուրախ և ծիծաղկոտ վազում էր թփերի արանքով՝ խուսափելով մեկից, թե հետապնդելով մեկին, հանկարծ կանգ առավ քարացած: Նա չտխրեց, այլ շփոթվեց, կարմրեց և խոնարհեց գլուխը:

Խաղողը հասել էր:

2

Արևի տակ, գյուղից դեպի այգիներն էին գնում Արարատը և գյուղի համարյա ողջ բնակչությունը: Տղամարդիկ, կանայք, հասակավորներ, երեխաներ, երիտասարդներ՝ բոլորը փոքր ու մեծ խմբերով գալիս էին անընդհատ: Խոսակցությունների հորդ առուն ձգվել էր երկար տարածության վրա:

Ճանապարհը, որով գնում էին նրանք, լայն էր և անցնում էր այգիների բարձր պարիսպների արանքով: Այն տանում էր դեպի Կլոր Այգի: Բարձր պարիսպները երկու կողմից թաքցրել էին ամեն մի բուսականություն, ճանապարհը նման էր գորշ հողից սարքված մեծ փողրակի:

Կլոր Այգին, մի ժամանակ այնպես բազմամարդ, այժմ անմարդ էր բոլորովին: Դրա ծառախմբերի բազմաթիվ ստվերները քաշվել-կծկվել էին բների տակ՝ տարածությունը թողնելով արևին: Այգու հեռավոր սահմաններում, խիտ թփերի և ծառերի ետևից հազիվ երևալով և գետնից հազիվ զանազանվելով, նկատվում էին հողե պարիսպները: Կարմիր դարպասը ծածկված էր՝ կարծես ի նշան մի մեծ ընդմիջման: Եվ ահա, հանկարծ, դրա փեղկերը ետ գնացին և ապա լայն բացվեցին: Գյուղացիները լցվեցին Կլոր Այգի:

Արարատը մտավ ամենից առաջ: Տեսարանը կախարդեց նրա հայացքը: Դիմացը, մի քանի քայլ ազատ տարածությունից այն կողմ, փռված էր Կլոր Այգու ամենահիանալի մասը, այսպես կոչված՝ Տեսակների թմբերը: Այնտեղ կային բոլոր տեսակի խաղողի թփեր՝ իբրև մեծ այգու ճոխ բովանդակության, նախանվագ: Ծիածանի բոլոր գույներով վառվում էին թմբերի երկար շարքերը, որ ձգվում էին դեպի այգու խորքը: Տերևների կանաչագույնը տեղի էր տվել խաղողի տեսակների բազմերանգությանը: Հողի անշուք գորշագույնը զարդարվել էր ողկույզների գունագեղությամբ:

Արծաթափայլ սկուտեղը ձեռքին, մոտ եկավ մի երիտասարդ: Սկուտեղի սկավառակն արևի տակ շողշողում էր հազարավոր ճառագայթներով: Նայել անկարելի էր, աչքերն իսկույն լցվում էին արցունքով, փակվում: Երիտասարդն սկուտեղը տվեց մի ուրիշի՝ առջևում կանգնածներին ուղարկելու համար: Սկուտեղն անցավ ձեռքից ձեռք, դրա կուրացնող մակերեսն սկսեց շողալ մերթ աջ, մերթ ձախ, վերև, ներքև՝ իր ճառագայթների ուժգին խուրձն ուղարկելով դեպի այգու այս կամ այն ստվերոտ անկյունը, լուսավորելով որևէ ծառի բուն, խոտի մեջ թաքնված ծաղիկ կամ փայլելով նույնիսկ խաղողի արևոտ թփերի վրա:

Առաջին հայացքից դեռ անհնար էր որոշել, թե որքան խաղող էր հասնում թփերի վրա: Սակայն հետո, երբ աչքը վարժվում էր տարբերել ողկույզների կանաչը տերևների կանաչից, բացվում էր անհավատալի տեսարան — ողկույզներն ավելի շատ էին, քան տերևները:

Ուրիշ կողմերում, որտեղ սև էր խաղողը, թփերի շարքերը կանգնած էին նոր վարած սևահողի ակոսների պես: Ուրիշ կողմերում, որտեղ վարդագույն էր խաղողը, այգին նման էր գետնի վրա իջած ծիրանափայլ ամպի: Ուրիշ կողմերում, որտեղ ոսկեգույն էր խաղողը, թմբերը նման էին լերդացած մեղրի: Ուրիշ կողմերում, որտեղ կարմիր էր խաղողը, ողկույզները նման էին քարացած գինու…

Կային թփեր, որտեղ ամեն սև ողկույզ պատած էր սպիտակ փառով՝ կարծես եղյամով: Կային թփեր, որտեղ սև ողկույզն ուներ մուգ կապույտ փայլ, ինչպես վաղ լուսաբաց: Կային թփեր, որտեղ դեղին հատիկները նման էին արևի կաթիլների: Կային թփեր, որտեղ թափանցիկ հատիկները նման էին անձրևի կաթիլների:

Թփերի շարքերը, ամռան սկզբին բոլորն իրար նման, այժմ զանազանվում էին տասնյակ երանգներով: Յուրաքանչյուր թուփ, ամռան սկզբին այնքան թեթև, որ քամին ազատ շարժում էր դրա որթերը, այժմ այնքան էր ծանրացել, որ կարծես դրանից կախված լինեին արճճե գնդակների բազմաթիվ խոպոպներ:

Արարատը վերցրեց սկուտեղը, ետ դարձավ, նայեց հավաքվածների բազմությանը: Այնտեղից առանձնանալով, երիտասարդին մոտեցան մի քանի փորձված հասակավորներ՝ տղամարդ և կին: Արարատի ետևից նրանք մտան թմբերի շարքերի մեջ և սկսեցին քաղել յուրաքանչյուր տեսակից մեկական ողկույզ: Երկար ժամանակ նրանք անցնում էին թմբից թումբ: Թփերի վրա կռանալիս նրանք հիացմունքով օրորում էին գլուխները և մի պահ մոռանալով գործը, դիտում էին լուռ և անթարթ:

Վերջապես նրանք վերադարձան: Արարատը, որ գալիս էր առջևից, զույգ ձեռքով բարձր բռնել էր սկուտեղը: Բազմությունն այգու եզրին հավաքված, նույնպես նայում էր լուռ և անթարթ: Սպիտակահեր ծերունիների, մայրացած կանանց, թեթև հագուստներով աղջիկների, գանգրահեր երիտասարդների, ծնկաբաց պատանիների և երեխաների հայացքն ուղղված էր դեպի սկուտեղը: Այն այլևս չէր փայլում կուրացնող ճառագայթներով: Այժմ դրա վրա շողշողում էին խառնիխուռն դիզված, իրար խճճված բազմատեսակ և բազմագույն ողկույզները:

Այնտեղ կային հատիկներ՝ ցողի պես թափանցիկ: Դրանց խորքում երևում էին մանր կորիզները: Կային կանաչ հատիկներ, որ նման էին զմրուխտի: Կային դեղինները՝ խոշոր սաթի պես: Կարմիր հատիկներ կային՝ համբույրների նման: Կային սև և խոշոր՝ ինչպես եզան աչք: Կային սև և մանր՝ ինչպես թռչունի աչք: Կային շատ ավելի մանր և վարդագույն՝ դեռահաս պտուկների պես: Կային մեծ և վարդագույն՝ այրվող ածուխի պես: Կարմիր մանր հատիկները նման էին մարջանի: Ծխագույն հատիկները՝ չհալչող կարկուտի: Ոսկեգույն հատիկները՝ անճառագայթ աստղերի:

Կային նեղ և երկար հատիկներ՝ աղջկա մատների նման: Կային երկարավուն՝ աղավնու ձվի նման: Կային կլոր՝ ինչպես գինդեր: Խաղողահատիկները ողկույզների վրա նստած էին խիտ կամ ցանցառ, պիրկ կամ թույլ: Ողկույզներ կային, որտեղ կանաչ հատիկներն այնպես էին սեղմվել իրար, որ բոլորը միասին կազմել էին մի միրգ՝ ալիքավոր մակերեսով: Կային ողկույզներ, որտեղ յուրաքանչյուր հատիկը կախվել էր ազատ՝ ողկույզի վերևում խոշոր, իսկ դեպի ներքև՝ շարունակ ավելի մանր, վերևում՝ սպիտակ, իսկ դեպի ներքև՝ հետզհետե մուգ, և վերջում՝ արնագույն: Կային սև ողկույզներ՝ պատանու գանգուրների նման: Սկուտեղն ամբողջովին նման էր արծաթե շրջանակի մեջ առնված հազարավոր ակներով զարդարանքի:

Բազմությունը հիացած բացականչեց: Եվ մինչդեռ Ոսկե Հնձանի բնակիչներն սքանչացած նայում էին հողի հասուն բերքին, Արարատը մոտ կանչեց մի քանի երեխաների և սկուտեղը տալով նրանց, ասաց.

— Գտանեք Նահապետին և կվերադառնաք հայտնելու, թե ինչ ասաց նա:

Արևոտ և փշոտ ճանապարհով երեխաները գնացին: Շրջապատի գորշության մեջ նրանց փոքրիկ խումբը քայլում էր զվարթ և գունագեղ: Չհոգնելու համար նրանք ծանր սկուտեղը բռնել էին բոլորը միասին: Նրանց մանկական գեղեցիկ ծնկները ծալվում և բացվում էին խառնիխուռն և փոխնիփոխ: Նրանց աչքերը նման էին սև խաղողի՝ սկուտեղից վերցրած: Նրանց շրթունքները նման էին կարմիր խաղողի՝ սկուտեղից վերցրած: Նրանց ձեռները սկուտեղի պռունկներին՝ նման էին փոքրիկ ողկույզների: Գնում էին նրանք լուրջ և ուշադիր՝ միրգը բարձր պահած:

Ճանապարհի երկու կողմերում, պարիսպների ետևից, խտաշար ծառերի վրայից, նրանց ողջունում էին դեղձերը՝ հասակակից երեխաների այտերի պես: Ուրիշ ծառերի վրա անհաշիվ դեղին սալորները նման էին դեղձանիկների: Ուրիշ ծառերի վրա սև սալորները նման էին ծտերի: Ուրիշ ծառերի վրա կարմիր սալորները նման էին թափանցիկ ապակյա գնդերի: Ուրիշ ծառերի վրա սպիտակ սալորները նման էին ձվիկների: Դեղին տանձերը կախվել էին վառվող էլեկտրական լամպերի պես: Խնձորները կախվել էին իրենց կարմիր երեսները միևնույն կողմը դարձրած, կարծես դրանց վրա, դիմացից, ընկել էր կարմիր լույս: Թզերը կախվել էին հազիվ նկատելի՝ համեստորեն ամաչելով իրենց անմրցելի քաղցրությունից, և նման էին ընկույզների: Իրենց հերթին, ընկույզները նման էին կանաչ սալորների: Մեծ և կարմիր նռերը նման էին ճյուղերի և տերևների արանքներում խճճված օդապարիկների:

Եվ երեխաներն իրենք, ճանապարհի և պարիսպների գորշության մեջ, կարծես նույնպիսի նորահաս և համեղ միրգ էին, ինչպիսին տանում էին նրանք կամ ինչպիսին կախվել էր ծառերից: Փոշին՝ շիկացած-սպիտակ, չէր բարձրանում նրանց ոտքերի տակից և չէր նստում նրանց մերկ սրունքների վրա: Այն միայն խուլ խփվում էր և տեղի տալիս:

Սկուտեղը տարածում էր արբեցնող բույրեր: Այն կարծես խտացրել էր իր մեջ այն ուժեղ բույրը, որով լիուլի հագեցած էր ողջ մթնոլորտը: Երեխաների նման առողջ և թարմ, խաղողը գնում էր դեպի գյուղ:

Մտնելով գլխավոր փողոց, երեխաներն իրենց երթը շարունակեցին բացարձակ անմարդության և լռության մեջ: Ստվերներով շքեղացած այդ փողոցը կարծես հանգիստ շունչ առավ՝ երկարատև սպասումից թեթևացած: Երեխաների նման գեղեցիկ և քաղցր, խաղողը մտավ գյուղ:

Նահապետի աշտարակի սանդուղքով վեր բարձրանալիս սկուտեղը վերցրեց երեխաներից ամենաուժեղը և հաղթանդամը: Նրա փոքրիկ ոտքերի և թևերի վրա մկանները պրկվեցին կլոր և ամուր: Նրա ետևից սանդուղքն ի վեր ձգվեց երեխաների շղթան: Երեխաների պես հյութեղ և կենսալի, խաղողը բարձրացավ աշտարակ:

Նահապետը, որ գորգի վրա նստած և անկողնի ծալքին թիկն տված՝ ծխամորճ էր ծխում, վար դրեց ծխամորճը, նայեց ուրախությունից ջրափայլ աչքերով և իր սպիտակ բեղերի տակից ժպտաց ծերունու բարի ժպիտով: Առաջին երեխան սկուտեղը դրեց նրա առջև:

Նահապետը ոտքի ելավ: Զույգ ձեռքերով նա բռնեց առաջին երեխայի գլուխը և համբուրեց աչքերը: Հետզհետե մոտենալով բոլոր երեխաներին նա համբուրեց նրանց աչքերը, ճակատը, մազերը, կարծես նրանք լինեին խաղողը, որի մասին նա պիտի ասեր իր խոսքը: Հետո նա նստեց և հրավիրեց երեխաներին՝ նույնպես նստել: Նահապետի նման նրանք ևս նստեցին ծալապատիկ: Սկուտեղը նրանց կենտրոնում սպասում էր:

Նահապետը մոտեցրեց իր չորացած, ջղերով և երակներով ցանցված սրճագույն ձեռքը, պոկեց մի խաղողահատիկ և ճաշակեց: Հետո պոկեց մի ուրիշ խաղողահատիկ՝ ուրիշ ողկույզից: Այդպես նա փորձեց բոլոր տեսակները: Երեխաներն ուշադիր և խելոք հետևում էին նրա շարժումներին:

— Կերեք,— ասաց Նահապետը:

Մի վայրկյանում բազմաթիվ ձեռքեր, սպիտակ կամ թուխ, փոքրիկ և կլորիկ, իջան սկուտեղի վրա և նորից բարձրացան: Սկուտեղը մերկացավ: Ողկույզները օդի մեջ կախված, սկսեցին մերկանալ հատիկներից: Ծիծաղով և բացականչություններով, հիացած խոսքերի կրճատ փոխանակությամբ, երեխաները կերան խաղողը՝ հատիկները պոկելով միմյանց տարբերատեսակ ողկույզներից: Ավարտելով, բոլորը միանգամից ոտքի կանգնեցին: Ամենաուժեղը և հաղթանդամը, խմբի առջևում կանգնած, հարցական նայեց Նահապետին:

— Քաղեցեք,— ասաց Նահապետը:

4

Խաղողահասի օրն Անահիտն այգիներից վերադառնում էր գյուղ: Նորից վերակենդանացել էր Ոսկե Հնձանը, ծիծաղից և խոսակցություններից թնդում էին այգիները, ավտոների հռնդոցից և սայլերի ճռինչներից դժժում էին ճանապարհները: Ամեն տեղ լցված էր մարդկանցով, ամեն քայլափոխի հանդիպում էին գյուղ վերադարձողների մեծ և փոքր խմբեր: Արևը մոտենում էր մայրամուտին: Հակառակ կողմից կրնկակոխ առաջանում էր մթությունը: Այգիների և այն ճանապարհի վրա, որով Անահիտն էր գալիս, փռվել էր ստվերախիտ կիսալույսը: Բարձրում, օդի մեջ, զգացվում էին արևի հորիզոնական ճառագայթները, որոնք սակայն չհանդիպելով որևէ առարկայի, սահում-անցնում էին այգեստանի վրայով:

Քիչ հետո ճանապարհը վերջացավ գյուղի մի փողոցով, որն ուղղակի դուրս եկավ գլխավոր փողոցի վրա: Այնտեղ արդեն լույսն ավելի մուգ էր, խավարն ավելի խիտ: Պատերի և ծառերի տակ արդեն զգացվում էր վերահաս երեկոն: Հեռագրասյուների վրայից կույր աչքերի պես նայում էին էլեկտրական անլույս լամպերը: Աղջիկը նայեց դրանց անիմաստ շարքին, և նրա վերևի շրթունքի անկյունը տխուր թրթռաց:

Հազիվ մի քանի քայլ արած, Անահիտի առջև կանգնեց Ցոլակը՝ ժպտերես, ուրախ, տոնական:

— Բարև, Անահիտ,— ասաց նա՝ բռնելով աղջկա ձեռքը:

Առաջին անգամ իր երիտասարդ կյանքում Անահիտը կարկամեց և ուժ չգտավ պատասխանելու:

— Խաղողը հասել է,— խռովահույզ ձայնով ասաց Ցոլակը:

Անահիտը խոնարհեց գլուխը: Երիտասարդը նայեց նրա մազերին, նայեց ձեռքին, որ անկամ մնացել էր իր ձեռքի մեջ:

— Գնանք մեր այգին, Անահիտ,— շշնջաց Ցոլակը:

Աղջիկը նայեց վեր, նրան:

— Լավ,— ասաց նա կամացուկ,— միայն թույլ տուր գնամ տուն՝ հագուստս փոխելու…

— Ոչ,— բացականչեց երիտասարդը՝ շտապ և անհամբեր,— գնանք՝ ինչպես որ կաս…

Իսկ աղջիկը, շոգից նեղված, հագել էր միայն մի սպիտակ զգեստ՝ մերկ մարմնի վրա: Փոխանակ ծածկելու, այդ հագուստն ավելի էր ընդգծում նրա մարմնաձևերը,— իրանը՝ բարձր և նեղ, կուրծքը՝ փոքր և ցայտուն: Նրա սրունքները և թևերը բաց էին, սպիտակ և ջերմ:

— Գնանք,— հլու ենթարկվեց Անահիտը:

Եվ Ցոլակը տարավ նրան:

5

Անսահման ուրախությունից հրճվում էր Ցոլակի հոգին: Իր բախտից արբած, նա չգիտեր, թե ինչ էր անում: Նա թողնում էր Անահիտին, վազում էր առաջ, ապա կանգ առնելով նայում էր, թե ինչպես էր գալիս աղջիկը դեպի իրեն:

Եվ որպեսզի աղջկա ոտները չցավեն նա կռանում և ճանապարհից մի կողմ էր շպրտում հանդիպող քարերը և կոշտերը: Աղջիկն առաջանում էր, իսկ Ցոլակը ետ-ետ գնալով, շարունակում էր մաքրել ճանապարհը: Նա այնքան ուրախ էր և աշխույժ, որ իր տրամադրությամբ վարակեց նաև Անահիտին: Աղջիկն սկզբում մի քանի անգամ ժպտաց ներողամիտ, ապա սկսեց մասնակցել երիտասարդի գժություններին: Տեսնելով որևէ չնչին քարակտոր, թեկուզ ընկույզի չափ, նա կանգ էր առնում և հրաժարվում էր գնալ առաջ, մինչև Ցոլակը՝ մոտ վազելով, չվերցներ այն և հեռու չշպրտեր: Ըստ երևույթին, ընդգծված զվարթությամբ աղջիկն ուզում էր ծածկել իր շփոթությունը:

Ճանապարհի վրա երևաց մի մեծ քար՝ կիսով չափ հողի մեջ թաղված: Անիվների հետքերը շրջանցել էին դրա կողքերով:

Ուրախանալով հարմար առիթից, Ցոլակը պատրաստվեց իր ուժը ցույց տալ աղջկան: Կռանալով քարի վրա, նա զույգ ձեռքերով ցնցեց այն, պոկեց գետնից և բարձրացնելով իր գլխից վերև, շպրտեց մի կողմ: Ճանապարհի սպիտակ փոշու մեջ մնաց խոնավ ու մուգ մի փոս: Անահիտն իր փոքրիկ կիսակոշիկներով անցավ այդ փոսի միջով, կարծես իրոք, ուրիշ ճանապարհ չկար:

Այդտեղից սկսած, Ցոլակին պաշարեց միայն մի միտք, մի կատաղի տենչ՝ նորից և նորից իր ուժը ցույց տալ աղջկան: Ուժը փոթորկում էր նրան, ուզում էր ժայթքել դուրս: Անհանգիստ աչքերով նա նայում էր աջ ու ձախ՝ փնտրելով որևէ հարմար առարկա՝ ուժը գործադրելու: Թվում էր, թե նա կարող էր արմատախիլ անել հաստաբուն ծառերն անգամ: Սակայն ծառերը հարկավոր էին, նույնիսկ խենթության այդ պահին նա հեռու էր դրանց նույնիսկ մի ճյուղին ձեռք տալու մտքից: Բայց հարկավոր էր գտնել որևէ բան: Եվ ահա նա տեսավ այն, որին միշտ էր նայել, բայց երբեք չէր նկատել: Այդ՝ այգիներն իրարից անջատող պարիսպներն էին՝ այլևս անիմաստ, անհարկավոր, որոնք շարունակում էին փոքր ու մեծ քառանկյուններով ցանցել Ոսկե Հնձանի ընդհանուր, համատարած այգեստանը:

Կանգ առնելով, Ցոլակը հարցրեց.

— Ուզո՞ւմ ես՝ քանդեմ այս պարիսպը, Անահիտ:

— Իսկ ինչի՞ համար,— հարցրեց աղջիկը:

— Հենց այնպես:

Աղջիկը ներողամիտ ժպտաց:

— Քեզ համար, Անահիտ:

— Լավ, քանդիր,— համաձայնվեց աղջիկն անտարբեր:

Ցոլակը կատաղի նայեց պարսպին՝ ինչպես հակառակորդի, և ապա արագ ցատկելով դեպի այն, ուժեղ խփեց ուսով: Երբ հետևյալ վայրկյանին նա ետ ցատկեց՝ նայելու, պատը կանգնած էր անդրդվելի, ինչպես հարյուրամյակներ շարունակ:

Երիտասարդի անհաջողությունը տհաճություն պատճառեց աղջկան: Նա չէր ուզում տեսնել նրան պարտված: Ուստի և, արդեն գործն սկսած, Ցոլակը պետք է վերջացներ այն: Աղջիկը նայում էր լուռ, հանգիստ, անարտահայտիչ, բայց սպասողական:

Սառը քրտինքը պաշարեց Ցոլակին: Հողի այդ տձև կերտվածքն անսպասելիորեն կանգնել էր նրա սիրո առջև: Ինքնիրեն կորցրած, նա սկսեց տեղալ նորանոր հարվածներ՝ մերթ մի ուսով, մերթ մյուս: Նա սարսափում էր լսել աղջկա հեգնական ծիծաղը: Նրա ուսերն անասելի ցավում էին, բայց նա շարունակում էր իր համառ ճիգերը: Վերջապես տեսնելով, որ միևնույնն է, չի հաջողվելու, նա կանգ առավ կատաղի փնչոցով: Եվ այդ կատաղությունը, ամեն գնով հաղթելու համառ և անդառնալի ցանկությունը, փրկեց նրան: Նա մի պահ նայեց հակառակորդին՝ զուսպ և կշռող, ապա դանդաղ մոտենալով, դեմ տվեց ուսը և անշարժացավ: Թվում էր, թե նա մտածում է կամ շունչ է առնում նոր ցնցման համար: Սակայն նա շարունակում էր չշարժվել: Հագուստով ծածկված, չէր նկատվում նրա մկանների սարսափելի լարումը: Թվում էր, թե ականջը պարսպին մոտեցրած, նա ունկնդրում է: Եվ հանկարծ, պարիսպը կամացուկ ծռվեց, ծալվեց և խուլ թրմփոցով փռվեց գետնին: Բարձրացավ թանձր փոշի, որի մեջ ոչինչ չէր երևում: Իսկ երբ փոշին անցավ՝ Ցոլակը կանգնել էր հպարտ և ուրախ: Արգելքը քանդված էր: Կարելի էր շարունակել ճանապարհը:

— Երգիր,— ասաց Անահիտը,— ես միշտ լսում էի, թե ինչպես դու երգելով էիր գնում երեկոներն աշխատանքի, և լսում էի, թե ինչպես երգելով էիր վերադառնում առավոտները, երբ ես դեռ քնած էի լինում…

Ցոլակը հրճվեց: Ուրեմն աղջիկն իրեն մոռացած է եղել ոչ բոլորովին… Նա սկսեց երգել: Բայց հազիվ սկսած, նա ընդհատեց, հպարտ տարածեց ձեռքերը, ցույց տվեց աջ և ձախ, և ասաց.

— Տեսնո՞ւմ ես, Անահիտ: Այս բոլոր այգիները, որ այսպես հասել են՝ ես եմ ոռոգել…

Աղջիկը նայեց երիտասարդին, բայց հանդիպելով նրա հայացքին, շփոթված ժպտաց, շուռ տվեց գլուխը:

Լսվեց ջրի մեղմ խշշոց: Երիտասարդները նայեցին իրենց ոտքերի տակ: Դուրս գալով մի պարսպի անցքով, առվակի ջուրը, ճանապարհը կտրելով, անցնում էր լայն փռված բարակ շերտով, ապա ճանապարհի մյուս կողմում նորից հավաքվելով, հոսում էր մյուս պատի անցքով ներս: Աղջիկն ուզեց քայլելով անցնել ջուրը՝ սովորականի պես, բայց Ցոլակն իր մի ձեռքը դրեց աղջկա մեջքին, մյուսը փաթաթեց մերկ սրունքներով և գետնից պոկեց նրան: Հավասարակշռությունը չկորցնելու համար Անահիտը զույգ թևերով փարվեց երիտասարդի պարանոցին: Եվ այդպես գրկախառնված, աղջիկը՝ փակ աչքերով, Ցոլակը՝ պղտորված հայացքով, ջուրն անցան: Սակայն նրանցից ոչ մեկը չուզեց նկատել այդ: Ծառերի խշշոցը նրանք սիրով ընդունեցին ջրի աղմուկի տեղ, գետնի փոշին

սիրով ընդունեցին հոսող ջրի տեղ և շարունակեցին քայլել այդպես գրկախառնված: Նրանք ցանկանում էին, որ անսահման լայնանար վաղուց արդեն ետ թողած այդ առվակը, և իրենք անցնեին անվերջ: Բայց միաժամանակ նրանք շտապում էին դուրս ելնել ափ:

6

Փոքրիկ այգին, ուր մտան նրանք, հագեցած էր հասուն մրգերի արբեցնող բույրով: Թվում էր, թե ամբողջ այգեստանը ծայրեծայր, բույրի վերածված, եկել լճացել էր այդ այգու վրա: Բոլոր կողմերից լսվում էր մոտ ու հեռու ծառերի սոսափը՝ իբրև սիրահարների բերկրության հառաչանք, իբրև խռովահույզ կիսաշշուկ, իբրև անզոր դիմադրության և հաշտ մեղկացումի անկապ մրմունջ: Բոլոր կողմերից, մոտ ու հեռու, արխերի կարկաչը կարծես պատրաստվում իր մեջ խլացնել սիրո առաջին ճիչը: Երեկոն՝ արդեն վրա հասած, իր մուգ թևերն էր տարածել այգու վրա:

Ցոլակը և Անահիտը լուռ կանգնել էին կողք կողքի՝ թմբերից մեկի մոտ: Նրանց տագնապել էր իրենց առաջին մենակությունը:

Ցոլակն առաջինը խզեց լռությունը՝ որևէ բան ասած լինելու համար.

— Խաղող ուզո՞ւմ ես, Անահիտ: Ոչինչ, որ մութն է, ես ճանաչում եմ բոլոր թմբերը, ես իսկույն կբերեմ քեզ համար…

Նա սկսեց թվարկել խաղողի տեսակները, ապա ընդհատեց և լռեց: Անահիտը նույնիսկ չլսեց նրա ընդհատելը: Ոչ մեկը, ոչ մյուսը, խաղողի մասին չէին էլ մտածում, ոչնչի մասին չէին մտածում:

Վայրկյան առ վայրկյան մութն ավելի էր թանձրանում: Շուրջն ամեն ինչ լուծվում էր մթության զանգվածի մեջ: Միայն Անահիտն էր կանգնած պայծառ և որոշակի՝ մերկ մարմնի վրա հագած իր սպիտակ զգեստով:

— Նստենք, Անահիտ,— առաջարկեց Ցոլակը:

— Սպասիր,— ասաց աղջիկը՝ առանց նրան նայելու: Աչքերը դեպի տարածությունը հառած, դեպի այն կողմը, որտեղ գյուղը պետք է լիներ, նա կարծես ինչ-որ բան էր կարդում մթության մեջ:

Անսովոր հուզմունքից Ցոլակը դողում էր ողջ մարմնով: Նրա առնական կուրծքը խռովահույզ վեր ու վար էր անում, նրա ուռած ռունգներն աղմուկով շնչում էին աղջկա բույրը:

— Նստենք, Անահիտ,— կրկնեց նա՝ բռնելով աղջկա դաստակը և սեղմելով շատ ամուր: Սակայն աղջիկը ոչինչ չզգաց: Ամբողջովին ուշադրություն դարձած, նա շարունակում էր նայել:

— Սպասիր,— ասաց նա նորից:

Քիչ հետո նա դարձավ դեպի երիտասարդը և հարցրեց.

— Իսկ որտե՞ղ էր այս երեկո Արարատը… Ես նրան չտեսա…

— Արարատը դեռ կեսօրին գնաց կառուցվող էլեկտրակայանը՝ Արծաթաղբյուր: Իսկ ինչո՞ւ ես հարցնում…

— Արծաթաղբյո՞ւր,— շշնջաց Անահիտը շնչասպառ:

— Աշխատողներին ետ բերելու,— բացատրեց Ցոլակը:— Կիսատ, թե ավարտած, նրանք պետք է թողնեն գործը և վերադառնան գյուղ: Մրգահավաքը չի սպասում, խաղողը հասել է...

Վերջին խոսքերը նրան նորից վերադարձրին դեպի այն, ինչի համար նրանք եկել էին այդտեղ: Նա նայեց աղջկան: Աղջիկը նույնպես երիտասարդին էր նայում: Մթության մեջ Ցոլակին թվաց, թե նա շիկնել է: Եվ այլևս իրեն կորցրած, նա թափով գրկեց աղջկան, ուժեղ սեղմեց իր կրծքին: Ապա ձեռքը տարավ դեպի նրա մեջքը, գրկեց, նայեց աչքերին:

Աղջկա փոքրիկ քիթը շնչում էր խռովահույզ: Նրա արնակարմիր, խոնավ շրթունքները կարծես աղերսում էին և՛ բարեգթություն, և՛ համբույր միաժամանակ:

Դանդաղ և կամացուկ, ըմբոշխնելով անկրկնելի վայրկյանի գերագույն հաճույքը, Ցոլակը մոտեցավ նրա շրթունքներին՝ առաջին համբույրի համար:

Սակայն նույն րոպեին աղջկա կիսափակ աչքերն արագ բացվեցին, և նա ետ հրելով երիտասարդին, բացականչեց.

— Լույսերը:

Հեռվում, որտեղ գյուղն էր, շողշողում էին էլեկտրական լույսերը…

— Լույսերը,— կրկնեց Անահիտը շշուկով՝ աչքերի անթարթ արտահայտությամբ այն կողմ սևեռված: Նրա բիբերի մեջ անդրադարձել էր էլեկտրական հեռու լույսերի ցոլքը: Նա ձեռքերը տարավ դեպի քունքերը, շփեց, ետ տվեց մազերը՝ կարծես արթնանալու համար: Բայց մի անգամ արդեն վառված լույսերը շարունակում էին շողալ իբրև հաստատ իրականություն:

Ցոլակը կանգնել էր աղջկա մոտ և նույնպես նայում էր: Մութ երկինքը գյուղի վերևում կարծես հագեցած լիներ ոսկու փոշով:

— Լույսերը,— կրկնեց Անահիտը մի անգամ ևս՝ հիպնոսված, ապա տեղից արագ պոկվելով, նետվեց առաջ:

— Անահիտ,— փորձեց ետ պահել նրան Ցոլակը:

Բայց արդեն ուշ էր: Էլեկտրական լույսերը վառվում էին պայծառ հաղթությամբ:

7

Գլխավոր փողոցը շողում էր լույսերի մեջ: Գյուղի ամբողջ բնակչությունը՝ մեծից փոքր, գտնվում էր այնտեղ: Անցնելու տեղ չկար: Ռոպեն մի անգամ, անընդհատ շչակելով ժողովրդի միջով ճանապարհ բաց անելով, անցնում էին երկու մարդատար ավտոներ: Այնտեղ նստածներն ահա քանիերորդ անգամն էր, որ անցուդարձելով Ոսկե Հնձանի և Արծաթաղբյուրի միջև, ստուգում էին հաղորդալարերը, լուսավորությունը:

Հեռագրասյուների վրայից, որտեղից առատ լույսն էր հորդում փողոցի վրա, ռադիոբարձրախոսները պատմում էին աշխարհի մասին: Զգացվում էր մայրաքաղաքի ներկայությունը: Թվում էր, թե դա քաղաքի մի փողոցն էր՝ գյուղական շրջապատի մեջ հանկարծակի հայտնված:

Բոլոր դեմքերը փայլում էին լույսից և ուրախությունից: Յուրաքանչյուր սյան շուրջը հավաքված, մարդիկ նայում էին լամպերին, կարծես դեռ չհավատալով, որ դրանք վառվում են: Իսկ ուրիշները շրջում էին փողոցով՝ ծայրեծայր, և զարմացած դիտում էին յուրաքանչյուր հարյուրամյա պատ, որն առաջին անգամ իր գոյության սկզբից ի վեր լուսավորվել էր արհեստական լույսով: Այդ լույսի տակ գյուղն անճանաչելի էր: Մարդիկ նայում էին և տարակուսում:

Տոնական աղմուկը զվարթ քուլաներով կանգնած էր օդի մեջ: Վերևում պայծառ լուսավորվել էին ծառերի անհաշիվ տերևները և փայլում էին ոսկիների պես: Դրանց մոտով, տեղ-տեղ աներևույթ և տեղ-տեղ նկատելի, անցնում էին այն բարակ, աննշան լարերը, որոնք պատճառ էին դարձել այդ մեծ խնդության: Իսկ ներքևում, գլխավոր փողոցի յուրաքանչյուր անկյունում, մթության հոսանքներով անցնում էին խաչաձևող փողոցները, որտեղ դեռ լույս չէին անցկացրել: Նայելով դեպի դրանց արագորեն մթագնող խորքը՝ մարդիկ շտապում էին հեռանալ և ամեն կողմից շրջապատված լինել լույսով:

Եվ հանկարծ լույսը հանգավ: Լսվեց բազմության միահամուռ բացականչությունը: Յուրաքանչյուրին թվաց, թե այդ ինքն էր, որ կուրացավ: Եվ իրենք դեռ մինչև երեկ ապրելիս են եղել այդ անթափանց մթության մեջ… Այժմ դա թվում էր անհավատալի:

Լույսը վառվեց նորից՝ առաջացնելով բացականչությունների մի նոր որոտ: Ավտոներն իրենց գործն ավարտած, գոհ հեռացան: Նրանց լաքած կողերի վրա փայլում էր էլեկտրական ցրված լույսը, ինչպես այնտեղ՝ մայրաքաղաքում: Կարծես ճանաչելով իրար, ավտոները և լույսերը փոխանակում էին ողջույններ:

Դպրոցի մոտ, բացի հեռագրասյուներից, լամպեր ամրացված էին նաև շենքի պատի վրա: Փոքրիկ հրապարակը հորդ ողողված էր լույսով: Բազմաթիվ մարդիկ լուռ կանգնել էին այնտեղ: Նրանք ունկնդրում էին լույսին: Լուսեղ այդ երեկոն նրանց հիշեցնում էր մի այլ երեկո, երբ խավարի մեջ կանգնած, նրանք նայում էին դեպի Նահապետի աներևույթ աշտարակի կողմը: Եվ նորից, անզգայաբար, նրանց բոլորի հայացքը շուռ եկավ այն կողմ:

Առաջվա նման աշտարակը մութն էր և չէր երևում: Ի՞նչ էր անում Նահապետն այնտեղ՝ դժվար էր ասել: Գուցե նայում էր ներքև՝ լույսին և ժողովրդին:

Նույն պահին հանկարծ, աշտարակի վերին հարկը լուսավորվեց առաստաղից կախված մի ուժեղ լամպով: Հարկը նման էր վերևի մթության մեջ անպատվանդան կախված բնակարանի՝ ճաղերով, անկողնի ծալքով, գինու և ծխախոտի պարագաներով: Նահապետը, նվագարանը ձեռքին, կանգնել էր սյուներից մեկի մոտ: Նրա արծաթե մազերի վրա հորդել էր ոսկե լույսը:

Բարձրախոսները միանգամից լռեցին: Ինչ-որ տեղից լսելի դարձավ նվագախմբի ձայն: Քիչ հետո այն ևս ընդհատվեց:

Ժողովուրդը, տեսնելով Նահապետի աշտարակը, շտապեց հավաքվել հրապարակում: Կանգնեց խիտ, ծեփ: Բոլորը գլուխները վեր բարձրացրած նայում էին սպասողական:

Նահապետն սկսեց նվագել:

Հոգնած, ուժասպառ, փողոցի ծայրում երևաց Արարատը: Նրա աչքերն ավելի էին փոս ընկել, դեմքն ավելի էր գունատվել, քիթը սրվել էր հիվանդությունից նոր ելածի քթի պես: Նա հոգնած նայեց դեպի բոլորովին անմարդ փողոցը և ուժ չգտավ նույնիսկ զարմանալու: Նահապետի հեռու նվագը նրան դեռ լսելի չէր: Նա նայեց վերև՝ լամպերի երկար շարքին, թույլ ժպտաց և շարունակեց քայլել: Աշխատանքի և սպասումի օրերին տենդորեն լարված նրա մարմինն այժմ թուլացել էր, և նա հազիվ էր թրևում: Ուրախանալ անգամ նա անկարող էր: Մի բոպե նա մեղադրեց իրեն՝ այդպես անխնա չարչարվելու համար, բայց հետո նորից նայեց լույսերին: Դրանք արդարացնում էին ամեն ինչ: Դրանց վառվելն արժեր իր կյանքի այրվելուն: Բոլորովին չզղջալով՝ ինքն իրեն անգթաբար սպառելու համար, նա, ընդհակառակը, սկսեց մտածել, թե էլ ինչ էր հարկավոր անել այժմ: Հանդիպելով խաչաձևող առաջին մութ փողոցին, նա հիշեց՝ հարկավոր է սյուներ կանգնեցնել այդտեղ, լուսավորել նաև այդ փողոցները: Եվ, իհարկե, ըստ հնարավորին շուտ...

Խավար փողոցի խորքում լսվեցին արագ ոտնաձայներ: Արարատը կանգ առավ: Տեսնելով մոտեցող Անահիտին և Ցոլակին, նա շանթահարի պես օրորվեց և ձեռքը հենեց հեռագրասյանը:

— Արարատ,— բացականչեց աղջիկը՝ նետվելով դեպի երիտասարդը:

Եվ հուզված, շփոթված, ուրախացած, միաժամանակ՝ արտասվելու պատրաստ, նա բռնեց երիտասարդի ձեռքերը և ամուր, ամուր, որքան որ կարող էր իր աղջկային ուժով, սեղմեց: Ապա երիտասարդի հոգնած գլուխն իր փոքրիկ ափերի մեջ վերցնելով, սիրով և հիացած նայեց նրա աչքերին.

— Շնորհակալություն, Արարատ,— շշնջաց աղջիկը նրա շրթունքներն ի վեր:— Ներիր ինձ իմ կասկածների, իմ թերահավատության համար…

Լռելով՝ նա շարունակեց նայել երիտասարդի աչքերին, իր նուրբ շնչառությամբ շնչել նրա երեսն ի վեր՝ ոգևորված, սքանչացած, գեղեցիկ: Արարատի աչքերը, ուժասպառ և դատարկ, հանկարծ լցվեցին լրիվ երջանկության փայլով: Թվաց, թե աղջիկն իր կենսալիությունը ներարկեց նրան: Աչքի առաջ Արարատն արագ փոխվում էր, կարծես վերածնվում: Երբ վերջապես նա մեղմությամբ գլուխն ազատեց աղջկա փոքրիկ, տաք ափերից, նա նորից լի էր կյանքով և միանգամայն պատրաստ՝ նորից սպառելու այն...

— Շնորհակալություն, Անահիտ,— ասաց նա:— Դու ինքդ ինձ դրդեցիր լավ աշխատելու…

Եվ գոհ ու խաղաղ նա փակեց աչքերը:

— Ոչ, Արարատ,— ասաց աղջիկը բաղձանքով,— դու իրավունք չունես այդպես ասելու: Դու ուժեղ ես: Ես հիանում եմ քեզնով, Արարատ…

— Անահիտ,— բացականչեց Արարատը՝ երջանկությունից շնչասպառ, և բռնելով նրա ձեռքերը, ձգեց նրան դեպի իրեն: Անահիտը հպվեց երիտասարդին: Բայց նույն բոպեին նրանց հայացքն ընկավ Ցոլակի վրա և նրանք շտապ հեռու քաշվեցին միմյանցից:

Ցոլակը կանգնել էր անասելի գունատված, իր մեծ վշտի մեջ ավելի գեղեցիկ: Նրա գանգուրներն անհույս խոնարհվել էին ճակատի վրա, գլուխն անհույս խոնարհվել էր կրծքին:

— Ցոլակ, սիրելի՛ս,— շշնջաց աղջիկը՝ մոտենալով նրան:

Բայց նույն պահին, արագ դառնալով դեպի Արարատը, կրկնեց.

— Արարատ, սիրելի՛ս…

Եվ սարսափելով իր ձայնից, չհասկանալով ինքն իրեն, անկարող՝ մտածել, անկարող՝ վճռել, նա սկսեց տագնապահար նայել մերթ մեկին, մերթ մյուսին: Ապա խոնարհեց գլուխը, արնակարմիր և խոնավ շրթունքն առավ ատամի տակ և համարյա արտասվելով, շտապ հեռացավ:

Ընկերները նայեցին իրար: Ո՞րն արեց առաջին քայլը՝ նրանք չզգացին, բայց մոտենալով իրար, նրանք իրենց սովորության պես քայլեցին կողք կողքի, բայց լուռ: Քիչ հետո, սակայն, Ցոլակը կանգ առավ և ասաց.

— Խաղողահավաքից հետո, Արարատ, գնանք նրա մոտ և հարցնենք: Թող նա ինքն ընտրի…

Գլուխ չորրորդ

1

Այգեստանը հասավ լիապես: Այն լցվեց կանաչի այնպիսի խիտ և միաձույլ զանգվածով, որ ամեն ինչ կորավ նրա մեջ: Որտե՞ղ էին գյուղերը և ճանապարհները, որտե՞ղ էին պարիսպները և առվակները՝ անհնար էր որոշել: Հարկավոր էր մտնել այգեստան որևէ կողմից,— միևնույնն էր, թե որ կողմից,— և գնալ որևէ կողմ,— միևնույնն էր, թե որ կողմ,— և ահա, կանաչ քառսի միջից կսկսեր նկատվել որևէ մեկն այն առարկաներից, որոնք խորասուզված էին այնտեղ: Հաճախ անհրաժեշտ կլիներ ձեռքերով աջ և ձախ հեռացնել սաղարթների խիտ ալիքները, որպեսզի հայտնաբերվեր դրանց ետևում թաքնված մի ամբողջ գյուղ՝ արևի տակ փռված:

Սակայն այգեստանը դարձել էր զարմանալի թափանցիկ՝ ձայների համար: Որտեղ էլ դա լիներ, որ խուլ թվացող անկյունում, շուրջը կզգացվեր ամբողջ այգեստանը՝ համատարած, անափ… Աջից, բավական մոտիկ, լսվում էին ինչ-որ գյուղի բոլոր ձայները: Այնքան սպառիչ կերպով արտահայտիչ էին դրանք, որ լսողությունը կարծես վերածվում էր տեսողության և գյուղն աչքի առջև կանգնում էր շոշափելի, նյութացած: Ձախից, զգալի հեռավորությունից, գալիս էր ինչ-որ գոհ, ուրախ երգի եղանակ, որը լսվում էր ժամերով և կարծես վերջ չպիտի ունենար: Ո՞վ էր երգում այնտեղ՝ անընդհատ և միակերպ: Վերջապես ձայնն այնքան էր մերվում շրջապատի ամեն ինչին, որ սկսում էր թվալ ծառերի սոսափ, հովի սույլ, առվակի կարկաչ…

Մոտ և հեռու, մերթ այս կողմից, մերթ այն, մերթ սակավ, մերթ հաճախակի, լսվում էին սլացող ավտոների հռնդյունն ու շչակների ձայները, զգույշ և դանդաղ ընթացող սայլերի ճռինչը, լսվում էին քայլող մարդկանց խոսակցություններն անտեսանելի ճանապարհներով, որոնք ընկած էին անորոշ ուղղություններով: Հետո հանկարծ, անչափ մոտիկ, համարյա ոտքի տակ, լսվում էր հանգստանալու պառկած աշխատավորի հանդարտ մշշոցը կամ ընդոստ ծիծաղը՝ քնի մեջ:

Ինչ-որ գյուղից, երևի գյուղի ակումբից, հեռու, շատ հեռու, լսվում էր փողային նվագարանի ձայն: Երևի ինչ-որ մեկը վարժություն էր կատարում: Ձայնը լսվում էր կարծես երազի միջից, կարծես հավիտենության և անսահմանության միջից: Ոչ եղանակն էր որոշվում, ոչ նվագարանի ինչ լինելը: Զգացվում էր միայն նվագի հաճելիությունը, և այն, թե ինչպես նա տանում էր մարդու, սուզում խոհերի աշխարհը՝ առանց սակայն հնարավորություն տալու մտածել որևէ բանի մասին: Այնպես որ, երբ մարդն սթափվում էր և շուրջը նայում, դուրս էր գալիս, որ նա ոչնչի մասին չէր մտածել, և նրա մեջ մնացել էր միայն մի լավ զգացում և, չգիտես ինչու, ունկնդրման այդ պահն այնքան ազնվացրել էր նրա հոգին:

Իսկ մինչ այդ, նվագի երազանքից սթափված մարդու լսողությանն էին հասնում ուրիշ հնչյուններ՝ զգաստ, հստակ, իրական: Խոխոջում էին արխերի ջրերն այգիներում, դա Արծաթաղբյուրից բերած նոր առվի ջուրն էր հոսում ամեն տեղ: Լսվում էին ինչ-որ հարվածի ձայներ, բայց բերկրալի էր՝ գիտակցել, որ հարվածողը, ինչ էլ որ նա անելիս լիներ, ոչինչ չէր ավերում, այլ այգեստանի խորը ծոցում կորած, կառուցում էր մի նոր բան:

Եվ նորից՝ ձայներ, ձայներ, ձայներ… Անցնում էին ավտոները սրընթաց հռնդոցով՝ մոտ և հեռու, մենակ և շատ: Եվ հանկարծ, այդ բոլոր ձայների վրա տարածվում էր շոգեմեքենայի ձայնը կայարանից՝ հեռավորությամբ մեղմացած, բայց հզորի իր ողջ գրավչությունը պահպանած: Ապա, իսկույն, ավելի հեռվից, զգացվում էր մայրաքաղաքը: Թվում էր, թե լսվում է տրամվայի անիվների քերոցը փողոցի շրջադարձում կամ ավտոների ռետինե անիվների խշշոցը շքեղ փողոցի ասֆալտի վրա: Հետո այդ խշշոցը նորից վերածվում էր առվակի խշշոցին, և մարդն իրեն տեսնում էր կանգնած՝ այգեստանի որևէ խուլ անկյունում, որը խուլ անվանել այլևս չէր կարելի…

Գյուղերում, յուրաքանչյուր տան մեջ, գնում էր տենդային աշխատանք: Բնակարաններում հնձանները տրաքվում էին խաղողից, որն այնտեղ վերածվում էր գինու: Հնձանի մի անկյունում, որը քառակուսի գուռի ձևով, մինչև մարդու գոտկատեղը հասնող ողորկ պատերով, անջատված էր սենյակից, մանկամարդ աղջիկները խաղող էին ճմլում: Թեթև շրջազգեստները վեր քաշած, սպիտակ սրունքները բաց, նրանք բոբիկ ոտքերով տրորում էին ողկույզները: Խաղողահյութը ցայտում էր դուրս, լճանում, թրջում նրանց անմեղ մորթի սպիտակությունը: Գանգրահեր երիտասարդները բերում էին խաղողով լի նորանոր քթոցներ և դատարկում աղջիկների ոտների տակ: Թվում էր, թե նրանք պատրաստ էին ողջ այգեստանը մատուցել նրանց սադափե եղունգներով վարդագույն ոտներին, նրանց մարմարային ողորկ ծնկներին, նրանց գիրգ ազդրերին: Եվ կիսամերկ այդ աղջիկները տիրաբար ընդունում էին շողշողուն բերքը, տրորում: Քառակուսի գուռի մեջ բարձրանում էր խաղողահյութը, հասնում էր աղջիկների ծնկածալերին, գրկում էր նրանց ազդրերը: Աղջիկները բաց էին անում գուռի փոքրիկ անցքը: Խաղողահյութը, քաղցրացած՝ հողից և ջրից, քաղցրացած՝ արևից, քաղցրացած՝ Ոսկե Հնձանի աղջիկների մարմիններից, հատակի փողրանքով հոսում էր դեպի հնձանի կենտրոնում գտնվող հորը:

Գուռի մոտ կանգ առնելով, երիտասարդները հրացայտ աչքերով նայում էին աղջիկներին, իսկ աղջիկներն ամաչում էին, որ իջնող խաղողահյութը հետզհետե բաց էր անում նրանց մարմինների մերկությունը:

Պատրաստվում էր գինին, որ շուտով խմվելու էր նույն այդ երիտասարդների և աղջիկների ամուսնական խնջույքներում:

Գուռի անցքը փակելուց հետո աղջիկները վերսկսում էին իրենց աշխատանքը, իսկ հոսած խաղողահյութը հորի մեջ զտվում էր իր պղտորությունից: Վերցնում էին երիտասարդներն այդ խաղողահյութը երկարակոթ շերեփներով և լցնում պատի տակ կողք կողքի թաղված կարասների մեջ: Վիթխարի կարասներից յուրաքանչյուրը լցվում էր երկար բոպեներ՝ կարծես դրանք անտակ լինեին: Բայց վերջապես բոլոր կարասները լցվում էին պռունկեպռունկ: Պղպջում էր խաղողահյութը դրանց մեջ, արձակում այնպիսի շշմեցուցիչ բույր, արբեցնող այնպիսի շունչ, որ մթագնում էին երիտասարդների հրացայտ աչքերը, իսկ աղջիկներն սպիտակ և փոքրիկ ատամներով կծում էին իրենց արնակարմիր, դեռ չհամբուրված շրթունքները:

Փողոցներում, համայնական դարպասների մոտ, որոնց ետևում հասնում էր գյուղի համայնական գինին, կանգնած էին սայլեր՝ դատարկ տակառներով: Սայլերը բարձվում էին պատրաստի գինիով,

և գոմեշները՝ սև, եզները՝ դեղին, գինին տանում էին քաղաքները և երկրի այլ վայրերը՝ տարածելով այգեստանի խնդությունը:

Բոլոր գյուղերի բոլոր փողոցներով, այգեստանի բոլոր ճանապարհներով գնում էր գինին: Ոչ միայն սայլերն ու ավտոները, հետիոտն մարդիկ անգամ, գնում էին գինու տիկը թևի տակ դրած: Այծի այդ մաշկը, որ դեռ մի քանի օր առաջ սմքած և չոր ընկած էր հնձանում, այժմ տրաքվում էր ուռուցիկությունից, քայլելիս հեղուկը խփվում էր դրա մեջ կենդանի մարմնի պես, մաշկը տակետակ ծծված էր գինով:

Ոսկե Հնձանը նույնպես ապրում էր իր լրիվ հասունությունը: Եթե առաջ նա գյուղ էր՝ ծառերով լի, ապա ամառվա այդ պահին այգեստան էր՝ տներով լի: Ջնջվել էր որևէ սահման գյուղի և շրջապատի միջև: Ծառերի սաղարթախիտ շարքերը, գալով այգեստանի զանազան կողմերից, անարգել լցվել էին գյուղ և թափանցուկ դուրս գալով նրա այլ կողմերով, նորից խառնվել էին այգեստանի հետ:

Նահապետի աշտարակի շուրջը ծառերի սաղարթներն աճել էին կատաղի փարթամությամբ: Գետնից մինչև աշտարակի առաջին հարկը՝ ողջ պարտեզը հագեցած էր կանաչով: Կանաչը չորս կողմից խիտ շրջապատել էր աշտարակը, տերևաշատ ճյուղերով գրկել էր դրա սյուները և ծեփ միահյուսվել, ուստի և աշտարակի վեր խոյացած ծայրը չէր երևում ներքևից: Գյուղի բոլոր շենքերը և բոլոր մյուս աշտարակները գտնվում էին ծառերի սաղարթներից ցած, դրանց տակ, և միայն Նահապետի աշտարակն էր ծակել կանաչ առաստաղի խիտ զանգվածը և խոյացել դուրս: Եվ այնտեղ միայն Նահապետի ալեհեր գլուխն էր իշխում սաղարթների վրա: Իր ոտքերի տակ նա չէր տեսնում ոչ գյուղը, ոչ շրջակայքը: Տարածված էր միայն կանաչ օվկիանոսի անսահմանությունն իր ծառագագաթների կոհակներով, և զգացվում էր զովը դրա տակ: Երբ որևէ պատահական քամի իր ճիգը լարելով, հազիվ ծանրորեն շարժում էր այդ կոհակավորումները, թվում էր, թե դա օվկիանոսն էր թեթև ալեկոծվում կամ աշտարակն էր նավում դրա բուսեղեն կանաչ ջրերով:

2

Արևի տակ, գյուղից դեպի Կլոր Այգի էին գնում Արարատն ու Ցոլակը: Նրանք լուռ էին և մտածկոտ: Ճանապարհի վերջում նրանցից մեկին սպասում էր երջանկությունը՝ մյուսին՝ հուսախաբությունը: Ուրիշ լուծում չկար: Եվ գնում էին նրանք՝ իրենցից մեկին սպասող տխրությամբ և իրենցից մյուսին սպասող ուրախությամբ միաժամանակ համակված: Յուրաքանչյուրն ուզում էր, որ Անահիտն իրենը լիներ, բայց յուրաքանչյուրն ուզում էր, որ ընկերը չդժբախտանար: Իսկ դա անհնար էր: Նրանք անելք տատանվում էին սիրո և ընկերասիրության միջև, նրանք անկարող էին տալ որևէ լուծում, որը, միևնույնն է, սպասում էր նրանց՝ ճանապարհի վերջում:

Երկնքի կապույտ անսահմանության վրա, երիտասարդների ետևում, երևաց մի փոքրիկ, սպիտակավուն ամպ, որն առաջանում էր դեպի արևը: Այգիների վրայով արագ մոտենում էր մուգ ստվերը: Շուտով նա ծածկեց երիտասարդներին: Միանգամից դարձավ հով: Իսկ դիմացի տարածությունը դեռ փռված էր ոսկեղեն շոգ փայլով: Ստվերն անցավ երիտասարդների վրայով ավելի առաջ, և նրանք նորից հայտնվեցին լուսեղ շոգի մեջ: Ամպը՝ երկնքում և ստվերը՝ այգիների վրա, սահեցին հեռու և հալվեցին:

Արարատը մտածում էր: Աղջիկը ոչ մի հիմք չուներ նրան ընտրելու: Նա փոքրամարմին էր և Ցոլակի համեմատությամբ ավելի փոքրամարմին էր երևում: Նա գունատ էր և Ոսկե Հնձանի գունագեղության մեջ ավելի գունատ էր երևում: Նրա աչքերը թախծոտ էին և չէին

համապատասխանում շրջապատի զվարթությանը: Իսկ Ցոլակը հաղթանդամ էր և վայելչակազմ, առնական էր և գեղեցիկ: Նրա աչքերից կարծես ուրախ կրակ էր ցայտում, նրա շրթունքները կարծես ստեղծված էին համբուրելու համար: Եվ ինչպե՞ս գիտեր նա շշնջալ աղջիկների ականջին, գրավել նրանց… Ի՞նչ էր շշնջում Ցոլակը՝ Արարատը չգիտեր և երբեք չէր էլ կարող գիտենալ: Գուցե դրանք նույնիսկ բառեր չէին, այլ Ոսկե Հնձանի արևի շունչն էր՝ նրա բորբոք շնչի հետ ձուլված, կամ գուցե դա այգեստանի մեղմահոս զեփյուռն էր՝ խառնված նրա փաղաքշական վրնջոցի հետ… Իսկ եթե խոսքեր էին դրանք, ապա, ով գիտե, գուցե բոլորովին այլ բանի մասին էին, գուցե Ցոլակը ցույց էր տալիս կատաղի փարթամությամբ աճող այգիները և առնական հպարտությամբ հաղորդում աղջկան, որ ինքն էր այդ ոռոգել… Ոչ, Արարատը երբեք չէր կարողանա տիրապետել նույն արվեստին...

Ցոլակը նույնպես մտածում էր: Աղջիկը ոչ մի հիմք չուներ նրան ընտրելու: Նա սովորական մի մարդ էր և Արարատի համեմատությամբ ավելի սովորական էր երևում: Նա կյանքում կատարում էր այն աշխատանքը, որ կարող էր կատարել սովորական մի մարդ, կամ գուցե մի քիչ ավելի: Նա ուներ մյուս մարդկանց թե արժանիքները, թե թերությունները, և չուներ ոչինչ բացառիկ: Իսկ Արարատն իր փոքր կազմվածքի մեջ խտացրել էր հսկայական համառություն և կամքի ուժ, իր մտածկոտ ճակատի ետևում ուներ ծրագրերի և անելիքների մի ողջ խառնարան, որտեղից մերթ ընդ մերթ դուրս էր հորդում որևէ լավ միտք, դառնում գործ: Բայց Արարատն անցնում էր փողոցով՝ սառը և անտարբեր, կարծես բոլորովին զուրկ երևակայությունից, ոգևորվելու ընդունակությունից: Նա իր կազմվածքով և արտաքինով սկզբում թողնում էր թույլ և անօգնական մարդու տպավորություն, որն այնպես տհաճ է հատկապես կանանց համար և սիրո փոխարեն առաջացնում է լոկ կարեկցություն: Սակայն այդ տպավորությունը շրջվում էր Արարատի օգտին, երբ հետագայում նա որևէ կատարած գործով կանգնում էր այգեստանի բնակիչների առջև: Մեծ մասամբ իր կազմվածքի և արտաքինի թողած անմխիթար տպավորությունն էր պատճառը, որ Արարատի յուրաքանչյուր արարքը փայլում էր իր ամբողջ մեծությամբ և գեղեցկությամբ: Եթե Ցոլակն աներ նույն բանը, դա հավանաբար կընդունվեր որպես բնական և հասկանալի, մանավանդ՝ սովորական: Բայց Արարատն իր ցանկությունից միանգամայն անկախ, հիացմունք էր պատճառում բոլորին: Եվ աղջիկները, որ միշտ նախընտրում են համառ և խոսքի տեր տղամարդկանց, պատրաստ էին լինել Արարատինը: Եվ աղջիկները, որ իրենց հետապնդողներից միշտ նախընտրում են իրենցից խուսափողներին, պատրաստ էին լինել Արարատինը: Սակայն Արարատը երբեք մտերիմ չէր եղել աղջիկների հետ: Նրա միակ սերն Անահիտն էր:

3

Երկնքի վրա, անհայտ է, թե որտեղից, նորից հայտնվեց մի մեծ, սև ամպի կտոր, որն արագ խտացավ և առաջանալով ծածկեց արևը: Ներքևում գետինը մթնեց: Սակայն ետևում ամենուրեք այդ մթությունն օղակած, շարունակում էր շողալ տարածությունը: Եվ հանկարծ, կատակի նման, շրմփաց անձրևը խոշոր կաթիլներով:

Այգիներում, որտեղ մինչև այդ չէր երևում ոչ մի աշխատող, լսվեցին վազող կանանց ծիծաղի ձայներ: Անձրևը գալիս էր աղմուկով, լսվում էր դրա կաթիլների համատարած թրխկոցը գետնի վրա: Օդն անմիջապես լցվեց անձրևից թակվող հողի հոտով:

Արարատը և Ցոլակը ցատկեցին հանդիպակաց այգու պատով և շտապեցին դեպի տնակը: Մտնելով ներս, նրանք կանգ առան շեմքի վրա և սկսեցին նայել անձրևին՝ սպասելով դրա վերջանալուն: Իսկ անձրևը գալիս էր հաստ շիթերով: Լսվում էր դրա դղրդոցը գլխավերևում՝ հողե կտուրի վրա:

Հորդառատ անձրևն արագ սպառում էր ամպերը: Քիչ հետո այն սկսեց թափվել համարյա անամպ երկնքից: Դրա շիթերը շողշողում էին արևի տակ՝ թելաշար կախված ապակյա ուլունքների պես:

Գետնի վրա գոյացել էին պղտոր առվակներ, որոնք խշշալով վազում էին այս և այն կողմում: Խոտերը և խաղողի ամենաստորին տերևները ցեխոտվում էին ջրի մեջ ցայտող շիթերից, իսկ բարձր տերևները և ծառերի սաղարթները, մաքրվելով փոշուց, ստացել էին մուգ և թարմ գույն: Ամբողջովին ջուր կտրված, դրանք փայլուն էին՝ ծիծաղից արցունքոտված աչքերի պես:

Հանկարծ երիտասարդները, որ դեռ կանգնել էին մտածկոտ, սթափվեցին: Անձրևը կտրվել էր: Անձրևաջրի առվակներն ընդհատվել էին: Տերևների սուր ծայրերից ընկնում էին վերջին կաթիլները: Երկինքը քիչ առաջվա գունաթափի փոխարեն այժմ ավելի կապույտ և ջինջ, նորից համատարած էր և անպարփակ, և այնտեղ փայլում էր արևը: Գետինն արդեն ծծել էր ջուրը և համարյա չոր էր: Մաքրված և հստակ օդն իր միջով թողնում էր այգեստանի բույրը:

Ցոլակը և Արարատը նայեցին իրար: Այլևս հիմք չկար սպասելու, հապաղելն ավելորդ էր: Ինչ որ լինելու էր՝ պիտի լիներ:

— Գնանք,— ասացին նրանք միանգամից:

4

Կլոր Այգում համարյա բոլոր տղամարդիկ և կանայք թրջվել էին անձրևից և այժմ ծիծաղելով պատմում էին իրար, թե ով որտեղ էր թաքնվել: Տնակը փոքր էր, այնտեղ տեղավորվել էին շատ քչերը: Մյուսները կանգնել էին սաղարթախիտ ծառերի տակ: Իսկ երբ անձրևը թափանցել էր նաև սաղարթներից, նրանք շաղ էին եկել այգով մեկ՝ ապաստան փնտրելու:

Իսկ այժմ, երբ անձրևը կտրվել էր, բոլորը նորից անցել էին աշխատանքի: Յուրաքանչյուր թմբի մոտ, մկրատը ձեռքին, մարդիկ քաղում էին խաղողը և դնում քթոցների մեջ: Ամեն րոպե թվում էր, թե նրանք ահա վերջացրին իրենց գործն այդ թփի հետ և անցնելու են հաջորդին: Սակայն քթոցը լցվում էր և լցվում, իսկ թուփը դեռ ավարտված չէր:

Անահիտը մի թմբի մոտ խաղող էր քաղում: Ինչպես էր աշխատում նա՝ հնարավոր չէր ասել: Նրա դեմքը լուրջ էր և կենտրոնացած, նրա շարժումները կարծես անշտապ էին և մտածկոտ: Սակայն նրա լիքը քթոցը տարած երիտասարդը վերադառնալով՝ տեսնում էր հետևյալ քթոցն արդեն լցված: Երիտասարդը նայում էր զարմանքով, մի պահ ժպտում, բայց Անահիտը չէր էլ նկատում նրան: Մտասույզ, թվում էր, թե նա լսում է դեպի այգին եկող Ցոլակի և Արարատի ոտնաձայնը…

Պատի ետևում հոնդաց գյուղի բեռնատար ավտոն, որ խաղող էր տարել այգեստանի փոքրիկ քաղաքը, և ներս մտավ դարպասով: Մեքենան վարողն իջավ վար և հանցավորի պես հայտնեց իր ուշանալու պատճառը: Պահեստներին մոտենալու հնարավորություն չկա: Ծեփ կանգնել են սայլերը և ավտոները: Արծաթաղբյուրից դեղձ են բերել, Պայծառ Առավոտից՝ խաղող, Զվարթաշենից՝ դեղձ ու խաղող, Այգիների Պալատից՝ սալոր և խաղող, Կանաչ Ուղիից՝ սերկևիլ և խաղող, Կարմիր Ուղիից՝ տանձ, թուզ և խաղող, Անշեջ Օրից՝ խաղող, Առատաբերից՝ խաղող, Արևապատից՝ խաղող… Ի՞նչ է կատարվում պահեստների մոտ… Շտապ կառուցում են ժամանակավոր պահեստավայրեր, միրգն ընդունում են բազմաթիվ տեղերում... Ազատավանից ընկույզ են բերել, Պայքարակերտից՝ խնձոր, Խնդության Պարտեզից՝ ընկույզ և խնձոր, Լուսաբացի Դոնից՝ ձմերուկ և խաղող, Անթառամից՝ սեխ և սալոր, Մեծ Ակունքից՝ տանձ և խաղող, Փոքր

Ակունքից՝ թուզ և սալոր, Հայկական Բերկրալիից՝ սալոր և խաղող, Արարատյան Բերկրալիից՝ սալոր և խաղող, Վերին Գինեշատից՝ խաղող, Ներքին Գինեշատից՝ խաղող… Մի՞թե կարելի է բոլորը հիշել... Այգեստանի բոլոր ճանապարհները բռնված են: Սայլերը խճճվել են իրար: Ավտոները հնարավորություն չունեն սլանալու և գնում են սայլերի հետ: Մի ընդհանուր զանգվածի մեջ են ձուլվել սայլերը և ավտոները, եզները և մարդիկ: Այգեստանի բերքը՝ հակերով, արկղներով, կողովներով, քթոցներով, իբրև ծանր և անկանգ հեղեղ, հոսում է բոլոր ճանապարհներով դեպի այգեստանի քաղաքը: Երկաթգծերը դղրդում են դեպի մայրաքաղաք սլացող բուրումնավետ գնացքների անընդհատ շարքերից…

Ճանապարհի վրա երևացին Ցոլակը և Արարատը: Նրանք տեսան աղջկան և սքանչացած կանգ առան միանգամից: Ապա դանդաղ շարունակեցին քայլերը՝ աչքերը նրա վրա սևեռած:

Հասնելով թմբի վերջին թփերին, Անահիտը բարձրացրեց գլուխը և ժպտաց: Նրա մտածկոտ լրջությունը կարծես մնաց թփի տակ: Նրա աչքերը փայլեցին երիտասարդական բավականությամբ: Նա բարձրացրեց իր փոքրիկ ձեռքերը և երկար մատների ծայրերով հարդարեց մազերը: Ապա վերցնելով մի ողկույզ, սկսեց խաղող ուտել: Նրա մանրիկ ատամներն ախորժակով կիսում էին խաղողահատիկը: Ցոլակին ու Արարատին նա դեռ չէր նկատել: Ամբողջովին ախորժակ դառած, երիտասարդական թարմ և առողջ ախորժակ,— նա զբաղված էր միայն իր ողկույզով: Նա չէր նկատում նաև այն, թե ինչպես իր շուրջն աճում և ուռճանում էր աշխատանքն արդեն ավարտած բոլոր մարդկանց սերն ու հիացմունքն իր հանդեպ: Բոլորը նրան էին նայում, բոլորը դեպի նա էին քայլում, կարծես նա լիներ այգեստանի խորհրդանիշը:

Հին սովորություն էր դա Այգեստանում՝ մեծարել խաղողահավաքի առաջին օրվա ամենալավ աշխատողին: Իսկ Անահիտը, Նահապետի թոռը, ծնողներից վաղուց զրկված, բայց ամբողջ Ոսկե Հնձանի դուստր Անահիտը, տարել էր այդ օրվա հաղթանակը: Բոլորը տեսնում էին այդ, գիտեին, բացի նրանից: Երբ վերջապես նա զգաց իր շուրջը տիրող հուզումը և բարձրացրեց աչքերը, այգեստանցիներն ամեն կողմից արդեն շրջապատել էին նրան: Աղջիկը ժպտաց, շփոթվեց և խոնարհեց գլուխը: Թաքցնելու համար իր շփոթությունը, նա նորից զբաղվեց իր ողկույզով: Բայց նա կարծես չէր ուտում, այլ համբուրում էր խաղողահատիկները, որոնք իրենք էին երջանկությունից հալչում նրա շրթունքների միջև:

Մարդկային բազմությունը, բոլոր կողմերից նրա շուրջը հավաքված, պոկ եկավ տեղից և ուրախության բացականչություններով նետվեց դեպի նա: Մոտ վազեցին երիտասարդները, գրկեցին աղջկան, բարձրացրին իրենց ուսերի վրա:

Միահամուռ հեղեղը շարժվեց առաջ:

Այգիները դղրդում էին ուրախության որոտից: Գնում էր Անահիտը՝ ձեռքերի, ուսերի, գլուխների վրա, ժպտերես, խաղողը ճաշակելով, աննման, անկրկնելի: Շարունակ ալեկոծվում էին մարդկանց հորձանքները, ետիններն անցնում էին առաջ՝ իրենք ևս բարձրացնելու աղջկան, պահելու իրենցից բարձր, տանելու իրենց ձեռքերի վրա:

Երբ մարդկային բազմությունը հասավ Կլոր Այգու պարսպին, պարսպի ետևից, հարևան այգուց, վեր աճեց ձեռքերի մի նոր անտառ: Եվ պարսպի վրայով ձեռքերն աղջկան հանձնեցին ձեռքերին, որոնք շարունակեցին ընթանալ առաջ: Պարիսպը կարծես գոյություն չուներ, պարիսպը, անիմաստաբար դեռ կանգնած, կարծես արդեն ջնջվել էր և սրբվել:

Եվ այդ կերպ, յուրաքանչյուր այգու սահմանում, պարսպի ետևից մեկնվում էին նորանոր ձեռքեր, և աղջիկը, ողկույզը բռնած, սքանչելի մտերիմ ժպիտով և արժանավորի անհոգությամբ, շարունակում էր շարժվել՝ առանց ընդհատման, և դժվար էր որոշել՝ որտե՞ղ էր պարիսպը և ե՞րբ անցկացրին աղջկան պարսպի վրայով: Մարդկային հոսանքը լեռնացած հեղեղի պոռթկումի պես շուռ գալով պարսպի պռունկից, թափվում էր հաջորդ այգին և շարունակում էր հետևել թափորին: Հետո վերջացան բոլոր պարիսպները, և ահա, երբ առջևից գնացող Ցոլակն աջ ու ձախ տարավ հեռանկարը փակող թփերի և սաղարթների ծանրախիտ քուլաները՝ դիմացը բացվեց Ոսկե Հնձանի գլխավոր փողոցի անկրկնելի տեսարանը…

Անահիտը բացականչեց հիացած: Երթը կանգ առավ մի պահ: Ապա նորից, բազմաձայն և բազմաշարժ, ընթացավ առաջ: Ոսկե Հնձանը, Անահիտին շրջապատած, շարժվեց դեպի Նահապետի բնակարանը: Դեռ հեռվից երևաց, թե ինչպես պապը կրնկի վրա բաց էր արել տան բոլոր դռներն ու լուսամուտները՝ աղջկան դիմավորելու համար, իսկ ինքը կանգնել էր պարտեզի մեջտեղում: Տեսնելով պապին, աղջիկը նետվեց առաջ և գրկախառնվեց նրա հետ: Ապա նայեց իրենց պարտեզին, բնակարանին, նայեց հնձանին, որտեղ դիզված խաղողն իրեն էր սպասում:

Շուրջը խիտ կանգնել էր Ոսկե Հնձանը: Փողոցում մեծ աղմուկ էր: Բոլորն ուզում էին մտնել մարդկանցով արդեն լեփ-լեցուն պարտեզը: Շրջակա փողոցներից գալով, շարունակ ավելի էր սեղմվում ժողովուրդը, Անահիտը ժպտում էր և նայում նրանց բոլորին, որ շրջապատել էին նրան:

Անահիտը մտավ հնձան, կանգ առավ հնձանի կենտրոնում, նայեց շուրջը՝ խաղող ճմլելու գուռին, խաղողահյութի հորին, գինու թաղված կարասներին, խաղողով լի կողովներին, որ նրան էին սպասում, և ժպտաց: Նրա ետևից հնձան էին մտել Նահապետը, Արարատը, Ցոլակը և մի երկու տասնյակ այլ երիտասարդ տղաներ և աղջիկներ: Մյուսները, դրսում մնացած, շրջապատել էին հնձանը՝ այգում, փողոցում, գյուղում, ողջ այգեստանում:

Սլացիկ և նրբիրան, նորահաս աղջկա հպարտորեն սեղմած շրթունքներով և կիսափակ աչքերով, Անահիտը նստեց և հանեց կիսակոշիկները: Ապա ուշադրություն չդարձնելով հավաքվածներին, իրեն համարելով նրանցը, նա ետ տարավ շրջազգեստը և երկու արագ շարժումով, իր սքանչելի, երկար և նուրբ ոտքերի վրայից պոկեց գուլպաները: Ոսկի Հնձանը հիացմունքի հառաչանք արձակեց: Անահիտը, շուշանների պես փոխելով իր սպիտակ ոտքերը, մտավ խաղող ճմլելու գուռը: Արարատը, Ցոլակը և ուրիշ երիտասարդներ իսկույն վերցրին խաղողով լի քթոցները և շուռ տվեցին աղջկա ոտքերի տակ, աղջկա շուրջը: Շրջապատելով գուռը, երիտասարդներն սկսեցին սիրահար աչքերով նայել աղջկան, որը կարծես Ոսկե Հնձանն ինքը լիներ՝ աննման, անկրկնելի…

Անահիտի ոտքերի տակ սկսեց ճմլվել խաղողը: Քաղցր հյութն աստիճանաբար ծածկեց նրա սրունքները, ծնկերը, ազդրերը: Թվաց, թե խաղողահյութն արդեն վերածվեց քառասունամյա գինու, որ աղջկա սպիտակափայլ մորթը լվացած, ընդունակ էր իր մի ումպով գլխապտույտ հարբեցնել երիտասարդներից յուրաքանչյուրին:

Իսկ Անահիտը ճմլում էր և ճմլում խաղողը: Երիտասարդները՝ հմայված, Անահիտը՝ այդ հմայքից հմայված, մոռացել էին բաց անել անցքը՝ դեպի հորը թողնելու համար խաղողահյութը, որը շարունակ բարձրանալով աղջկա ազդրերն ի վեր, կարծես ուզում էր գլխովին լողացնել նրան իր արբեցնող գրկում, իր մեջ ընդունել նրա գեղեցկությունը:

Հանկարծ Անահիտը ժպտաց, ցնցեց գլուխը, այդ ցնցումով ետ տվեց մուգ շագանակագույն մազերն իր երեսից, և նայելով իրեն սիրող երկու երիտասարդներին, ասաց.

— Իմ հարսանիքի գինին է սա: Ես արդեն ընտրել եմ:

Հնձանում հասնում էր գինին:

1936-37.

1946-47.